ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ
ՆՎԻՐՎԱԾ ԿԱՐՈ ՂԱՖԱԴԱՐՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 110-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻՆ

# ԽՈՍՐՈՎ ԿՈՏԱԿԻՉ
## ՄԻՆՉԵՎ
# ԿԱՐՈ ՂԱՖԱԴԱՐՅԱՆ

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ
ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ



# «ԽՈՍՐՈՎ ԿՈՏԱԿԻՑ ՄԻՆՉԵՎ ԿԱՐՈ ՂԱՖԱԴԱՐՅԱՆ»

Հանրապետական գիտական նստաշրջան նվիրված
անվանի հայագետ Կարո Գրիգորի Ղաֆադարյանի ծննդյան 110-ամյա հոբելյանին
Զեկուցումների հիմնադրույթներ
(17 հուլիսի 2017 թ., Երևան)

# «ОТ ХОСРОВА КОТАКА ДО КАРО КАФАДАРЯНА»

Республиканская научная конференция, посвященная 110-и летию со дня рождения
выдающегося арменоведа Каро Григорьевича Кафадаряна
Тезисы докладов
(17 июля 2017, Ереван)

Երևան – 2017

ՀՏԴ 94(479.25):069
ԳՄԴ 63.3(5Հ)+97.1
Խ 776

Տպագրվում է ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի գիտական խորհրդի որոշմամբ

Գլխավոր խմբագիր՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Աշոտ Փիլիպոսյան**

Խմբագիրներ՝ պատմ. գիտ. թեկնածու **Կարեն Փահլևանյան**, պատմ. գիտ. թեկնածու **Կարինե Բազեյան**, **Լիաննա Գևորգյան**, **Մանուշակ Ասլանյան**

## Խոսրով Կոտակից մինչև Կարո Ղաֆադարյան

Խ 776 Հանրապետական գիտաժողով նվիրված մեծանուն հնագետ, վիմագրագետ, պատմաբան, թանգարանագետ Կարո Գրիգորի Ղաֆադարյանի 110-ամյա հոբելյանին (Զեկուցումների հիմնադրույթներ) - «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ, Երևան 2017, 92 էջ:

«Խոսրով Կոտակից մինչև Կարո Ղաֆադարյան» խորագրով հանրապետական գիտական նստաշրջանի հիմնադրույթների ժողովածուն նվիրված է մեծանուն հնագետ, վիմագրագետ, պատմաբան, թանգարանագետ Կարո Ղաֆադարյանի ծննդյան 110-ամյա հոբելյանին և ներկայացնում է հին և միջնադարյան Հայաստանի պատմությանը, արվեստին, մշակութային ժառանգությանը, ինչպես նաև հայ թանգարանագիտությանը վերաբերող գիտական հաղորդումներ, որոնց հիմնախնդիրների ձևավորման, քննարկման, ուսումնասիրման ու մեկնաբանման գործում մեծ դեր է ունեցել անվանի հայագետը: Ժողովածուն նախատեսված է մասնագետների, բուհերի հումանիտար ֆակուլտետների դասախոսների, ուսանողների և հետաքրքրվողների լայն շրջանակի համար:

Հրատարակվում է ՀՀ ԿԳ նախարարության Գիտության պետական կոմիտե կողմից «Գիտական կազմակերպության նպատակային ծրագրի» իրականացման շրջանակներում տրամադրված ֆինանսական միջոցների հաշվին:

ՀՏԴ 94(479.25):069
ԳՄԴ 63.3(5Հ)+97.1

ISBN 978-9939-867-14-4

© «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ - СОДЕРЖАНИЕ


1. **Ա. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ, Կ. ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ, Ա. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ,** Անվանի հայագետը (նախաբանի փոխարեն)
   **А. ТАРВЕРДЯН, К. ПАХЛЕВАНЯН, А. ПИЛИПОСЯН,** Выдающийся арменовед (вместо предисловия) _____ **5**
2. **Մ. ՀԱՍՐԱԹՅԱՆ,** Թորամանյանագիտության «Ղաֆադարյանական դպրոցը»
   **М. АСРАТЯН,** “Кафадаряновская школа” тораманяноведения _____ **9**
3. **L. ABRAHAMIAN,** Temple, Museum and Identity: Commenting K. Kafadaryan’s History of Armenian Museums
   **Л. АБРАМЯН,** Храм, музей и идентичность: комментарии к истории армянских музеев К. Кафадаряна _____ **13**
4. **Ֆ. ԲԱԲԱՅԱՆ,** Միջնադարյան Դվինի մանրակերտ արձանիկները
   **Ф. БАБАЯН,** Миниатюрные фигурки средневекового Двина _____ **17**
5. **Ա. ԺԱՄԿՈՉՅԱՆ,** IX-X դդ. ջնարակած խեցեղենը պատմաաշխարհագրական համատեքստում ուսումնասիրելու փորձ
   **А. ЖАМКОЧЯН,** Опыт исследования глазурованной керамики IX-X веков в историко-географическом контексте _____ **21**
6. **Ն. ՀԱԿՈԲՅԱՆ,** Կարո Ղաֆադարյանը և Դվինի պեղումները
   **Н. АКОПЯН,** Каро Кафадарян и раскопки Двина _____ **24**
7. **Գ, ՔՈՉԱՐՅԱՆ,** Դվին ամրոց-սրբավայրը անտիկ ժամանակաշրջանում
   **Г. КОЧАРЯН,** Крепость – святилище Двин в античную эпоху _____ 28
8. **Ա. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ,** Դվինի ուշբրոնզեդարյան-վաղեկրաթեդարյան բնակավայրի կործանման ժամանակի ու պատճառների մասին
   **А. ПИЛИПОСЯН,** О времени и причинах гибели позднебронзового-раннежелезного поселения Двина _____ **31**
9. **Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Ա. ԳՆՈՒՆԻ, Ա. ԲՈԲՈԽՅԱՆ,** Դվինի երկաթեդարյան մարդակերպ քանդակը
   **А. АВЕТИСЯН, А. ГНУНИ, А. БОБОХЯН**, Антропоморфная скульптура эпохи железа из Двина _____ **35**
10. **Ռ. ՂԱԶԱՐՅԱՆ,** Հայկական լեռնաշխարհի արևմուտքի մի քանի քաղաքների պատմությունն ըստ խեթական աղբյուրների
    **Р. КАЗАРЯН,** История нескольких городов западной части Армянского нагорья по данным хеттских источников _____ **39**
11. **Ա. ԶԱՔՅԱՆ,** Դամբարանային կառույցների վերաօգտագործման խնդիրը Մեծամորում (նախնական դիտարկումներ)
    **А. ЗАКЯН,** Проблема вторичного использования погребальных сооружений в Мецаморе (предворительные наблюдения) _____ **44**
12. **M. BADALYAN,** Karmir Blur: Risks, Challenges and Perspectives
    **Մ. ԲԱԴԱԼՅԱՆ,** Ռիսկեր, մարտահրավերներ և հեռանկարներ _____ **46**
13. **Ե. ԳՐԵԿՅԱՆ,** Քաղաքաշինական միտքը Բիայնիլի-ՈՒրարտուում
    **Е. ГРЕКЯН**, Градостроительная мысль в Биайнили – Урарту _____ **48**

14. Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ. «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի մարդաբանության ֆոնդում պահվող Ներքին Գետաշենի հնամարդաբանական հավաքածուն
Р. МКРТЧЯН, Хранящаяся в фонде антропологии «Службы по охране исторической среды и историко-культурных музеев - заповедников» ГНО палеоантропологическая коллекция из Неркин Геташена ____ 53
15. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ, «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի հնամարդաբանական հավաքածուները
А. СИМОНЯН, Палеоантропологические коллекции «Службы по охране исторической среды и историко-культурных музеев - заповедников» ГНО ____ 55
16. Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ, Էլեկտրոնային փաստագրման մեթոդի կիրառումը Մեծամոր հնավայրի 2014-2016 թթ. պեղումների ընթացքում
М. ГЕВОРКЯН, Использование метода электронной фиксации во время археологических раскопок 2014-2016 гг. памятника Мецамор ____ 58
17. Տ, ԶԱՔՅԱՆ, Հնագիտական խեցեղենի վերականգնման հիմնախնդիրներն ու առանձնահատկությունները
Т. ЗАКЯН, Основные задачи и особенности реставрации археологической керамики ____ 63
18. Լ. ՄԿՐՏՉՅԱՆ, Հին Երևանի աշտարակատիպ կառույցները
Л. МКРТЧЯН, Башневидные постройки старого Еревана ____ 66
19. Կ. ԲԱԶԵՅԱՆ, Կարո Ղաֆադարյանի ազգագրական բնույթի մի հոդվածի շուրջ
К. БАЗЕЯН, Об одной статье этнографического характера Каро Кафадаряна ____ 69
20. Ա. ՂԱԶԱՐՅԱՆ, Ավանի տաճարը և նրա երկլեզու ծածկագիր արձանագրությունը
А. КАЗАРЯН, Аванский храм и его двуязычная криптограмма ____ 72
21. Կ. ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ, Մոռացված ճակատագրեր և հուշարձաններ
К. ПАХЛЕВАНЯН, Забытые судьбы и памятники ____ 76
22. Դ. ՊՈՂՈՍՅԱՆ, Կարո Ղաֆադարյանի թանգարանագրական բնույթի աշխատանքները
Д. ПОГОСЯН, Работы Каро Кафадаряна музеографического характера ____ 79
23. Լ. ГЕВОРГЯН, Становление музея как института социальной памяти
Լ. ԳԵՎՈՐԳՅԱՆ, Թանգարանի որպես սոցիալական հիշողության ինստիտուտի կայացումը ____ 82
24. А. ГРИГОРЯН, Психолого-педагогическая специфика работы с музейной аудиторией
Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Թանգարանային լսարանի հետ աշխատանքի հոգեբանամանկավարժական յուրահատկությունը ____ 86
25. Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Թորամանյանական «վերածնունդ»
Г. ОГАНЕСЯН, Тораманяновское “возрождение” ____ 88
26. ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ – АББРЕВИАТУРА ____ 92

**ԱՐԱ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ**
«Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի տնօրեն, տ.գ.թ.
**ԿԱՐԵՆ ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ**
«Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ, պ.գ.թ.
**ԱՇՈՏ ՓԻԼԻՊՈՍՅԱՆ**
«Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի գիտնական քարտուղար, պ.գ.դ.

# ԱՆՎԱՆԻ ՀԱՅԱԳԵՏԸ

(նախաբանի փոխարեն)

Հայ ժողովրդի դարավոր պատմական անցյալի ու մշակութային ինքնատիպ ժառանգության վերհանման, մեկնաբանման, ուսումնասիրման ու հանրահռչակման գործում իրենց զգալի ավանդն ու ներդրումն են ունեցել մեծանուն հայագետներ՝ Ղևոնդ Ալիշանը, Նիկողայոս Մառը, Թորոս Թորամանյանը, Երվանդ Լալայանը, Նիկողայոս Ադոնցը, Հրաչյա Աճառյանը, Հակոբ Մանանդյանը, Գևորգ Ջահուկյանը, Պաոլո Կունեոն, Ալպագո Նովելոն և այլոք: Անվանի մտավորականների այս շարքում իր արժանի ու հիմնավոր տեղն ունի նաև պատմաբան, հնագետ, վիմագրագետ և թանգարանագետ Կարո Գրիգորի Ղաֆադարյանը: Նվիրյալ, որի գիտական ողջ գործունեությունն անմնացորդ միտված է եղել հայրենի անդաստանի պատմության ու մշակույթի հետազոտմանը:

Ծագումով Էրզրումցի ծնողների զավակ Կ. Ղաֆադարյանը ծնվել է 1907 թ. ապրիլի 20-ին Ախլցխայում: Սկզբնական կրթությունը ստացել է տեղի դպրոցում: 1927 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմագրական ֆակուլտետը: Այնուհետև, տեղափոխվել է այդ համալսարանի հիմքի վրա ստեղծված Մանկավարժական ինստիտուտի պատմատնտեսագիտական ֆակուլտետի պատմության բաժին և 1931 թ. ավարտել այն: 1931-1932 թթ. աշխատել է Էջմիածնի Ձեռագրատանը, ապա որպես գիտաշխատող ընդունվել Կուլտուրայի պատմության ինստիտուտ (հետագայում՝ Գրականության և պատմության ինստիտուտ) և աշխատել մինչև 1940 թ.: Այս ամենին զուգահեռ մասնակցել է նաև Վաղարշապատի (1931 թ.), Կիրովականի (1935 թ.), Ամբերդի (1936 թ.) պեղումներին, հետախուզական աշխատանքներ իրականացրել Կարմիր բլուրում: 1937–1939 թթ. մասնակցել է պրոֆեսոր Սմբատ Տեր-Ավետիսյանի ղեկավարած միջնադարյան

Հայաստանի Դվին մայրաքաղաքի պեղումներին, իսկ 1946 թ. դարձել այդ արշավախմբի անփոփոխ ղեկավարը մինչև մահը՝ 1976 թ.:

Լայն ու բազմաբնույթ էր Կարո Ղաֆադարյան մտավորականի գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ Հայաստանի և հարևան երկրների պատմություն, հնագիտություն, ճարտարապետության պատմություն, թանգարանագիտություն, հնագրություն, վիմագրություն, ազգագրություն և այլն:

1939 թ. լույս է տեսել նրա «Հայկական գրի սկզբնական տեսակները» աշխատանքը: Քննության առնելով հայկական գրի տեսակները հեղինակը եկել է այն եզրահանգման, որ վիմագիր արձանագրությունները, ձեռագիր մատյանները և ավետարանները, վաղ միջնադարից մինչև XIII դ., գրվել են բացառապես երկաթագրով, և որ XIII դ. ձեռագիր գրչության մեջ համատարած է դարձել բոլորագիրը:

1940 թ. հրատարակվել է Կ. Ղաֆադարյանի «Ալքիմիան պատմական Հայաստանում» աշխատանքը: Մանրամասն ուսումնասիրելով Մատենադարանի ալքիմիական բնույթի ձեռագրերը հեղինակն արձանագրել է, որ դրանք միայն կեղծ ոսկի և արծաթ ստանալու գրառումներ չեն: Միջնադարի հայ ալքիմիկոսները նաև լուրջ գիտական փորձեր են կատարել և հեղինակել մի շարք գյուտեր: Աշխատությունը կարևոր է նաև նրանով, որ երկրորդ մասում զետեղված են ալքիմիական սկզբնաղբյուր հայերեն բնագրեր:

1942 և 1948 թթ. Կ. Ղաֆադարյանը մեծ ջանասիրությամբ հավաքել, իմի է բերել, դասավորել, խմբագրել և հրատարակել հայ մեծանուն ճարտարապետ Թորոս Թորամանյանի «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության» երկհատոր աշխատանքը, դրանով իսկ հանրությանը հասանելի դարձնելով վաստակաշատ գիտնականի ճարտարապետական եզակի ժառանգությունը:

Այսուհանդերձ, Կ. Ղաֆադարյանի մենագրությունների գլուխգործոցն են 1952 և 1982 թթ. լույս տեսած «Դվին քաղաքը և նրա պեղումները» խորագրով երկու հատորները՝ որոնցում իմի են բերված, ամփոփված և մեկնաբանված Հայաստանի վաղմիջնադարյան մայրաքաղաքի 1937-1972 թթ. իրականացված հնագիտական հետազոտությունների արդյունքները: Երկհատորյակում մանրամասը քննության են առնված նաև Դվինի հնագույն՝ բրոնզեդարյան - երկաթեդարյան շերտերի (մ.թ.ա. III-I հազ.), միջնադարյան քաղաքի տեղանքի կազմակերպման, ճարտարապետության,

ներքին կյանքի, կենցաղի, մեծ պահանջարկ վայելած արհեստագործական արտադրանքի, արտաքին աշխարհի հետ ունեցած տնտեսամշակութային կապերի, միջազգային տարանցիկ առևտրի վերաբերյալ կոնկրետ տեղեկատվություն պարունակող եզակի նյութական մնացորդները: Հանգամանորեն ներկայացված է նշված ժամանակահատվածում պեղումներով բացված Դվինի Կաթողիկե եկեղեցու, կաթողիկոսական պալատի, միջնաբերդի շինությունների, աշխարհիկ և հոգևոր այլ կառույցների պատմաժամանակագրական զարգացումների և փոխակերպումների համայնապատկերը: Իր տեսակի մեջ այն եզակի և էտալոնային մենագրություն է և այսօր էլ հույժ արդիական է Հայաստանի միջնադարյան պատմության և մշակույթի բազմազան հիմնահարցերի ուսումնասիրության համար:

Իր բազմազբաղ կյանքի ընթացքում Կարո Ղաֆադարյանը հեղինակել է նաև ավելի քան 70 հոդվածներ, որոնցից առանձնանում են «Կարմիր բլուրի նորագյուտ սեպագիր արձանագրությունը» (1937 թ.), «Երևանի Կաթողիկե տաճարի վիմագիր արձանագրությունները» (1938 թ.), «Պատմահնագիտական դիտողություններ Նոր-Բերդի Կյուրիկյան իշխանության մասին» (1940 թ.), «Դամբարանների պեղումներ Կիրովականում» (1941 թ.), «Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը» (1945 թ.), «Զվարթնոց» (դիտողություններ) (1959 թ.), «Տեկորի տաճարի V դարի հայերեն արձանագրությունը և մեսրոպյան այբուբենի առաջին տառաձևերը», «Հայաստանի Պետական պատմական թանգարանը», «Հայաստանի միջնադարյան թանգարանները» (երեքն էլ՝ 1962 թ.), «Հաղբատի ճարտարապետական մի քանի կառուցվածքները» (1963 թ.), «Նյութեր Ախալցխայի հայ համայնքի պատմության վերաբերյալ» (1967 թ.), «Պատմահնագիտական դիտողություններ Ավանի տաճարի վերաբերյալ» (1968 թ.), «Հնագիտական աշխատանքը Հայաստանում սովետական շրջանում» (1970 թ.), «Հայ ճարտարապետության պատմության պարբերացման հարցի շուրջը» (1971 թ.), «Հայաստանի թանգարանների պատմությունից» (1972 թ.) և այլն:

Կարո Ղաֆադարյանի գիտական գործունեության մեջ առանձնակի տեղ ու նշանակություն ունի Դվինի (նաև միջնադարյան Հայաստանի) հնագիտական դպրոցի ստեղծումն ու զարգացումը: Երկրորդ աշխարհամարտի դժնակ տարիներից անմիջապես հետո, 1946 թ., տնտեսական ամենածանր պայմաններում ստանձնելով Դվինի հնագիտական արշավախմբի ղեկավարի բարդ ու պատասխանատու պաշտոնը, նա ամեն ինչ արեց, որ այն համալրվի երիտասարդ, բանիմաց և

հեռանկարային մասնագետներով: Այդ հնագիտական դարբնոցում իրենց առաջին գիտական մկրտությունը ստացան այսօր արդեն ճանաչված գիտնականներ Արամ Քալանթարյանը, Հռիփսիմե Զանփոլադյանը, Իգիթ Ղարիբյանը, Ժենյա Մուշեղյանը, Լենա Կարապետյանը, Ֆրինա Բաբայանը, Աղավնի Ժամկոչյանը, Նյուրա Հակոբյանը, Գայանե Քոչարյանը և այլոք: Դվինի հնագիտական արշավախմբում մեծացան և անվանի ճարտարապետներ դարձան նաև Կարո Ղաֆադարյանի որդիները՝ Կորյուն և Գրիգոր Ղաֆադարյանները:

Ի վերուստ երկնային առաքելությամբ օժտված մարդ - անհատի կյանքը շատ կարճ է և նման՝ առկայծող կանթեղի: Այն բոցավառվում է մեկեն, թիթեռների պես դեպի իրեն ձգում համախոհներին, ուղղություն, գիտելիք ու նպատակ հաղորդում նրանց և աստիճանաբար մարում՝ լույս ու ջերմություն սփռելով շրջապատին: Այդ լույսն ու ջերմությունն այսօր էլ ճառագում են անվանի հայագետ Կարո Գրիգորի Ղաֆադարյանին անձամբ ճանաչողների և նրա գործով ոգեշնչված բազմաթիվ երիտասարդների սրտերում, որպես մեծ ուսուցչի պատգամ, հավատամք ու հետագա նոր հայտնագործությունների անուրանալի առհավատչյա…

ՄՈՒՐԱԴ ՀԱՍՐԱԹՅԱՆ

Ճարտարապետության դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

# ԹՈՐԱՄԱՆՅԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ «ՂԱՖԱԴԱՐՅԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԸ»

Այս տարի, ապրիլի 20-ին, լրացավ անվանի հայագետ Կարո Գրիգորի Ղաֆադարյանի 110-ամյակը: Նա պատկանում է XX դ. հայագետների ավագ սերնդին, որի ներկայացուցիչները առանձնանում են իրենց հետաքրքրությունների և ուսումնասիրած բնագավառների բազմազանությամբ: Դա հնարավորություն էր տալիս նրանց համալիր, բազմակողմանի հետազոտել հայագիտության միմյանց փոխկապակցված տարբեր ուղղությունները, որն ավելի ճշգրիտ և սպառիչ արդյունք էր տալիս: Կ. Ղաֆադարյանը միաժամանակ պատմաբան էր, հնագետ, վիմագրագետ, բանասեր: Կա նաև հայագիտության մի բնագառ ևս, որի հիմնադիրը նա է՝ դա «Թորամանյանագիտություն»-ն է: 1930-ական թթ., Կ. Ղաֆադարյանն իր գիտական-ստեղծագործական կյանքի լավագույն շրջանի ավելի քան հինգ տարիները նվիրեց հին և միջնադարյան ճարտարապետության գիտական ուսումնասիրության հիմնադիր Թորոս Թորամանյանի ժառանգության հավաքման, խմբագրման, ծանոթագրության և տպագրության ծանր, աշխատարար, բայց շատ կարևոր և շնորհակալ գործին: Դրա արդյունքը եղավ 1942 թ. հրատարակված «Թորոս Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության: Աշխատությունների ժողովածու: Կազմեց և հրատարակության պատրաստեց Կարո Ղաֆադարյան: Ընդհանուր խմբագրություն Հովսեփ Օրբելու: Երևան, 1942» մեծադիր, 400 էջանոց հատորը: Այն տպագրվեց Հայրենական Մեծ պատերազմի ամենածանր ու վճռական տարում, երբ որոշվում էր սովետական երկրի ընդհանրապես, հետևաբար և Հայաստանի, լինել-չլինելու հարցը և ողջ միջոցները հատկացվում էին կատաղի թշնամուն դիմակայելու նպատակին: Սա ցույց է տալիս, թե ինչպիսի կարևորություն էր տրվում Թ. Թորամանյանի գիտական ժառանգության հրատարակմանը, որտեղ ներկայացվում էին հայկական հին և միջնադարյան ճարտարապետության համամարդկային նշանակություն ունեցող, ազգը ոգեշնչող նվաճումները: Եթե մինչև

այդ, Թ. Թորամանյանի նյութերի հիման վրա գրված, ավստրիացի անվանի արվեստաբան Յոզեֆ Ստրժիգովսկու 1918 թ. Վիեննայում տպագրած երկհատոր ուսումնասիրության շնորհիվ դրանք հայտնի էին դարձել միջազգային գիտական հանրությանը, ապա Հայաստանում հայ մշակույթի գլուխգործոցները ներկայացվեցին ազգին 1942 թ. տպագրված այդ կոթողային աշխատանքի առաջին հատորի և դրան հաջորդած ու դարձյալ Կ. Ղաֆադարյանի մանրակրկիտ ու քրտնաջան աշխատանքի շնորհիվ 1948 թ. Երևանում հրատարակված երկրորդ հատորի շնորհիվ: Թ. Թորամանյանի գիտահետազոտական հարուստ ժառանգությունը ներկայացնող այս հատորները, տեքստին զուգահեռ, պարունակում են հեղինակի կատարած չափագրություններն ու լուսանկարները: Այսօր դա առավել է արժևորում այդ հատորները, որովհետև հայկական մշակույթի ճարտարապետական գլուխգործոցների մեծ մասը գտնվում է Արևմտյան Հայաստանում, ժամանակակից Թուրքիայի արևելյան հատվածի պետական սահմաններում: Անցյալ հարուրամյակում անխնամ ու լքված վիճակի և առավել՝ թուրքական իշխանությունների վարած քաղաքականության (պատմական Հայաստանի տարածքում հայկական մշակույթի հետքն անգամ վերացնելու) հետևանքով այդ ճարտարապետական հուշարձանների ճնշող մեծամասնությունն այսօր արդեն գոյություն չունի:

Հայ ճարտարապետության ուսումնասիրության գործն այսօր շարունակում են Կարո Ղաֆադարյանի ճարտարապետ զավակները՝ Կորյունը և Գրիգորը: Ավագը՝ Կորյունը, ավարտելով Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտը սկզբում աշխատել է Հնությունների կոմիտեի համակարգում, իսկ 1962 թ.-ից՝ Հայաստանի գիտությունների ակադեմիայի Արվեստի ինստիտուտի ճարտարապետության բաժնում որպես գիտաշխատող, ապա՝ Հուշարձանների համահավաքի բաժնի վարիչ: Զբաղվել է Հայաստանի հնագույն, հին և վաղքրիստոնեական ճարտարապետության հետազոտությամբ: Մասնակցել է Ամբերդի, Արգիշտիխինիլիի, Արտաշատի, Դվինի, Մեծամորի, Մոխրաբլուրի, Էրեբունիի պեղումներին, չափագրել այդ հուշարձանները, հոդվածներով հանդես եկել գիտական պարբերականներում:

Հատկապես մեծ է նա ավանդը Վանի թագավորության (Ուրարտու) պեղումներով բացված խոշոր վարչատնտեսական և ռազմական կենտրոն Արգիշտիխինիլիի (հետագայում Երվանդունյաց Հայաստանի մայրաքաղաք

Արմավիր) շինությունների ճարտարապետության ուսումնասիրության գործում, զուգակցված իր իսկ կատարած արտակարգ ճշգրտությամբ չափագրություններով և, հատկապես, վերակազմություններով, որոնք առանձնանում են գիտական արժանահավատությամբ, կատարման բարձր մակարդակով (հատկապես Արգիշթիխինիլի պաշտպանական համակարգի վերակազմությունը):

Այս գիտական հետաոտությունների արդյունքը հանդիսացավ Կորյուն Ղաֆադարյանի «Արգիշտիխինիլի քաղաքի ճարտարապետությունը» թեմայով ատենախոսությունը, որը նա հաջողությամբ պաշտպանեց 1975 թ.՝ ստանալով ճարտարապետության թեկնածուի գիտական աստիճան: Աշխատությունը նույն խորագրով 1984 թ. հրատարակեց Հայաստանի գիտությունների ակադեմիան:

Կորյուն Ղաֆադարյանի հաջորդ խոշոր տպագիր աշխատանքը եղավ Արվեստի ինստիտուտի կողմից հրատարակվող «Հայկական ճարտարապետության պատմություն» վեցհատորյակի առաջին հատորի (1996, Երևան) առաջին մասը՝ «Հայկական լեռնաշխարհի ճարտարապետությունը նախնադարյան-համայնական հասարակարգի և պետական առաջին կազմավորումների ժամանակաշրջանում» խորագրով (Գ. Արեշյանի համահեղինակությամբ), որը փաստորեն հանդիսացավ Թորոս Թորամանյանի նույն թեմայով ուսումնասիրությունների լրացումն ու շարունակությունը:

Վերջին տասնամյակներում Կորյուն Ղաֆադարյանը գլխավորապես աշխատեց որպես ՀՀ հուշարձանների պահպանության և ուսումնասիրության ղեկավարներից մեկը: Նա հաջորդաբար զբաղեցրեց հետևյալ պաշտոնները՝ ՀՀ կառավարությանը կից՝ Հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչության պետ (1991-1995 թթ.), Հայաստանի Հանրապետության Մշակույթի և երիտասարդության նախարարի տեղակալ (1995-1996 թթ.), Մշակույթի և երիտասարդության նախարարության Հուշարձանների պահպանության և վերականգնման վարչության պետ (1996-1998 թթ.), նույն վարչության պետի տեղակալ (1998-2000 թթ.): 2002 թ.-ից առ այսօր Կորյուն Ղաֆադարյանն աշխատում է ՀՀ Մշակույթի նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնում» (2002-2004 թթ.՝ բաժնի վարիչ, իսկ 2004 թ.-ից մինչև օրս տնօրենի տեղակալ):

Կարո Ղաֆադարյանի կրտսեր որդին՝ Գրիգորը աշխատում է ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական

միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ում, որտեղ ծրագրվել և իրականացվում է գիտական ու առանց չափազանցության հայրենասիրական մեծ գործ՝ Թորոս Թորամանյանի հսկայական անտիպ արխիվից Արևմտյան Հայաստանի մեծ մասի արդեն ավերված հուշարձանների չափագրությունների տպագրությունը: Լույս են տեսել 5 պրակ՝ նվիրված Անիի Մայր տաճարին, Տիգրան Հոնեցի եկեղեցուն, Պահլավունյաց եկեղեցիներին, Գագկաշեն Ս. Գրիգոր տաճարին և Անիի Միջնաբերդին:

Գրիգոր Ղաֆադարյանն իր գործընկեր Գայանե Հովհաննիսյանի հետ այդ նյութերը խմբագրել են, ծանոթագրել և պատրաստել տպագրության: Իսկ այն հուշարձանները, որոնց մասին Թ. Թորամանյանը ոչինչ չի շարադրել, ներկայացրել են ծանոթացնող տեքստերով, որոնք կարևոր են, զուգահեռ նաև անգլերեն տեքստեր ունենալու առումով: Հատկապես պետք է արժևորել նրանց կատարած ծանոթագրությունները, որոնք իրենց բարձր մակարդակով կարող են չափորոշիչ (էտալոն) ծառայել նման աշխատանքների համար:

Կարող ենք վստահաբար ասել, որ Թորամանյանագիտության «Ղաֆադարյանական դպրոցն» այսօր էլ գործում է, հիմնահաստատվում և մնում է հաջողություն մաղթել դրա գիտական-հայրենասիրական հույժ կարևոր աշխատանքին:

**LEVON ABRAHAMIAN**
Corresponding member of NAS of RA, IAE

# TEMPLE, MUSEUM AND IDENTITY: COMMENTING K. KAFADARYAN'S HISTORY OF ARMENIAN MUSEUMS

In this paper I try to comment and develop ideas compiled in Karo Kafadaryan's brilliant survey of the history of Armenian museums (Լրաբեր (հասարակական գիտությունների), 1972, 10, 20-35). I try further to show the place of museums in the history of Armenian culture, and the role they played and continue to play in forming Armenian identity.

The word "museum" derives from the name of the Greek and Roman temples, which were dedicated to the Muses. These temples are considered to be the first museum-type institutions in the history of human culture, although temples in general were always kinds of storehouses where valuable things were kept. That is the reason why they were invariably robbed during invasions. The Armenian word for museum is *t'angaran* with the root *t'ank* "valuable" (this term first appearing in Armenian manuscripts at the beginning of the 7th century and referring to monastery storehouses). Thus, we can trace what was considered to be valuable in the history of Armenian museums.

The first museums, or rather, protomuseums, in Ancient Armenia are considered by Kafadarian to be the temples dedicated to the god Tir (the Armenian equivalent of the Muses), the patron of sciences, education, and the arts. According to Kafadarian, Tir's principle temple was located on the site where the ruins of the 7th century temple, Zvartnots, are now to be found. Zvartnots is considered to have inherited many of its pagan predecessor's museum features, such as a special hall with Grigor the Enlightener's remains exhibited along with other cult objects.

Ironically, it was the same Grigor the Enlightener who, in introducing Christianity to Armenia at the beginning of the 4th century A.D., destroyed most of the pagan temples along with many masterpieces of these protomuseums.

After Christianity became established in Armenia, the Christian monastery gradually took the function of a museum. In the 10th century, we can already distinguish three types of

*tangarans*: royal, feudal aristocratic, and monastery. But secular museums did not play as significant a role in the development of Armenian museums as did their European counterparts. In Europe, it was the castle museums with various kinds of curiosities which developed into modern museums, while in Armenia, the museum tradition developed within the framework of the monastery museums.

Although the monastery museums were responsible for presenting Armenia's history, indeed, Armenian identity, it was the history of the Armenian Church and the glory of Christianity that the monastery museums "exhibited." It must be said that these early museums were not designed for the occasional curious visitor of today; rather, they were oriented towards the abstract viewer who could "see" even those objects which were stored but not displayed. Nevertheless, some of the objects were directly aimed at the pilgrims who came to these protomuseums to see a particular holy object.

Mkrtich Khrimian, dean of the Varaga monastery (Varagavank) in Vaspurakan, attempted in 1858 to broaden the conception of Armenian cultural history, and hence, of Armenian identity, by placing in a museum he had established at Varagavank, together with Christian cult objects, also a bronze bust thought to be an Armenian pagan idol. This caused a great deal of trouble, since people thought the museum was a pagan temple because of the exhibited objects. Later to become the famous catholicos Khrimian Hayrik, he continued his museum activities on a larger scale. Thus, we see how the transition from temple to museum can easily reverse direction, from museum to temple. The most remarkable feature of this case was the fact that it was an educated clergyman who sought – **from above**, and by means of a **museum** – to broaden, even change, the identity of his people.

A century later, in 1955, when archaeological excavations at Ejmiatzin cathedral uncovered a construction thought to be a pagan hearth under the Christian altar, it became a valuable part of the cathedral museum. So national identity is created from the rejection and destruction of the pagan past, to acquiring and displaying this past in museums.

The Ejmiadzin museum has also another remarkable feature. In the late 19th century, catholicos Gevorg IV, after repairing the eastern wall of the cathedral, allocated three rooms for the present-day museum. He began to collect artifacts from Armenian religious centers throughout the world. This museum therefore took on a very different character from those of Europe. Many European museums, as mentioned above, developed from secular castle-

museums, which up until the first third of the 19th century emphasized the strangeness of the world as seen by the curious traveler. The museums which developed out of such Kunstkammers were in fact models of this strange world. The Ejmiatzin museum, however, represented the same idea, as it were, but through the **geography** of the Armenians scattered all over the world.

We have already seen, with Khrimian Hairik's first attempt to organize a "scientific" museum, how easily a museum containing a deity's image could be transformed into a temple. This phenomenon has today found a new representation. The sacred scripts which were transferred from the monastery museums to a secular museum – the Matenadaran (literally, "repository of manuscripts") – seem to breathed into it their sacred power, and even created a new type of spirituality. It is not so surprising that people who donated to the Matenadaran the sacred books which had belonged to their families continued to worship them. The Matenadaran has in this way become a kind of "sanctuary" where manuscripts are treated not only with scientific respect but also "adoration." Thus, making a ritual offering of flowers to a manuscript, approaching the book storehouse on one's knees, and other gestures of adoration take place in the Matenadaran, which is both a museum, and since 1959, a research institute.

But interestingly enough, the Matenadaran became a new symbol of Armenian identity, containing as it does, proof of Armenian claims to antiquity, civilization, and spiritual enlightenment. It also became a symbol of the return to the motherland for Armenians scattered throughout the world, who by donating their manuscripts to the Matenadaran, return them, as it were, to their original spiritual source.

The Matenadaran as a whole gives us an amazing example of a museum which displays the full spectrum of museum features. One of the most important of these features is its location – a factor of its history as a "temple." As such, it occupies a central or governing position in cultural space, which is a result of the fight for space, in which Matenadaran was passively involved through its name after Mashtots (see L. Abrahamian 2012). There are other even more archaic schemes underlying the plan of its architect, Mark Grigoryan, which he never suspected. Thus, the Matenadaran had acquired some of the characteristics of the originators of the Muses, the mice of ancient Indo-European mythology (В.Н. Топоров 1977), by being, as it were, a mountain treasure cave. The recent extension of the

Matenadaran into the depths of the rocky hill "confirms" the chthonic image of cave-museum; let us also recall the *gandzatuns* or "treasure-houses," and the root "t'ank" in the Armenian word for museum.

The case of the Matenadaran, which won the battle for space, is quite different compared to the struggles for space and power which the European museums fought, for example, the Moscow Museum of History, built at the end of the 19th century in the Red Square, to oppose the famous temple of Vassili Blazhennyi (N.T. Eneeva 1991). Matenadaran was able to assert its dominance not as the result of conflict between Science and Religion, but because as a scientific museum, it had specific characteristics which allowed it to **continue** rather than oppose the traditions of the monastery museums.

Kafadaryan's description of N.Marr's activities in establishing museums in Ani is interesting not only for the short-term history of Ani excavations, but also for tracing the development of the idea of establishing museums in general. To house the first museum, Marr chose a medieval building, thought to have been a royal palace or medieval custom-house before its transformation into a mosque. Thus, the first museum was organized, in a sense, in an "alien" building. For the second museum, Marr had a special building constructed; only the third museum was organized in a medieval church which had never been altered. But the three museums were very soon filled with finds from his archaeological excavations, so that more and more museums were needed. As Kafadarian notes, Ani was a museum in and of itself, which should have been preserved as a whole. We see how the progression from "alien," to "neutral," to "national" took place during this one short process of museum building.

So we have traced the process by which an ancient temple-museum developed into a museum in the temple, how a museum extracted from the temple became a kind of temple in and of itself, and how the ruined temple came to life again as a museum. These changes and transformations help us to reveal the past, witness the present, and model the future of Armenian identity.

**ՖՐԻՆԱ ԲԱԲԱՅԱՆ**
ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, պ.գ.թ.

# ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԴՎԻՆԻ ՄԱՆՐԱԿԵՐՏ ԱՐՁԱՆԻԿՆԵՐԸ

Դվինի միջնաբերդի պեղումների ժամանակ հայտնաբերված հնագիտական նյութը մեծաքանակ է: Գտածոների զգալի մասը պարբերանար լուսաբանվել է տարբեր հեղինակների կողմից: Այդ հրապարակումներում բազմիցս ներկայացվել են «Շահաստան», «Մեծ մայրաքաղաք» անվանված միջնադարյան Դվինի քաղաքական և տնտեսական կյանքի մանրամասները:

Նյութերի համակողմանի ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ IX-XIII դդ. զարգացում ապրող արհեստագործության տարբեր բնագավառների՝ մետաղագործության, կավագործության, ապակեգործության, գործվածքների, փայտի, քարի, կաշվի և այլ արտադրանքի փայլուն օրինակները շրջանառության մեջ են դրվել սպառման տարբեր ոլորտներում, դուրս են բերվել արտաքին շուկա, ունեցել են կիրառական որոշակի նշանակություն:

Այդ իրերի մեջ, սակայն, հանդիպում են նաև այնպիսիք, որոնց միանգամից հնարավոր չէ որոշակի մեկնաբանում տալ, պատասխանել թե կյանքի ու կենցաղի կոնկրետ որ պահանջներն են բավարարել: Այդ գտածոների թվին են պատկանում փոքր չափերի չեչաքարե քանդակազարդ իրերը, որոնք եզակի են իրենց տեսակի մեջ: Դվինի միջնաբերդի հորերից մեկում 1968 թ. հայտնաբերված այս առարկաները 11 հատ են: Դրանցից մեկը գետաքարից է: Մի մասը ներկայացնում են տարբեր դիրքերով առյուծների պատկերներ, մյուս օրինակները՝ ուղղանկյուն, քառակող, բազմանկյուն ձև ունեն և իրենց վրա կրում են փորագիր երկրաչափական զարդագծեր: Բոլոր օրինակները ընդելուզված են կապույտ հախճապակու կամ կավամածուկի (պաստա) կտորներով: Մի մասի ընդելուզումները ժամանակի ընթացքում թափված են, սակայն առկա են դրանց դատարկ խոռոչները:

Միակտոր փոքր քարերի վրա քանդակված առյուծները չեն կրկնում մեկը մյուսին: Հնարամիտ քանդակագործ վարպետը յուրաքանչյուր փոքրիկ մակերեսի վրա կարողացել է ավարտուն պատկեր ստեղծել: Չեչաքարերից մեկի չորս անկյուններում փորագրված առյուծների գլուխները, նրանց արտահայտիչ մռութները,

բլթակավոր ականջները, երկարավուն դնչերը, երկրագույն աչքերն ու թաթերը՝ տեսանելի լինեն բոլոր կողմերից: Զուգահեռ գծերից կազմված ժապավենաձև զարդը անցնում է նույն առյուծների դնչերի տակով, այնուհետև երկրաչափական պարզ, սխեմատիկ եղանակով արված եռանկյունիների միջոցով մեկտեղում գիշատիչների ստորին վերջույթները:

Մեկ այլ՝ սև գույնի, յոթանիստ, սկավառակաձև պատվանդանի կենտրոնում, ուղղանկյուն փոսիկի մեջ ագուցված բաց աղյուսագույն չեչաքարից արված առյուծի քանդակն առավել տպավորիչ է դարձել շնորհիվ քարերի գունային խաղերի: Առյուծը կարծես առանձնացել է իր միջավայրից, դարձել ուժի և իշխանության խորհրդանիշ:

Այդ իրերն իրենց պատկերներով ժամանակին մեծանուն գիտնականների ուշադրությանն են արժանացել: Այսպես. միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անիում 1907 թ. Ն. Մառի գլխավորած արշավախմբի կատարած պեղումների ժամանակ հայտնաբերվել է սև չեչաքարից (трахит) պատրաստված մի փոքր իր, որի պատվանդանին փորագրված է առյուծի պատկեր, առջևի թաթերին հենված իրանով, արտահայտիչ դնչով, հախճապակե կտորներով ընդելուզված ակնախոռոչներով: Քանի որ առարկան գտնվել է Անիի պալատական բաղնիքի տարածքում, հնագետներ Ն. Մառի, այնուհետև Հ. Օրբելու կողմից արձանիկը ներկայացվել է իբրև ոտնակոշտուկների համար օգտագործվող քարե կոկիչ (утюжок) կամ ոտնաքերիչ: Հ. Օրբելին քանդակազարդ իրը նմանեցրել է հայերի կողմից բաղնիքներում օգտագործվող նմանօրինակ քարերին (Տե՛ս ***Н. Марр***, Анийская серия, № 2, Реестрь предметов древности, С. Петербург, 1908, стр. 15, ***И. Орбели***, Анийская серия, № 3, Каталог Анийского музея древностей, 1910, С. Петербург, стр. 102):

Հետաքրքիր է, որ հնագետ Ն. Բայբուրդյանը ժամանակին Շենգավիթում հայտնաբերված, ինչպես ինքն է ասում, իրեն քիչ հասկանալի քարե իրերից մի քանիսը նույնպես անվանում է «կոկիչներ» («утюги») և շեշտում վերջիններիս դեկորատիվ լինելը:

Բազմավաստակ գիտնական-հնագետ Կ. Ղաֆադարյանը՝ անդրադառնալով Դվինի քանդակազարդ իրերին համարել է, որ դրանք ինչ որ մոռացված խաղի քարեր են: Նա հիշատակում է նաև հին ժամանակներում տարածված ճատրակ (շախմատ) խաղը, ենթադրելով որ գտածոները մի կողմի ֆիգուրներն են, իսկ մյուս կողմինը՝ չեն հայտնաբերվել:

Մենք ևս կողմ ենք Կ. Ղաֆադարյանի դիտարկումներին ու ենթադրություններին, և համոզված, որ ժամանակի ընթացքում, կհայտնաբերվեն ասածը հիմնավորապես հաստատող նոր նյութեր (Տե՛ս ***Կ. Ղաֆադարյան***, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1982, էջ 80, նկ. 61, ***Ֆ. Բաբայան,*** Անիի և Դվինի մանրաքանդակ առարկաների շուրջ, Շիրակի պատմամշակութային ժառանգությունը, Հանրապետական երրորդ գիտաժողով, Զեկուցումների հիմնադրույթներ, Գյումրի, 1998, էջ 57-58):

Այդ ամենով հանդերձ թույլ ենք տալիս քարե արձանիկների մասին ներկայացնել մեր դիտարկումը: Հայտնի է, որ X-XII դդ. և դեռ ավելի վաղ, հայերին, ինչպես նաև Արևելքի մյուս ժողովուրդներին հայտնի է եղել շախմատ խաղը, որը Հնդկաստանից անցել է Իրան, այնուհետև մտել Կովկաս, այնտեղից էլ Ռուսաստան և այլուր: Շախմատի քարերը հիմնականում պատրաստվել են ոսկուց, փղոսկրից, արծաթից, սաղաֆից, սաթից, փայտից: Ավելի պարզունակները, որ հայտնաբերվել են Արագածի լանջերին, եզան կոտոշներից են, կավից, ուռենու հաստ ճյուղերից: Շախմատի ֆիգուրներ պատրաստվել են նաև քարից: Բոլոր տարբերակներն էլ որոշակի ձևեր են ունեցել և պատրաստման հատուկ եղանակներ ( Տե՛ս ***И. Орбели и К. Тревер***, Шатранг, Ленинград, 1936, с. 15-27): Դվինից հայտնաբերված չեչաքարե պատրաստուկները, այնուամենայնիվ, առայժմ առանձնանում են վերը ներկայացրած շախմատի խաղաքարերից իրենց ձևով, տեսակով ու նյութով:

Թեական ենք համարում Անիում գտնված առյուծակերպ առարկայի բաղնիքի քար լինելու հանգամանքը: Կարծում ենք, որ անեցի վարպետը չէր համարձակվի նույն պատկերով ոտնաքերիչ քանդակել, քանի որ, իր առջև ուներ Անիի պարսպի վրա՝ Ավագ դռան վերևի քանդակված առուծը, Բագրատունիների զինանշանը, որի տարբերակները կան նաև Կարսում, Լոռի Բերդում, Հաղարծինում և այլուր:

Առյուծների պատկերներն ու քանդակները վկայված են դեռևս խեթական, ասսուրական և ուրարտական արվեստներում: Հայտնի էին դրանք նաև որպես պարսկական տաճարների և պալատների մուտքերը պաշտպանող արարծներ:

«Բարի և պահպանիչ» էակների կերպարանքով դրանք հանդես են եկել բանահյուսության մեջ, տեղ են գտել քրիստոնեական տաճարների պատերին, պատկերվել եկեղեցական ավետարանների վրա: «Հավերժական պահապան» հովանավոր առյուծը ներկայացել է իբրև արևի և կրակի խորհրդանիշ: Ամենուրեք մեծ տարածում են ունեցել վերջինիս պատկերներով հմայական պահպանակները: Ավելի

քան հավանական ենք համարում, որ խնդրո առարկա քանդակները, կապույտ քարերի ուղեկցությամբ, «հմայական-պահապանի» գաղափարն են իրենց մեջ ամփոփել:

Անկախ ժամանակագրական հեռավորությունից, վերը ներկայացված XI-XIII դդ. զարդակիր իրերի մեջ արտացոլվել է անցյալի իրականությունը: Քանդակային արվեստին բնորոշ մանրակերտ հորինվածքները խոսում են միջնադարյան քարգործ վարպետների ճաշակի և հմտության մասին, իսկ նրանց կերտած չեչաքարե առարկաները կարևոր տեղ են ունեցել ժողովրդական հավատալիքներում: Դրանց, ըստ ամենայնի վերագրվել է «չար աչքից» և հիվանդություններից զերծ պահելու կարողություն: Այդ մոգական ուժն են թերևս կրել չեչաքարե իրրը, որոնց վրայի եռանկյունի, խաչաձև, քառաթև, բազմանկյուն երկրաչափական կոդավորված գծազարդերը, դարեր անց, տեղ են գտել XIX-XX դդ. հայկական ժողովրդական արվեստի ճյուղերից մեկի՝ փայտե փորագրազարդ հմյիլ-դաղդղանների վրա (***Ա. Իսրայելյան***, Փայտե պահպանակ, Կուլտ.-լուս. աշխատանք, Երևան, 1988, № 7-8): Վերջիններս կրկնում են ոչ միայն Դվինի արձանիկների, այլև նախաքրիստոնեական շրջանի հավատալիքներում տեղ գտած իմաստագիր այլ նշանները: Բացառված չէ, որ Դվինի փոքրիկ արձանիկներն իրենց կոդավորված փորագրանշաններով, որպես ինքնատիպ պահապան հմայիլներ կարող էին դրվել բնակելի տների, հասարակական կառույցների համապատասխան անկյուններում և այլուր: Անառարկելի է, որ միջնադարում քրիստոնեական մտածողությունից դուրս կար նաև արվեստագետի երևակայություն, որ մշտապես պտտվում էր երկրի և երկնքի, արևի հավերժական ջերմության, պտղաբերության, կյանքի և հարատևության ոլորտներում:

Գ. Մանասյանն իր «Խորհրդանիշների հանրագիտարանում» գրում է. «Արդ կարողանալ «ընթերցել» խորհրդանշանը նշանակում է գաղտնազերծել այդ հասկացությունը, որ դարերի ընթացքում ներծծվել է մարդկանց բազմաթիվ սերունդների հիշողությամբ, զգացմունքներով և կենսափորձով»:

ԱՂԱՎՆԻ ԺԱՄԿՈՉՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, պ.գ.թ.

# IX-X ԴԴ. ՋՆԱՐԱԿԱԾ ԽԵՑԵՂԵՆԸ ՊԱՏՄԱԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԵԼՈՒ ՓՈՐՁ

Դվինի արշավախմբի բազմամյա ղեկավար պ.գ.դ. պրոֆեսոր Կ. Ղաֆադարյանը «Դվին քաղաքը և նրա պեղումները» մենագրության մեջ քաղաքի պատմության, քաղաքաշինության, կառուցապատման և այլ հիմնախնդիրների հետազոտության շրջանակներում, առանձին բաժիններ է հատկացրել արհեստներին ու առևտրին, դրանց համատեքստում լուսաբանելով սոցիալ-տնտեսական կյանքի էական կողմերը: Սույն հաղորդման նպատակն է IX-X դդ. ջնարակած խեցեղենի քննությունն իրականացնել ժամանակաշրջանի գլոբալ փոփոխությունների՝ արաբական խալիֆայության ճգնաժամի, Հայաստանում և Այսրկովկասում ձևավորված ամիրայությունների, արաբա-բյուզանդական հակամարտության, Բագրատունիների անկախության համար մղվող պայքարի հարթության վրա: Հետազոտության այս մոդելի ընտրության հենքը, Օրեն-կալայի, Յունանի, Դվինի, Սամառա, Քուֆ, Բասրա (Իրաք) քաղաքների պեղումներով ձեռք բերված ջնարակած խեցեղենի և մատենագրական աղբյուրների համախումբ շտեմարանն է ու դրանց զուգադիր քննությունը: IX դ. II կեսին արաբական խալիֆայությունում իրականացվող քաղաքական գործընթացների փուլը, նշանավորվեց նրա տարածքներում արաբական կիսանկախ ամիրայություններ գոյացումով, փոխվեց արաբաբյուզանդական հարաբերությունների որակը ու Բագրատունիների հողերի միավորման համար մղվող պայքարը ստացավ նոր բովանդակություն:

Թեմայի լիարժեք ուսումնասիրման համար անդրադարձել ենք IX-X դդ. Սաջյան ամիրայության և հայ Բագրատունիների միջև առկա բարդ հարաբերություններին: Այս փուլում քաղաքական պայքարի թիրախ էին նաև միջազգային մայրուղիները, որոնք մարդկային ռեսուրսների տեղաշարժից բացի, նյութական արժեքների և հաղորդակցման ցանցն ապահովող կարևոր միջոցներ էին:

Արաբական խալիֆայությանը մատուցած ծառայություններին իպատասխան Սաջյանները, նվաճելով Ատրպատականը, մենաշնորհային կարգավիճ ստացան տիրապետելու նաև Ատրպատականից դեպի հյուսիս ձգվող բանուկ առևտրական

ճանապարհին, որի նրա կարևոր կենտրոններ էին Օրեն-Կալան, Յունանը (մեր կարծիքով՝ Արցախի Տիգրանակերտը) և Պարտավը: Օրեն-Կալան պեղվել է 1953-1955 թթ. և հայտնաբերված IX-X դդ. ջնարակած խեցեղենը հանգամանորեն ուսումնասիրել է Ա. Յակոբսոնի կողմից:

Հաջորդ կայարանը Յունանն է, որը հետազոտողները (Յ. Պախոմով, Հ. Մանանդյան, Զ. Յանպոլսկի, Ն. Կառաուլով) ենթադրաբար տեղադրում էին Աղդամի շրջանում՝ Փանահի պալատի շրջակայքում: 2006 թ. Արցախի Տիգրանակերտում իրականացվող պեղումները (ղեկավար՝ պ.գ.դ. Հ. Պետրոսյան) ցույց են տալիս քաղաքի տնական գոյությունը Տիգրան II-ի (մ.թ.ա. 95-55 թթ.) ժամանակներից մինչև զարգացած և ուշ միջնադար: Քաղաքային թաղամասերից հայտնաբերված IX-X դդ. ջնարակած խեցեղենի հարուստ հավաքածուն չնչին տարբերությամբ կրկնում է Օրեն-Կալայի նյութերը: Հաջորդ կայարանը Պարտավն է, որը 893 թ. Դվինի երկրաշարժից հետո Արմինիա ոստիկանության կենտրոնն էր: Պարտավով ավարտվում էր Սաջյանների ազդեցության սահմաններն ու սկսվում էին Բագրատունիների քաղաքական կազմավորումների՝ Խաչենի ու Փառիսոս-Սոդքի սահմանային տարածքները, որոնք ներառելով Սևանի ավազանը ավարտվում էին Դվինում: Արաբական բոլոր ուղեգրություններում այս ճանապարհները փաստված են իբրև Սմբատ I-ին (890-914 թթ.) պատկանող մայրուղիներ, անկախ Սաջյանների խորամանկությամբ և/կամ բացահայտ սադրանքներով հայկական այդ տարածքները վերահսկողների միջև սեպ խրելու նենգ գործելակերպի:

Դվինը Ատրպատականի ու Արաբական խալիֆայության հետ կապող երկրորդ երթուղին Գանձակ-Մարաղա-Թավրիզ-Մարանդ-Ջուղա-Նախիջևան-Սիսաջան-Դվին ուղեգիծն էր: 893 թ., երբ կնքվեց հայ-բյուզանդական առևտրական պայմանագիրը, Արաբական խալիֆայությունն ու Սաջյանները Դվին տանող ռազմավարական կարևոր այդ ճանապարհին տիրելու և Բյուզանդիայի տեղաշարժը դեպի Դվին արգելափակելու համար նվաճեցին Սմբատ I-ին պատկանող Արևիկ ու Երնջակ արքունի տիրույթները՝ ստեղծելով Նախիջևանի ու Գողթի ամիրայությունները: 893 թ. Դվինի երկրաշարժն էապես փոխեց քաղաքի տեսքն ու սոցիալական կառուցվածքը: Կաթողիկոսի հետ քրիստոնյաների հեռանալը նպաստեց մուսուլմանական տարրի խտացմանը: Այսուհանդերձ, ի հակադրություն մինչև 910 թ. Յուսուֆ Սաջյանի ու Բագրատունիների միջև շարունակվող պայքարի, Մերձավոր Արևելքի քաղաքական

ու տնտեսական գործընթացներում հռչակված Դվինը կարճ ժամանակամիջոցում վերականգնվեց իր երբեմնի դերը: Չստանալով Բյուզանդիայից անհրաժեշտ օգնությունը, Սմբատ I-ը 914 թ. Սաջյան Յուսուֆի կողմից Դվինում սպանվեց, որից հետո Բագրատունիները վերջնականապես հրաժարվեցին Դվինը կրկին մայրաքաղաքի վերածելու գաղափարից:

Դվինի IX-X դդ. ջնարակած խեցեղենը հիմնականում հայտնաբերվել է կենտրոնական թաղամասի 893 թ. երկրաշարժից ավերված շինությունների փլատակներում՝ աբբասյան դրամների հետ: Արաբական խալիֆայության կենտրոն Իրաքի Սամառա, Քուֆի և Բասրա քաղաքներում նույնատիպ խեցեղենի առկայությունը ևս վկայում է, որ այն IX-X դդ. զուգահեռաբար արտադրվել է Ատրպատականի, Օրեն-կալայի, Տիգրանակերտի և Դվինի խեցեգործական կենտրոններում: Ուրեմն ուսումնասիրվող խեցեղենը հիշյալ տարածաշրջանի մենաշնորհն էր, որովհետև այն միանգամայն տարբերվում էր Միջին Ասիայում այլ ամիրայական կազմավորումներում արտադրված խեցեղենից թե՛ ձևով, թե՛ հարդարանքի մանրամասներով, թե՛ երանգավորմամբ: Մեր ուսումնասիրած ջնարակած խեցեղենը և՛ տեխնոլոգիական առումով և՛գերիշխող դեղին, կանաչ, սրճագույն գուներանգներով, միանգամայն ինքնատիպ երևույթ էր: Ավելացնենք, որ կետերի, սլաքների, խաչերի, տարբեր օղակների, ինչպես նաև ոճավորված բույսերի ու դրանցից կազմված տարաբնույթ հորինվածքների կոկիկ մշակումները անօթների հարդարանքում՝ նշանավորում էին IX-X դդ. խեցեգործական մշակույթի մեջ նոր որակի մուտք:

Այսպիսով կարելի է եզրակացնել, որ IX-X դդ. ջնարակած խեցեղենը քաղաքային մշակույթի արդյունք էր: XI-XIII դդ. այն իր հետագա զարգացումն ապրեց և, այս փուլում արդեն խեցեգործ վարպետները կիրառում էին փորագրման, գծագրման, վերադիր գունազարդման եղանակներ իսկ հարդարանքի մանրամասներում՝ բուսական, կենդանական, կենցաղային, էպիկական մոտիվներ ու հորինվածքներ:

ՆՅՈՒՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, պ.գ.թ.

# ԿԱՐՈ ՂԱՖԱԴԱՐՅԱՆԸ ԵՎ ԴՎԻՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

*Կարոն ժայռ է, ժայռ,*
*Ժայռի վրա խաչքար:*
*Մարտիրոս Սարյան*

Միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Դվինի ավերակները գտնվում են Երևանից 30 կմ հարավ, ներկայիս Արարատի մարզի Արտաշատի ենթաշրջանում, Արտաշատ քաղաքի հարևանությամբ: Քաղաքն ընդգրկել է մոտ 400 հա տարածք (ներկայիս Ն. Դվին, Նորաշեն, Վ. Արտաշատ, Բերդիկ, Այգեստան գյուղերի տարածքները), իսկ բնակչությունը քաղաքի ամենածաղկուն շրջանում կազմել է 100000-150000: Դվինը կամ Ոստան Դվինը Պատմական Հայաստանի Այրարատ նահանգի 19-րդ գավառն էր:

Հնավայրի կենտրոնական հատվածում առանձնանում է Դուին, Դվին, Դաբիլ (արաբերեն) անվանումով մի ընդարձակ բլուր, որի վրա հիմնարկվել է քաղաքի միջնաբերդը՝ հզոր պարիսպներով և 40-ից ավելի կիսակլոր աշտարակներով: Միջնաբերդն օղակել են ընդարձակ քաղաքային թաղամասերը, որոնք, ըստ արաբ պատմիչ Մուկադասիի, ևս շրջափակված են եղել հզոր պարիսպներով: Դրանց մնացորդները մինչև XX դ. 60-ական թթ. մասամբ պահպանվել էին ժամանակակից Վերին Արտաշատ, Հնաբերդ և Այգեստան գյուղերի տարբեր հատվածներում:

Դվինի տարածքը բնակեցված էր արդեն մ.թ.ա. III հազ., իսկ մ.թ.ա. II-I հազ. սահմանագծին այստեղ գործել է Արարատյան դաշտավայրի պաշտամունքային կենտրոններից մեկը: Պեղումների ընթացքում հնավայրի տարբեր հատվածներում բացվել են երկաթեդարյան սրբարանների մնացորդներ, դրվագազարդ կավե տախտակներ, ծիսական խեցեղեն և այլ նյութեր: Մ.թ.ա. VIII դ. բնակավայրը նվաճվում և հրկիզվում է ուրարտացիների կողմից: Հելլենիստական և անտիկ դարաշրջաններում այն Արտաշատ մայրաքաղաքի հյուսիսային արվարձան էր, նրա տնտեսական մատակարարներից մեկը:

Հայոց Խոսրով Կոտակ թագավորը (332-339 թթ.) IV դ. 30-ական թթ. Դվինը հռչկեց արքունական նստոց՝ Ոստան Հայոց, ինչը վկայակոչում են Փավստոս Բուզանդն ու Մովսես Խորենացին: 481 թ. «Տանուտէր Հայոց» Սմբատ Բագրատունին Դվինը հայտարարեց մարզպանական Հայաստանի մայրաքաղաք: Այդ կարգավիճակը պահպանվեց մինչ 930 թ., երբ մայրաքաղաքը տեղափոխեց Կարս:

470-ական թթ. սկզբներին, Գյուտ կաթողիկոսի օրոք, կաթողիկոսությունը տեղափոխվեց Դվին և քաղաքը դարձավ Հայոց հոգևոր կենտրոնը, ուր շուրջ 400 տարի նստեցին են հայոց Հայրապետները: Միջնադարի հայ պատմիչների վկայությամբ Դվինի Հայրապետական Աթոռին կից գործել է հոգևոր բարձրագույն դպրոց՝ վարդապետանոց, «տուն ուսուցչի կամ ուսման»: Ժամանակին Այստեղ են ուսանել Մովսես Եղվարդեցի, Էզրաս Անգեղացի, Կոմիտաս, Եզր, Սիոն Ա. Բավոնեցի կաթողիկոսները, Ղևոնդ պատմիչն ու Վրթանես Քերթողը, Հովհան Մայրավանեցին, Գրիգոր Գթզիկը և այլոք:

Դվինն իբրև մայրաքաղաք և գործուն քաղաք հարատևում է մինչև XIV դ. առաջին կեսը, ապա իսպառ անհետանում պատմության ասպարեզից, պայմանավորված ներքին և արտաքին բազում մարտահրավերներով: Ավերված քաղաքը դարերի ընթացքում ծածկվում է հողի հաստ շերտով, վերածվելով հողաբլուրների, որը լավագույնս նկարագրել է անգլիացի հնագետ Ռոբերտ Կեր-Պորտերը. «Ես գտնվում էի մի քաղաքում, որից ոչինչ չէր մնացել, այլևս չկային ոչ կոթող, ոչ գնբեթ և ոչ էլ բնակարանի պատ ... Արտաշատում (իմա՝ Դվինում) ես կանգնեցի նրա գերեզմանի վրա»: Երկար տարիներ Դվինի ավերակները շփոթում էին Արտաշատի հետ:

XIX դ. վերջում, XX դ. սկզբներին Դվինով սկսում են հետաքրքրվել ռուս, հայ և օտարազգի մասնագետները, որոնք զբաղվում էին հայոց պատմության և մշակույթի ուսումնասիրությամբ: Անհայտ պատճառներով ուշադրությունից դուրս է մնացել մի շատ ուշագրավ փաստ. Դվինում առաջին պեղումներն իրականացվել են 1850 թ. Կովկասի փոխարքայության Դիվանատան մի պաշտոնյայի՝ ոմն Տոկարևի կողմից, անձամբ Կովկասի փոխարքա Տ. Ս. Վորոնցովի հովհանավորչությամբ:

Այսուհանդերձ, Դվինի հնագիտական ուսումնասիրության սկիզբը կապվում է Նիկողայոս Մառի անվան հետ, ով 1899 թ. մասնակի պեղումներ է կատարել քաղաքի միջնաբերդում: Կայսերական հնագիտական հանձնաժողովի որոշմամբ 1904, 1907-1908 թթ. Դվինում պեղումներ է իրականացրել Խաչիկ վրդ Դաղյանը: Նա է Դվինում

բացել առաջին կոթողային կառույցները, որոնք կռվան հանդիսացան հետագա պեղումների համար: Կարծում ենք, որ Խաչիկ Դադյանը բացել է և Սմբատ թագավորի «մոր և նրա իշխանորդու դամբարանները», եկեղեցու գլխավոր մուտքի տարածքում, բարձրաստիճան հոգևորականների գերեզմանների շարքում: Հանգամանք, որ մասին ժամանակին գրել են Շապուհ Բագրատունին ու Հովհաննես Դրասխանակերտցին: Խ. Դադյանի պեղումները հնարավորություն տվեցին Թ. Թորոմանյանին և ավստրիացի հայտնի ճարտարապետ Յ. Ստրեժիգովսկուն վերականգնելու Դվինի Ս. Գրիգոր կաթողիկե եկեղեցու հատակագծի ընդհանուր տեսքը և այն ներկայացնելու գիտական հասարակությանը:

Այդ տարիներին է բացվել և միանավ բազիլիկ տաճարը՝ ճարտարապետական հետաքրքիր մանրամասներով: 1936 թ. հոկտեմբերին ՀՍՍՀ Ժողկոմսովետը որոշում ընդունեց կազմակերպել Արմֆանի արշավախումբ և ձեռնարկել հնագիտական ուսումնասիրություններ միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Դվինում: 1937 թ. սկսվեցին պեղումները:

1937-1939 թթ. արշավախմբի աշխատանքները ղեկավարել է պ.գ.դ. Սմբատ Տեր-Ավետիսյանը, ում տեղակալը՝ Կարո Ղաֆադարյանն էր: Արշավախումբը գործել է քաղաքի կենտրոնական թաղում, կատարել պեղումներ և մաքրման աշխատանքներ:

1946-1976 թթ. Դվինի արշավախմբի աշխատանքները ղեկավարում է պատմաբան, վիմագրագետ, հնագետ, ճարտարապետության պատմության խոշոր գիտակ պրոֆ. Կ. Ղաֆադարյանը: Դվինի արշավախումբը դարձավ հնագիտական կադրերի հայտնի դպրոց, իսկ նրա ղեկավարը՝ անձնվիրության և նվիրումի ուղենիշ իր աշակերտների ապագա գործունեության համար:

Կ. Ղաֆադարյանի ղեկավարության տարիներին բացվել են պաշտամունքային և աշխարհիկ կոթողային կառույցներ, հեթանոսական տաճարային համալիրներ, բնակելի թաղամասեր, ջրահեռացման և ջրամատակարարման ցանցեր, արտադրական համալիրներ, հիգենայի օբյեկտներ (հասարակական բաղնիքներ), պաշտպանական համակարգ և այլն:

Կ. Ղաֆադարյանը հեղինակել է Դվինում կատարված հետազոտական աշխատանքների արդյունքներին նվիրված բազում աշխատություններ, հոդվածներ, կարդացել զեկուցումներ, որոնց շարքում առանձնանում է «Դվին քաղաքը և նրա պեղումները» երկհատոր մենագրությունը, կոչված պատվավոր տեղ ունենալու

հնագիտության գիտական մեծագույն նվաճումների տիրույթում, նրա հեղինակին դասելով հայագիտության զարգացմանն անգնահատելի ավանդ բերած մեր մեծերի շարքում: Կ. Ղաֆադարյանն այդ աշխատությամբ գիտական հանրությանն ու հասարակությանը ներկայացրեց քաղաքի ամբողջական պատկերը՝ որպես արհեստների ու արվեստների կենտրոն, առևտրի և մշակույթի հովհանավոր, ճշգրտեց նրա մշակութային-հնագիտական շերտագրական սանդղակը, առաջին անգամ հայտարարելով, որ Դվինը ոչ միայն բնակեցված է եղել վաղնջական ժամանակներում, այլև մինչ քրիստոնեությունը եղել է հեթանոսական պաշտամունքային խոշոր կենտրոն: Աշխատանքը համալրված է ոչ միայն հնագիտական նյութերով, այլև աղբյուրագիտական (հայ և օտարազգի պատմիչների) տեղեկություններով, ճանապարհորդների հուշագրություններով:

***Հավերժ խնկելի ուսուցչի***՝ Կ. Ղաֆադարյանի անունն ու գործը, համոզված ենք, որ միշտ կմնան հայ հնագիտության պատմության մեջ, առաջնորդելով և ճիշտ ուղղություն տալով մասնագետների հետագա սերունդներին:

ԳԱՅԱՆԵ ՔՈՉԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, պ.գ.թ.

# ԴՎԻՆ ԱՄՐՈՑ-ՍՐԲԱՎԱՅՐՆ ԱՆՏԻԿ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

Դվինն այն նշանավոր հնամենի կենտրոններից է, որի մ.թ.ա. III հազ. սկզբներից մինչև մ.թ. XIII դ. ընդգրկող հնագիտական շերտերում ամփոփված է Հայկական լեռնաշխարհի հարուստ պատմամշակութային ժառանգության մի ստվար հատվածը:

Դեռևս 1937-1950 թթ., հուշարձանի միջնադարյան շերտերն ուսումնասիրելիս, Դվին բլրի ստորոտին բացված անտիկ կարասային թաղումների կապակցությամբ Կարո Ղաֆադարյանը գրեց. «Այս դամբարանների գյուտը դարձյալ ապացույց է այն բանի, որ մեր թվականության առաջին և երկրորդ դարերում քաղաքի կենտրոնական թաղի տարածությունը ծառայել է իբրև գերեզմանոց: Մյուս կողմից էլ ցույց է տալիս, որ Դվինի բերդը հնում գոյություն է ունեցել իբրև բնակատեղի կամ ամրոց» (**Կ. Ղաֆադարյան,** Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. I, Երևան, 1952, էջ 82): Հնագիտական այս պարզագույն փաստից՝ թվով ընդամենը տասը շարքային թաղումներից ելնելով, իրավամբ արվեց Դվին հնավայրում անտիկ շերտի առկայության կարևորագույն կռահումը, բուն անտիկ հորիզոնների բացահայտումից շատ առաջ:

Կ. Ղաֆադարյանը, ըստ նախնական դիտարկումների, Սբ. Գրիգոր կաթողիկե եկեղեցու IV դ. եռանավ շինության վերաբերյալ կարծիք հայտնեց, որ այն «…սկզբնապես կառուցված է եղել դեռևս հեթանոսության շրջանում իբրև մեհյան և Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հայտարարվելուց հետո վեր է ածվել եկեղեցու»: Խնդիրն այժմ էլ հետազոտության ընթացքում է և արդեն առկա են Կ. Ղաֆադարյանի շուրջ 70-ամյա վաղեմությամբ հայտնած կարծիքի ճշմարացիությունը հավաստող ծանրակշիռ փաստացի վկայություններ:

Կ. Ղաֆադարյանի մտքի արձագանքը հանգեցրեց 1970-ականներից սկսյալ անտիկ շերտի մասնագիտական դաշտային պարբերական հետազոտությունների և լուրջ գիտական ուսումնասիրությունների ցարդ շարունակվող ընթացքին: Այսօր հնագիտական փաստացի նյութի և գրավոր աղբյուրների տվյալների համակարգված

համեմատական վերլուծությունը պարզորոշ ուրվագծում է Դվին բազմաշերտ հնավայրի պատմության անտիկ ժամանակաշրջանը:

Դվին բլրի ամրոց-սրբավայրի գոյությունը վավերացված է ոչ ուշ քան մ.թ.ա. III հազ. սկզբներից: Նախորդ շերտերի համեմատ առավել ուսումնասիրված մ.թ.ա. I հազ. սկզբի (մ.թ.ա. X-VIII դդ.) հնագիտական հորիզոնը փաստում է հնավայրի բուռն ծաղկման ժամանակաշրջանը: Վանի թագավորության (Ուրարտուի) հյուսիսային լայնածավալ արշավանքների ընթացքում (մ. թ. ա. VIII դ. առաջին քառորդին) այդ տերության սահմանների մեջ է ներառվել և հրկիզվել նաև Դվինի վաղերկաթեդարյան ամրոցը (**К. Х. Кушнарева,** Древнейшие памятники Двина, Ереван, 1977):

Արտաշատ նորակերտ մայրաքաղաքի հիմնադրման առնչությամբ, մ.թ.ա. II դ. 80-ական թթ. Դվինը վերակառուցվեց որպես նրա առավել խոցելի հյուսիսային դարպասի մատույցները հսկող, ինչպես նաև «Բուն պողոտայի» և դեպի Գառնի ու Սևանի ավազան տանող ճանապարհների առևտրական և ռազմավարական կարևոր հանգույցը պաշտպանող ամրոց: Հենց այս փուլում է արվել բլրի գագաթի հարթակն օղակող մեծազանգված քարերով շարված, կավե շաղախով ամրացված գետնախարսխի վրա բարձրացող հում աղյուսե պարսպագոտին: Պահպանվել են քառանկյուն հատակագծով և կիսաբոլոր կամ բոլորաձև աշտարակ-դիտակետերի կիսավեր հիմքերը: Հատվածաբար բացահայտված երդիկածածկ ընդհանուր սենյակների շուրջ խմբված և երկայնական միջանցքին հարող տնտեսական հարկաբաժիններով բնակելի կառուցների մնացորդները վկայում են քննվող ժամանակաշրջանում բլրի գագաթի հարթակի խիտ կառուցապատումը: Դվինը և իր մերձակա բնակավայրերը մ.թ.ա. II դ. ընդգրկված էին Արտաշատ մայրաքաղաքի կենսապահովման ոլորտում: Երասխ, Մեծամոր, Ազատ գետերով ոռոգվող բերրի տարածքը վերածվել էր նորաստեղծ մայրաքաղաքի տնտեսական ներուժն ապահովող շտեմարանի:

Հին սվաղի, ներկի, որմնանկարի հետքերով սրբատաշ սալերի, ճարտարապետական մանրամասների զանգվածաբար կրկնակի օգտագործման փաստը և անտիկ շրջանի (սպիտակ ավազաքարե, տուֆե, բազալտե, գրանիտե) տարբեր տրամաչափի տորաձև, «ատտիկյան», խորաքանդակ բուսազարդ գոտիով սյունախարիսխների առկայությունը Դվին բլրի հարավ-արևմտյան ստորոտի վաղ միջնադարյան (IV-VII դդ.) հոգևոր կենտրոնի վեհաշուք շինություններում՝ նախորդ

շրջանի ծիսական կառույցների գոյության անառարկելի փաստերն են: Այսինքն, Դվինի մ.թ.ա. I հազ. սկզբից ի վեր հայտնի հնամենի սրբավայրն իր գործառույթների որոշակի մասը պահպանել է նաև Արտաշիսյան և վաղ Արշակունյաց ժամանակաշրջաններում:

Մ.թ. 58 թ. Հայաստան ներխուժած հռոմեական զորահրամանատար Կորբուլոնը Արտաշատում ձմեռելուց հետո, 59 թ. գարնանը դեպի Տիգրանակերտ ռազմարշավի նախօրեին իրականացրեց ռազմավարական իր ծրագիրը: Նա հիմնահատակ կործանեց և հրիզեց երկրի քաղաքական կենտրոնի առանձնակի ռազմական կարևորություն ներկայացնող հենակետերը՝ հզոր Արտաշատ, արքունի ամրոց Գառնին և զորակայան Վարդգեսավանը (Վաղարշապատ), ինչպես նաև սրանց մատույցները հսկող Դվինի ամրոց-սրբավայրը: Դվինի ամայացած սրբավայրը ժամանակավորապես վերածվեց դամբարանադաշտի: Մ.թ. II դ. 60-ական թթ. Հայաստան ներխուժած հռոմեացիների համար՝ Վաղարշապատ-Արտաշատ-Գառնի զորակայանների միջև հաղորդակցության անվտանգությունը ապահովում էր «Բուն պողոտային» հարող Դվինի սրբավայրում տեղադրված հռոմեական բանակի բենեֆիցիարիուսների ուղեցույց-ուղեկալ պահակակետը (statio) իրեն բնորոշ «պաշտամունքային կառույցով» և Միթրային ձոնված զոհասեղանով (այս մասին տես՝ **Գ. Քոչարյան,** Դվինը վաղ Արշակունյաց շրջանում (Ուրվագծման փորձ), «Պատմա-բանասիրական հանդես», 2002, № 3, էջ, 209-213): Հռոմեական տիրապետության այս շրջանում ևս ակնհայտ է Դվին ամրաշինական հենակետի ռազմավարական որոշակի դերն ու նշանակությունը:

Այսպիսով, Արտաշատի հյուսիսային թիկունքի բնակավայրերի հոծ ցանցում Դվին ամրոց-սրբավայրի՝ *առևտրական և ռազմավարական կարևոր հանգույցի շահեկան դիրքը, աշխարհիկ և հոգևոր իշխանություն համատեղող գործառույթի տևականությունը, տնտեսական նշանակալի ներուժը,* ի թիվս հրատապ մի շարք այլ գործոնների, վճռորոշ նախադրյալներ հանդիսացան Խոսրով Կոտակ Արշակունու նախաձեռնությամբ մ.թ. 330-ականներին արքունիքը Արտաշատից Դվին տեղափոխելու համար:

Ա. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ

«Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի գիտական քարտուղար,
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Հայոց պատմության ամբիոնի վարիչ,
պ.գ.դ., պրոֆեսոր

# ԴՎԻՆԻ ՈՒՇԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ-ՎԱՂԵԿՐԱԹԵԴԱՐՅԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿՈՐԾԱՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ ՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1937 թ. սկիզբ առած և շուրջ ութ տասնամյակ պարբերաբար շարունակվող Դվին մայրաքաղաքի պեղումները մեծարժեք ու կարևոր նյութեր են տվել միջնադարյան Հայաստանի պատմության, մշակույթի, տնտեսության, սոցիալական կառուցվածքի, միջազգային առևտրի, հոգևոր կյանքի, կենցաղի և գործունեության այլ ոլորտների համակողմանի ուսումնասիրման համար: Սյս աշխատանքներում առաջնային դեր ու մեծագույն վաստակ ունի անվանի հնագետ, պատմաբան և թանգարանագետ Կարո Գրիգորի Ղաֆադարյանը: Մարդ, ով Դվինի հնագիտական արշավախմբի անփոփոխ ղեկավարել էր 1946-1976 թթ.:

Հենց նրա օրոք Դվինում բացված ուշբրոնզեդարյան – երկաթեդարյան հզոր բնակավայրի մնացորդները վկայում են, որ վաղմիջնադարյան Հայաստանի համար սոցիալ-քաղաքական և պատմամշակութային առանձնակի կարևորություն ունեցող քաղաքներն ու ավանները (առավել ևս նոր մայրաքաղաք Դվինը), գրեթե առանց բացառության, կառուցվել են հնագույն ժամանակներից ի վեր ռազմավարական, տնտեսական և կրոնական առումներով առանձնակի կարևորություն ունեցած բնակավայրերի տեղում և/կամ հիմքի վրա: Այս առումով Դվինի հնադարյան բնակավայրի մնացորդների համակողմանի ուսումնասիրությունն ու արդյունքների հիմնավոր մեկնաբանումը մշտապես եղել և մնում են մասնագետների ուշադրության կենտրոնում: Բանն այն է, որ և՛ Կ. Ղաֆադարյանի Դվինին նվիրված հոդվածներում ու գրքերում, և՛ Կ. Քուշնարյովայի 1977 թ. հրատարակած «Դվինի հնագույն հուշարձանները» ռուսալեզու մենագրության մեջ, որպես հաստատված փաստ է ներկայացվում այն վարկածը, թե Դվինի կարևոր կրոնական կենտրոն հանդիսացած հին բնակատեղին հիմնահատակ կործանվել է մ.թ.ա. VIII դ., ուրարտական արշավանքների հետևանքով: Մասնագետների կարծիքով, դրա օգտին են խոսում ինչպես հնավայրի այդ տեղամասում փաստված հրկիզումներն ու մոխրի հաստ

նստվածքը, այնպես էլ համապատասխան շերտից վերցված և 1970-ականներին ՍՍՀՄ ԳԱ Հնագիտության ինստիտուտի Լենինգրադի (ներկայումս՝ Սանկտ Պետերբուրգ) բաժանմունքի լաբորատորիայում հետազոտված օրգանական նյութերի մնացորդների $C^{14}$ –ի արդյունքները (դրանք ցույց են տալիս մ.թ.ա. 720 ± 70 թթ.):

Ձեռքի տակ առկա նյութերը հնարավորություն են ընձեռում նոր տեսանկյունից դիտարկելու Դվինի հնագույն բնակավայրի հիմնադրմանը, գոյատևման ժամանակահատվածին և կործանման պատճառներին առնչվող խնդիրները:

1. Դրանք թույլ են տալիս եզրակացնել, որ, ի տարբերություն ընդունված համընդհանուր կարծիքի, Դվինի հնագույն բնակատեղին հիմնադրվել է ոչ թե վաղ երկաթի շրջափուլում՝ այսինքն մ.թ.ա. XI-X դդ., այլ ավելի վաղ՝ մ.թ.ա. XV-XIV դդ.: Մասնավորապես այդ են վկայում շերտից հայտնաբերված և միանշանակ ուշբրոնզեդարյան պատկանելություն ունեցող խողովակակոթառ բրոնզե սակրը, բրոնզե միաձույլ դաշույնը, այսպես կոչված «կախեթյան» տիպի բրոնզե սրի մնացորդները, որոշ պերճանքի առարկաներ, զարդերի ձուլման քարե մի քանի կաղապարների մնացորդներ, խեցեղենի որոշ օրինակներ և այլն: Սրանք իրենց ուղղակի զուգահեռներն ունեն Կարմիր բլուրի մինչուրարտական բնակավայրի և Մեծամորի միջնաբերդի ուշբրոնզեդարյան (մ.թ.ա. XV-XIII դդ.) շերտերից հայտնաբերված նյութերում:

2. Իրոք, մ.թ.ա. II հազ. վերջում և մ.թ.ա. I հազ. սկզբին բնակավայրը հասել է իր ծաղկման գագաթնակետին և, դատելով հայտնաբերված նյութերից (ծիսական խեցանոթներ, պաշտամունքային կավե դրվագազարդ տախտակներ, միջերկրածովյան և պարսիցծոցյան ծովախեցիներ, հնոցի մնացորդներ, ապակու խարամ և այլն) կրոնական կարևոր կենտրոնի դեր պետք է որ ունեցած լինի Արարատյան դաշտավայրում:

3. Պեղված նյութերի համակողմանի ուսումնասիրության արդյունքները, մեր կարծիքով, թույլ են տալիս եզրակացնել, որ բնակավայրի անկումը, ըստ ամենայնի, վերաբերում է մ.թ.ա. IX դ. վերջին քառորդին, անկասկած ուղղակիորեն կապված է ուրարտական գործոնի, բայց ոչ ուրարտական զորաբանակների անմիջական արշավանքների հետ: Բանն այն է, որ Դվինի ուշբրոնզեդարյան-վաղեկրաթեդարյան բնակավայրի այրված շերտից վանտոսպյան (ուրարտական) մշակույթին պատկանող զենքերի, ասպազենի, խեցեղենի, իշխանական խորհրդանշանների (կնիքներ),

պերճանքի առարկաների (օձագլուխ ապարանջաններ, երկմետաղյա շիկղեր, շքասեղներ, վզնոցներ և այլն) որևէ օրինակ չի հայտնաբերվել: Ուրարտական թաղումներ չկան նաև Դվինի մերձակայքում բացված երկաթեդարյան դամբարաններում: Ինչն իսկապես առավել քան տարօրինակ է՝ ուրարտական զորաջոկատների կողմից Դվինի երկաթեդարյան բնակավայրի կործանման պարագայում: Այս ամենը ենթադրել է տալիս, որ այն պետք է որ կործանված լինի Վանի թագավորության (Ուրարտուի) հզորացման նախնական փուլում, թերևս Իշպուինիի և Մենուայի կառավարման շրջանում, ինչ-որ կողմնակի ուժի միջոցով:

4. Այս տեսանկյունից, թերևս, չի բացառվում, որ Դվինի ուշբրոնզեդարյան-վաղեկրաթեդարյան բնակավայրի կործանումը ժամանակագրական առումով համընկած լինի Իշպուինի և Մենուայի դեպի հյուսիս, թերևս Դիաուխի կատարած արշավանքին, երբ նրանց բանակների դեմ դուրս եկան Էթիունյան համադաշնության երկրները (Ուիթերուխին, Լուշան, Կատարզան, Էրիքուախին, Անաշե քաղաքը): Ըստ ամենայնի, մ.թ.ա. IX դ, վերջում Էթունյան համադաշնության մեջ մտնում էին նաև Արարատյան դաշտավայրի ցեղերն ու վաղպետական կազմավորումները և նրանց թվում, թերևս նաև Դվինի վաղերկեթեդարյան բնակատեղին: Ուրարտական սեպագիր տեքստերի մանրամասն ուսումնասիրությունը թույլ է տալիս ենթադրել, որ Արարատյան դաշտավայրի ոչ բոլոր վաղպետական կազմավորումներն են աջակցել Վանի թագավորության (Ուրարտուի) դեմ Էթիունյան համադաշնության պայքարին: Մեր կարծիքով, մ.թ.ա. IX դ. վերջին քառորդին այդպիսի դիրքորոշում կարող էր դրսևորել Արգիշթի I-ի, Սարդուրի II-ի և Ռուսա II-ի տեքստերից հայտնի Ազա(նի)-Ուազա–Վազա երկիրը, որը Իշպուինիի ու Մենուայի դեմ ծավալվող մարտական գործողություններին թերևս չմասնակցելու պատճառով էլ, չի հիշատակվում ուրարտացիների դեմ ելած էթիունյան երկրների շարքում: Ուստի հավանական է ենթադրել, որ օգտվելով մ.թ.ա. IX դ. վերջին քառորդին Արարատյան դաշտավայրն ամբողջությամբ Վանի թագավորության (Ուրարտուի) կազմում ներառելու չիրականացված հնարավորությունից, Էթիունյան ուժերը պատժիչ գործողություն են կազմակերպել Ազա երկրի դեմ և հենց այդ ժամանակ կործանել, թերևս նրա կազմում գտնված, Դվինի երկաթեդարյան բնակատեղին ու կրոնական կենտրոնը: Այս ենթադրությանը որպես հիմնավորում կարելի է բերել այն հանգանանքը, որ արդեն մ.թ.ա. VIII դ. առաջին քառորդին Արգիշթի I-ի կողմից Արարատյան դաշտավայրի

գրավումից հետո, հավանաբար Ազա երկրի աջակից կառավարիչին սիրաշահելու նպատակով, ուրարտացի արքան նրա տարածքում, թեև չի վերականգնել Դվինի երկաթեդարյան կրոնական կենտրոնը, սակայն կառուցել է մի մեծ, բարգավաճ ու հզոր քաղաքամրոց և այն անվանել ուրարտացիների համար ոչ սովորական ***Էրեբունի*** անվամբ: Այս առումով, պետք է նշել, որ Էրեբունին միակ քաղաքամրոցն է, որ չի կրում ուրարտական գերագույն աստվածներից (Խալդի, Թեյշեբա) որևէ մեկի, կամ հիմնադիր թագավորի անունը (թեև այդ ավանդույթը կար արդեն Մենուայի ժամանակներից): Այն, ըստ ամենայնի, ազայական ծագում ունի և իր գոյությամբ, թերևս, խորհրդանշել է խնամիական կապ Արգիշթի I-ի և Ազա երկրի կառավարչի միջև (չի բացառվում, որ ուրարտացի արքան կնության է առել վերջինիս քրոջը կամ դստերը): Սրան որպես նախնական հիմնավորում ուզում ենք բերել Էրեբունի անվան ստուգաբանություններից մեկը, ըստ որի, դրա հիմքում կարող է ընկած լինել աքքադերենից հնդեվրոպական նախալեզվին (մասնավորապես՝ խեթերենին) անցած **«errēbu»** բառը և այն պայմանավորող սրբազան ծեսը: Ըստ վերջիններիս, դա ամուսնական կոնկրետ արարողակարգ էր, երբ «ամուսինը՝ փեսան, գնում էր կնոջ՝ հարսի տուն» (այսինքն ժամանակավորապես դառնում էր տնփեսա): Թերևս հենց դրանով կարելի է բացատրել այն պալատական շքեղությունն ու տաճարական կառույցների բազմությունը (Խալդի աստծո տաճար, Իվարշա աստծո susi, որը տեղական աստվածություն է և չկա Միհերի դռան դիցանվանացանկում, մեկ այլ susi-ի մնացորդներ), որ ստեղծել էր Արգիշթի I-ը Էրեբունիում:

Ազա երկրի կազմում Դվինի ուշբրոնզեդարյան-երկաթեդարյան բնակավայրի գտնվելը, ինչպես նաև դրանից բխող ուրարտա-ազայական խնամիական կապի վարկածը դեռևս խիստ նախնական բնույթ ունեն և երկարատև ու առավել հիմնավոր քննարկումներ են պահանջում:

Այսուհանդերձ, վաստակաշատ հնագետ, պատմաբան, վիմագրագետ և թանգարանագետ Կ. Ղաֆադարյանի շուրջ կես դար առաջ արած հայտնգործումներն այսօր էլ մնում են արդիական և լուրջ գիտական ուսումնասիրությունների սկզբնաղբյուր: Սա մեծագույն վաստակն ու ավանդն է մի մարդու, ով իր ողջ կյանքն անմնացորդ նվիրաբերել է հայրենի երկրի բազմադարյան պատմության, մշակույթի ու արվեստի վեր հանման, ուսումնասիրման և հանրահռչակման սրբազան գործին:

**ՀԱՅԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ**
ԵՊՀ հնագիտության ամբիոնի վարիչ, պ.գ.դ.
**ԱՐՏԱԿ ԳՆՈՒՆԻ**
ԵՊՀ հնագիտության ամբիոնի դասախոս, պ.գ.թ.
**ԱՐՄԵՆ ԲՈԲՈԽՅԱՆ**
ԵՊՀ հնագիտության ամբիոնի դասախոս, պ.գ.թ.

# ԴՎԻՆԻ ԵՐԿԱԹԵԴԱՐՅԱՆ ՄԱՐԴԱԿԵՐՊ ՔԱՆԴԱԿԸ

Ականավոր հայ հնագետ Կարո Ղաֆադարյանի հսկայական գիտական ժառանգությունն արդեն մի քանի տասնամյակ է ինչ իր արժանի տեղն է գտել հայ հնագիտության գանձարանում: Այսօր, մեծանուն գիտնականի մահվանից ավելի քան չորս տասնամյակ անց, այն չի կորցրել իր արդիականությունը: Այս իմաստով կարևոր սկզբնաղբյուր են Հայաստանի միջնադարյան մայրաքաղաք Դվինի հետազոտությունների արդյունքները, որի պեղումները թույլ են տալիս լուսաբանել Հայաստանի հնագույն և միջնադարյան պատմության բազմաթիվ խնդիրներ:

Ներկայացվող հաղորդումը նվիրված է Դվինում հայտնաբերված մարդակերպ քարե կոթողների մի քանի նմուշների մեկնությանը: Դարերի ընթացքում հանդիսանալով Արարատյան դաշտավայրի առանցքային բնակավայրերից մեկը, Դվինը հանդիսանում էր նաև պաշտամունքային կենտրոն, և, այդ իմաստով, պատահական չէ, որ այստեղ հայտնաբերվել են բազմաթիվ քանդակներ, որոնց կարելի է բաժանել մի քանի խմբի:

*Առաջին խումբը* ներկայացնում են դամբարանային քարերի վրա բարձրաքանդակ եղանակով կատարված պատկերները: Դրանցից մեկը պատկերում է որսի տեսարան, իսկ մյուսը ձեռք ձեռքի տված այր և կնոջ: Վերլուծելով այս պատկերները Կ. Ղաֆադարյանն առաջինում տեսնում է զուգահեռներ Աղցքի քանդակների հետ, իսկ երկրորդի կապակցությամբ նշում է, որ նման պատկեր չկա Աղցքում և չի էլ կարող լինել, քանզի, ըստ պատմական սկզբնաղբյուրների, այնտեղ ամփոփված էին և՛ քրիստոնյա, և՛ հեթանոս թագավորների ոսկորները: Երկրորդ բարձրաքանդակի վերլուծությունը թույլ է տալիս կատարել մի շարք ենթադրություններ, որոնք կարող են առնչվել ինչպես հուշարձանի կերտման ժամանակաշրջանին, այնպես էլ նրա պաշտամունքային իմաստին: Զուգային

պատկերը որոշակի զուգահեռներ ունի Չեչնիայի հյուսիս-արևելքից հայտնաբերված կողք կողքի կանգնած ողջագուրված տղամարդկանց (եղբայրացածների) արձանիկում և Կոմունտայից հայտնաբերված իրար կցված արձանիկներում: Վերջինիս դվինյան արձանիկին մոտեցնում է մարմինների խիստ ոճավորված պատկերը: Հյուսիսկովկասյան այս երկու նմուշն էլ թվագրվում են մոտավորապես մ.թ.ա. I հազ. երկրորդ քառորդով: Միևնույն ժամանակ, քանդակի գլուխների ոճավորվածությունը կարծես շարունակում է տեղական՝ մ.թ.ա. III հազ. սկիզբ առնող ավանդույթները, մասամբ հիշեցնելով նաև եռանկյունաձև գագաթով մենհիրները (Հարժիս, Այլաղ): Ինչ վերաբերում է պաշտամունքային նշանակությանը, ապա պետք է նշել, որ այր և կնոջ (կամ նրանց խորհրդանիշների) պատկերը թաղումային համալիրներում հազվադեպ երևույթ չէ հին հասարակություններում և խորհրդանշում է սակրալ ամուսնությունն անդրաշխարհում:

*Երկրորդ խումբը* ներկայացված է մարդակերպ ծավալային քանդակներով: Ողջ բազմազանությամբ հանդերձ այս քանդակները կարելի է պայմանականորեն բաժանել մի քանի տիպերի: Առաջին տիպի քանդակը պատկերում է կնոջը. իրանը ուղղանկյուն է, դեպի ներքև նեղացող, մարմնի ուրվագծերը չեն դիտարկվում, գլուխը՝ հնգանկյուն է, շեշտված են կանացի սեռական հատկանիշները: Իր համամասնություններով այս արձանին առավել մոտ է կանգնած Արգիշտիխինիլիից հայտնաբերված և ուրարտական շրջանով թվագրվող տղամարդու կուռքը: Հայաստանից հայտնաբերված մարդակերպ արձանիկներում այն սովորաբար պատկերվում է փոսիկի կամ եռանկյունու ձևով: Դվինի կուռքին բնորոշ պատկեր հայտնի է Քյորլիքյոյից և Թեփե Յահյայից: Ընդհանուր ձևաբանական զուգահեռների տեսանկյունից կարելի է հիշատակել մենհիրների մի խումբ Հարժիսից և Գյաուր Դամերից (լավ մշակված, համեմատաբար կարճ, լայն հիմքով ուղղանկյուն կոթողներ):

*Երրորդ խումբը* ներառում է կանացի արձանները: Դրանք գլանաձև իրանով, մասամբ հարթեցված դիմային հատվածով արձաններ են, որոնց բնորոշ գծերից են ձեռքի մատների ընդգծումը և լանջազարդերը: Նման քանդակներ առկա են Հայաստանից հայտնաբերված տարբեր վայրերում. մասնավորապես ընդգծված մատերով և կրծքից ներքև ծալված ձեռքեր ունի Կոթիից հայտնաբերված կոթողը, իսկ կրծքազարդ կա Օշականի կոթողներից մեկի վրա: Սակայն Դվինի նշված կոթողներին

առավել մոտ են Հարժիսից հայտնաբերված կուռքերը: Ընդ որում, հարժիսյան կուռքերի այս խումբը ուղղակի զուգահեռներ ունի միայն Դվինում: Որոշակի ընդհանրություններ են դիտարկվում սկյութական կոթողների հետ (մարմնի մանրակրկիտ վերարտադրությունը, զարդեղենը), սակայն Դվինի և Հարժիսի կանացի արձաններում բացակայում են սկյութական կանացի կերպարներին բնորոշ հիմնական ատրիբուտները (օր.՝ հայելին): Հետևաբար ենթադրելի է այս կոթողների տեղական ծագումը:

*Չորրորդ խումբը* կազմում են գլխաքանդակները, որոնցից յուրաքանչյուրն ունի որոշակի առանձնահատկություն: Այսպես, դրանցից մեկում հարթաքանդակ եղանակով կատարված քիթը գտնվում է ոչ թե ճակատի հետ նույն հարթության վրա, ինչը բնորոշ է Հայաստանի երկաթեդարյան քանդակին, այլ որոշակիորեն դուրս է ցցված (հմմտ. Շաղատից, Թեյշեբաինիից, Ծաղկալանջից հայտնաբերված կոթողները): Բացի այդ, Դվինի գլխաքանդակների ականջները նմանվում են ոչ թե Կարմիր Բլուրի և Այգեշատի (մեկ կամ ավելի փորագիր շրջանակներ), այլ՝ Հարժիսի կոթողների բարձրաքանդակ ականջներին: Իր կերտման առանձնագիատկություններով աչքի է ընկնում գլանաձև հիմքի վրա կերտված գլխաքանդակը, որի ամենամոտ զուգահեռն է Ծովագյուղից հայտնի գլխաքանդակը: Քանդակներից մեկի մոտ բացակայում է քիթը և այդ իմաստով այն չունի զուգահեռներ Հայաստանից հայտնաբերված կոթողներում:

Կ. Ղաֆադարյանը կարևոր տեղ է հատկացնում այն հարցին թե ում էին պատկերում նշված կոթողները: Նշված հարցն առ այսօր համարվում է առավել քննարկվողներից: Հրապարակին եղած տեսակետներն ընդհանուր առմամբ կարելի է բաժանել երկու հիմնական խմբի: Այսպես, սկյութական հուշարձանների օրինակով որոշ հետազոտողներ ենթադրում են, որ դրանք պատկերում են իրական մարդկանց: Երկրորդ տեսակետի կրողները նշում են, որ այդ կարգի կոթողները՝ աստվածների արձաններ են: Այլ հեղինակներ կարծում են, որ քանդակները պատկերում են սրբագործված նախնիների: Ըստ Կ. Ղաֆադարյանի՝ Դվինի արձանները պատկերում էին ոչ թե աստվածների, այլ տոհմերի առաջնորդների կամ նախնիների, կապված նրանց պաշտամունքի հետ: Այս հայեցակարգի որոշակի հաստատում կարելի է համարել ֆալիկ կոթողի գտածոն Դվինից: Թեպետ այն գտնվել էր տեղաշարժված վիճակում, սակայն Կ. Ղաֆադարյանն իրավացիորեն ենթադրում է, որ դրանք պետք է

տեղադրված լինեին դամբարանների վրա: Պետք է նշել, որ թեպետ այս կոթողի գտնվելու պահին ֆալիկ կոթողները դամբարանային համալիրներում հայտնի էին եզակի օրինակներով (Սևանա լճի ավազան, Կարմիր Բլուր), սակայն հետագա գտածոները (Հառիճ, Օշական, Այգեշատ) փայլուն կերպով հաստատեցին Կ. Ղաֆադարյանի տեսակետը:

Այսպիսով, Դվինի մարդակերպ քանդակի վերլուծությունը վկայում է տալիս երկաթեդարյան (Ք.ա. XII-VII դդ.) քանդակագործության զարգացման ուղիների բազմազանությունը, ինչը հետևանք էր ոչ միայն կրոնական պատկերացումների բարդ համակարգի գոյության, այլև մշակութային կապերն ապահովող բազմաթիվ ուղիների առկայության: Դվինի առնչություններն քանդակի տեսանկյունից հատկապես նկատելի են Սյունյաց աշխարհի, մասնավորապես Հարժիսի հետ, ինչը, կարծում ենք, պատահական չէ. և՛ Դվինը, և՛ Հարժիսը Արևելյան Հայաստանի երկաթի դարի կարևոր կենտրոններն էին և նույն հաղորդակցական համակարգի բաղկացուցիչները:

ՌՈԲԵՐՏ ՂԱԶԱՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ԱԻ, պ.գ.թ.

# ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀԻ ԱՐՆՄՈՒՏՔԻ ՄԻ ՔԱՆԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԽԵԹԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

Հնագույն ժամանակներից Հայկական լեռնաշխարհի և Փոքր Ասիայի ժողովուրդների և երկրների միջև եղել են մշակութային, քաղաքական և առևտրական փոխառնչություններ: Խեթական տերության շրջանում (մ.թ.ա. XVIII - XIII դդ.) այդ փոխառնչությունները դարձել էին առավել ակտիվ: Խեթական տերության կազմի մեջ էին մտնում նաև Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածի զգալի տարածքներ: Մի շարք խեթական երկրամասեր և քաղաքներ աշխարհագրական առումով շփման գոտի էին հանդիսանում Հայկական լեռնաշխարհի և Փոքր Ասիայի միջև: Այդ շփման գոտում էին քաղաքներ, որոնք կարևոր դերակատարում են ունեցել տարածաշրջանի քաղաքական, մշակութային և տնտեսական կյանքում: Այդ քաղաքներից էին՝ Սարիսսան, Սամուխան և Կուսսարը:

Խեթական պետության արևելքում գտնվող կարևորագույն կենտրոններից մեկն էր Սարիսսա (Սարեսսա) քաղաքը: Քաղաքի տեղադրության վերաբերյալ հնչել են տարբեր կարծիքներ, սակայն այսօր խեթագետները հակված են տեղորոշել այն ներկայիս Քուշաքլը հնավայրում, որը գտնվում է պատմական Փոքր Հայքի տարածքում, Անտիտավրոսի լեռների մերձակայքում, ներկայիս Սեբաստիայի նահանգում (Սեբաստիա քաղաքից մոտ 60 կմ հարավ): Հնավայրի միջնաբերդի արևմտյան մասում գտնվող մի շինությունից հայտնաբերվել է սեպագիր արձանագրությունների դիվան (մեծությամբ չորրորդ խեթական դիվանն է, որը, հավանաբար, կազմվել է Թուդխալիյա III-ի կամ Սուպպիլուլիումա I-ի ժամանակաշրջանում (մ.թ.ա. XIV դ. II կես): Քաղաքում եղել է նաև արքայական պալատ: Կարող ենք նշել, որ Սարիսսան միջին մեծության խեթական քաղաք էր (հավանաբար, ունեցել է մոտ 5000 բնակիչ), զբաղեցրել է մոտ 18 հեկտար տարածք: Առկա հնագիտական նյութը հնարավորություն է տալիս ենթադրել, որ Սարիսսան բնակեցված է եղել առնվազն խեթական Հին թագավորության ժամանակներից (սկսած մ.թ.ա. XVI դարից): Այն մասնակի ավերվել է մ.թ.ա. XIV դ. առաջին կեսին (գուցե Առնուվանդա I-ի օրոք), վերականգնվել է կա՛մ Թուդխալիյա III-ի, կա՛մ

Սուպպիլուլիումա I-ի օրոք: Սարիսսայի հնավայրում նոր ավերման հետքերը վերաբերում են Խեթական տերության անկման ժամանակաշրջանին: Քաղաքն աստիճանաբար լքվել է արդեն մ.թ.ա. XIII դ. վերջին: Սարիսսայի միջնաբերդի որոշ կառույցներ այրվել են, ինչը խոսում է այն մասին, որ քաղաքը հարձակման է ենթարկվել և գրավվել: Մ.թ.ա. VII-VI դդ. քաղաքի տարածքի մի մասը նորից է բնակեցվել: Այնուհետև բնակավայրը լքվել է վերջնականապես:

Խեթական պետության հյուսիսարևելյան մասի կարևորագույն վարչական ու հոգևոր կենտրոններից մեկն էր նաև Սամուխա քաղաքը, որի մասին հիշատակություններ կան նախախեթական և խեթական ժամանակաշրջանից: Սամուխայում կար նաև ասորեստանյան վաճառականների կայան (*wabartum*): Հետագայում Սամուխան բազմիցս հիշատակվել է նաև խեթական աղբյուրներում: Խեթական պետության ժամանակաշրջանում քաղաքը ծաղկում է ապրում և՛ որպես վարչական, և՛ որպես հոգևոր կենտրոն: Սամուխան նաև Խաթթիի ժամանակավոր մայրաքաղաքն էր Թուդխալիյա III-ի կառավարման ժամանակաշրջանում (մ.թ.ա. մոտ 1360-1344 թթ.), երբ Խաթթիի տարածքի զգալի մասը (նաև նրա մայրաքաղաք Խաթթուսան) կա՛մ գրավվել էր, կա՛մ դուրս էր եկել Խաթթիի արքայի վերահսկողությունից, և նա ստիպված էր իր արքունիքով տեղափոխվել այդտեղ: Համենայն դեպս, քաղաքը խեթական արքա Թուդխալիյա III-ի և արքայազն Սուպպիլուլիումայի համար շուտով դառնում է այն հենակետը, որտեղից նրանք սկսում են Խաթթիի հզորության և տարածքային ամբողջականության վերականգնման գործընթացը: Սամուխան հիշատակվել է նաև Թուդխալիյա III-ին հաջորդած Սուպպիլուլիումա I-ի (մ.թ.ա. 1344-1322 թթ.) «տարեգրություններում», ինչպես է նաև՝ Մուրսիլի II-ի (մ.թ.ա. 1321-1295 թթ.) «Տասնամյա» տարեգրության հինգերորդ տարում: Քաղաքը կարևոր դեր է խաղացել նաև Մուրսիլի III-ի (Ուրխի-Թեշուբ) (մ.թ.ա. 1272-1267 թթ.) և նրա հորեղբայր Խաթթուսիլիի միջև տեղի ունեցած գահակալական պայքարի ընթացքում: Խեթական տերության անկումից հետո (մ.թ.ա. XIII դ. վերջ - XII դ. սկիզբ) Սամուխայի մասին հիշատակությունները դադարում են:

Քաղաքը այսօր մասնագետների մեծ մասը տեղորոշում են Սեբաստիայի նահանգում՝ Քայալըփընար բնակավայրի մոտ գտնվող հնավայրի տեղում: Այն զբաղեցնում է մոտ 20 հեկտար տարածք և գտնվում է Հալիս գետի հյուսիսային ափին՝ Սեբաստիայից մոտ 45 կմ հարավ-արևմուտք: Հնավայրի պեղումների ժամանակ

հայտնաբերվել են միջին և ուշ բրոնզեդարյան ժամանակաշրջանով թվագրվող գտածոներ: Վաղխեթական ժամանակաշրջանով (մ.թ.ա. XVIII-XVI դդ.) թվագրվող շերտում հայտնաբերվել են ավերման հետքեր: Որոշ ժամանակ անց վայրը նորից բնակեցվել է և շրջապատվել ավելի ամուր ու լայն պարիսպներով: Սա խոսում է այն մասին, որ Սամուխան կարևոր դիրք է զբաղեցրել Խաթթիին հյուսիս-արևելքից և հյուսիսից եկող վտանգներին դիմագրավելու ճանապարհին, ու խեթերն այն ամրացրել են: Բնակավայրն ավերվել է նաև նորխեթական ժամանակաշրջանում: Կարելի է կարծել՝ որ այն հետևանք է հայասացիների ներխուժման, որն արձանագրվել է խեթական KBo VI 28 տեքստում: Այստեղ տրված է, որ նրանք արշավել են դեպի Վերին երկիր և քաղաքը դարձրել իրենց սահման:

Խեթական վերջին տիրակալների (Առնուվանդա III, Սուպպիլուլիումա II) ժամանակաշրջանի տեքստերում չկան քաղաքի վերաբերյալ հիշատակություններ: Հավանական է, որ այն ավերվել է կասկերի կողմից Խեթական տերության անկման ժամանակ, քանի որ ավելի ուշ ժամանակաշրջանում տեսնում ենք կասկերի հիշատակությունը Վերին երկրից հարավ ընկած տարածքներում՝ Մելիդ (հետագայի Մալաթիայի շրջան) և Թաբալ (հետագայի Կապադովկիայի տարածքը) երկրների մոտ:

Խեթական տերության արևելյան հատվածի կարևոր կենտրոններից մեկն էր նաև Կուսսար քաղաքը, որը հիշատակվել է որպես նեսիական (խեթական) պետության առաջին մայրաքաղաք: Կուսսարի (Կուսսարայի) մասին հիշատակություններ կան և՝ «կապադովկյան», և՝ խեթական աղբյուրներում: Կապադովկյան կամ հինասորեստանյան առևտրական աղբյուրներից մենք տեղեկանում ենք, որ ասորեստանյան վաճառականների առևտրական գաղութ (կարում) գոյություն ուներ քաղաքում: Քաղաքը սակայն հայտնի է նրանով, որ այստեղից է սկիզբ առել խեթական արքայական տոհմը և պետականությունը: Խեթական առաջին հիշատակված արքան Պիթխանան է (մ.թ.ա. XVIII դ.), որի պետության կենտրոն է հանդիսացել Կուսսարան: Իր կառավարման տարիներին նա նվաճել է Քանեսը (Նեսան)՝ տարածաշրջանում ասորեստանյան առևտրականների կենտրոնը: Այդ ամենից հետո կուսսարյան արքայատոհմը իր պետության կենտրոնը տեղափոխում է Քանես, իսկ Կուսսարան մնում է որպես արարողակարգային քաղաք: Արդեն Պիթխանայի հաջորդ Աննիտայի օրոք (մ.թ.ա. XVIII դ.) խեթերը նվաճում են խաթերի

մայրաքաղաք Խաթթուսան (Խեթական տերության ապագա մայրաքաղաքը) և ավերում են այն: Կուսսարան հետագայում հիշատակվել է նաև որպես խեթական արքա Լաբարնայից սերված արքայատոհմի կենտրոն: Նրան հաջորդած Խաթթուսիլի I-ը (մ.թ.ա. մոտ 1650-1620 թթ.), նույնպես հիշատակվել է, որպես «Կուսսարի մարդ», այսինքն նրա պետության կենտրոնը սկզբնապես Կուսսարն էր: Հետագայում նա իր պետության մայրաքաղաքը տեղափոխեց Խաթթուսա քաղաք, որը մի քանի դար մնաց որպես Խեթական տերության մայրաքաղաք: Այնուամենայնիվ իր կյանքի վերջին շրջանը նա անց է կացրել Կուսսարում, որտեղ էլ իր թոռանը՝ Մուրսիլիին նա հռչակել է որպես իր հաջորդ գահակալ: Կուսսարի տեղադրությունը հստակ չէ, քանի որ առայժմ ոչ մի հնավայր հստակ չի նշվում որպես Կուսսարի գտնվելու վայր: Դատելով հին ասորեստանյան և խեթական տեքստերից այն գտնվել է Քանես քաղաքից արևելք կամ հյուսիսարևելք, ամենայն հավանականությամբ Անտիտավրոսի լեռների շրջանում, հետագայի Փոքր Հայքի տարածքում:

Ամփոփելով կարելի է նշել, որ Խեթական պետության հյուսիսարևելյան երկրամասի՝ Վերին երկրի քաղաքներից Սարիսսան բավական մոտ էր Հայկական լեռնաշխարհի տվյալ ժամանակաշրջանի (մ.թ.ա. XVI - XII դդ.) պետություններին՝ Հայասային, Իսուվային, և բնական է, որ տնտեսական կապեր է ունեցել այդ պետությունների քաղաքների հետ: Քաղաքը մոտ էր նաև Խաթթիի արևելյան մասում գտնվող կարևորագույն քաղաքներին՝ Սամուխային և Կուսսարին: Այն մինչ օրս հայտնաբերված խեթական քաղաքներից լավագույնս պահպանվածներից է, որը բազմաթիվ հետաքրքիր նյութեր է տրամադրել խեթագետներին: Այն նաև հայտնաբերված խեթական քաղաքներից առավել բարձրադիրներից մեկն էր և կարևոր տնտեսական ու ռազմական նշանակություն ուներ: Քաղաքը նաև Խաթթիի արևելյան շրջանների կարևորագույն ռազմական հենակետերից մեկն է հանդիսացել՝ պաշտպանելով Խաթթիի կենտրոնական շրջանները արևելքից (Հայկական լեռնաշխարհից) եկող վտանգներից: Որպես հոգևոր նշանավոր կենտրոն՝ քաղաքում է գտնվել նաև խեթական կարևորագույն աստվածներից մեկի՝ Սարիսսայի Ամպրոպի աստծո պաշտամունքի վայրը: Տարածաշրջանի մյուս կարևոր կենտրոն Սամուխան Խեթական պետության հյուսիսարևելյան մասի վարչական և հոգևոր կենտրոնն էր: Խեթական պետության ժամանակաշրջանում քաղաքը ծաղկում է ապրում և՛ որպես վարչական, և՛ որպես հոգևոր կենտրոն: Այն Իշտար աստվածուհու պաշտամունքի

գլխավոր կենտրոնն էր Խաթթիում. ժամանակավորապես եղել է վերջինիս մայրաքաղաքը: Կուսսարը, Խեթական տերության նախնական կենտրոնը, նույնպես գտնվել է Հայկական լեռնաշխարհի արևմուտքում ու կարևոր դերակատարում է ունեցել տարածաշրջանի քաղաքական զարգացումներում:

ԱՐՏԱՎԱԶԴ ԶԱՔՅԱՆ

«Մեծամոր» պատմահնագիտական
արգելոց-թանգարանի վարիչ

# ԴԱՄԲԱՐԱՆԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՎԵՐԱՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՄԵԾԱՄՈՐՈՒՄ

(նախնական դիտարկումներ)

Մեծամորի բրոնզ – երկաթեդարյան բնակատեղիի և նրա դամբարանադաշտի համակողմանի հետազոտությունները մշակութային, սոցիալական, տնտեսական և այլ բնույթի վերակազմությունների հնարավորություններ են ընձեռում: Շուրջ կեսդարյա հետազոտությունների ընթացքում Մեծամորի դամբարանադաշտում պեղվել են շուրջ 120 դամբարաններ և 18 դամբանաբլուրներ:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Մեծամորի դամբարանադաշտը ձևավորվել է միջին բրոնզի դարաշրջանում, մ.թ.ա. XIX/XVIII – XVI դդ., թեև բլրի գագաթին, վաղբրոնզեդարյան շրջանաձև հատակագծով կացարանի հատակին, բացվել է ժայռափոր եզակի դամբարան: Մեծամորի միջինբրոնզեդարյան դամբարանները հիմնահողային և քարարկղային են: Թաղումներն անհատական են, իրականացվել են դիադրման եղանակով: Հանգուցյալի համար նախատեսված իրերը հիմնականում դրվել են գլխավերևում, իսկ զենքերը, աշխատանքային գործիքներն ու պերճանքի առարկաները (եթե դրանք առկա են)՝ ձեռքերի և իրանի վերին հատվածի շրջանում: Ըստ ամենայնի, այդ փուլի քարարկղային դամբարաններում հուղարկավորվել են տվյալ հասարակության մեջ ավելի բարձր կարգավիճակ ունեցող անձինք: Նման ենթադրության հիմնական կռվանը՝ առավել մեծ ջանք ու միջոցներ պահանջող քարարկղային դամբանախցերի, դրանց շրջափակող կրոմլեխների կառուցումն է, քարահողային զանգվածեղ դամբանաթմբի ստեղծումը, ինչպես նաև խցերում մշտապես մեծաքանակ, հարուստ և ճոխ գույքակազմի առկայությունը:

Մեծամորի ուշ բրոնզի և վաղ երկաթի շրջափուլերի դամբարանային համալիրները քարաշար կրոմլեխներով, մեծ ու փոքր ծածկասալեր կրող՝ հիմնահողային, քարարկղային և սալարկղային խցերով, տարբեր ուղղվածություն ունեցող (հյուսիս – հարավ և արևելք – արևմուտք մոտավոր կողմնորոշմամբ)

դամբարաններ են, որոնք տեղակայված են միջնաբերդից արևելք, հյուսիսարևելք և հարավարևելք:

Դամբարանադաշտում առանձնանում են ինչպես ավելի վաղ՝ միջին բրոնզի շրջափուլում կառուցված դամբարանների վերաօգտագործում ուշ բրոնզի շրջափուլում, այնպես էլ վաղ երկաթի շրջափուլում դրանցում նոր հուղարկավորությունների իրականացում, ինչն ուղեկցվել է նախորդ շրջանի հարուստ թաղումների գույքի թալանով, հանգուցյալների ոսկորների տեղափոխումով, կամ էլ դամբարաններում հուղարկավորումները կատարվել են շերտ առ շերտ: Նման պատկեր է նաև ուրարտական ժամանակաշրջանին վերաբերող դամբարանային կառույցներում:

Ուշբրոնզ - վաղերկաթեդարյան դամբարանային կառույցներում առանձնանում են ինչպես ուրարտական կարմիր փայլեցված խեցեղենով, պերճանքի առարկաներով և իշխանության խորհրդանիշ կնիքների ուղեկցությամբ վերաթաղումներ, այնպես էլ այսպես կոչված «տեղայնական» խեցեղենի և այլ պարագաների գույքակազմով թաղումներ:

Դամբարանադաշտում չեն փաստագրված մ.թ.ա. VI դ. ուշ թվագրվող թաղումներ: Մեծամորի քաղաքային թաղամասերի տարածքը (գոնե թե նրա որոշ հատվածներ) անբնակ են եղել մի տևական ժամանակահատված և տեղ-տեղ օգտագործվել են անտիկ թաղումների համար:

**MIQAYEL BADALYAN**

Head of the “Karmir Blur” branch of the
“Erebuni” Historicl & Archaeological Museum-Reserve

## KARMIR BLUR: RISKS, CHALLENGES AND PERSPECTIVES

Karmir Blur is situated on the north-western outskirt of Yerevan, the capital of Republic Armenia. It is one of the branches of the “Erebuni” Historical & Archaeological Museum-Reserve of Yerevan Municipality. Because of the reddish earth (parts of burnt mud-brick superstructure) covering the site, the local people called the hill Karmir Blur (Red hill). Systematic excavations of the settlement started in 1939 and with some intervals (1941-1945) continued until 1971. The success and leading excavations are connected with the name of the famous Soviet archaeologist, former director of the State Hermitage Museum, Boris Borisovich Piotrovskij. As a result of the excavations, the Urartian two-floored fortress was opened. It was clear that the fortification walls of the fortress consisted of stone blocks and rising mud-brick super structure. The Urartian outer town was unearthed to the south-west of the fortress. The results of excavations showed that at least one part of outer town was built on the basis of pre-Urartian settlement. The necropolis of the settlement is situated to the south-east of the outer town. The Urartian settlement was built in the first half of the VII century B. C. by Rusa II, the last powerful monarch of the state. Thanks to the Urartian inscription of a bronze door bolt with a ring found during excavations, it was verified that the name of this Urartian city was Teishebaini. The Urartian monarch founded the settlement in honor of the weather god Teisheba of the state pantheon. Also the bronze figurine of that god was found there. The excavations of Karmir Blur are an important contribution both to the Urartian and the Ancient Near Eastern Archaeology. During excavations very important structures (such as storerooms with pithoi) and huge amount of artifacts (stone inscription, cuneiform clay tablets, metal objects, etc.) were discovered. The finding of well-preserved mud-brick walls of this height is a rare phenomenon for the Republic of Armenia.

During the Soviet era, Karmir Blur was considered as a fascinating tourist site. Some areas of the settlement were covered with green zones. But after the collapse of the Soviet Union, especially during first 15 years of Armenia’s independence, the settlement was damaged. We need to emphasize that the territory of the settlement is not fenced. That is why many areas of Karmir blur were periodically filled with garbage and useless row-materials. Thus, some parts of it, as well as almost all of the outer surrounding area were filled with garbage. Besides, animals especially cows and sheep, had access to the settlement and destroyed it. Even now, drug addicts

are able to enter the site by night. This is highly worrisome. On the other hand, the fallen parts of the injectors are a big danger to both local people and tourists.

Alas, the territory, where the site is guarded (almost 40 acres), is under the responsibility of only one policeman. Of course, that kind of guarding resource is far from being satisfactory for such an important and big site as Karmir Blur. Modern cemetery located to the south of the site periodically enlarges its territory on the expense of Karmir blur.

There are very worrisome factors related to the preservation of the Urartian fortress. Here, we must also mention that an unfinished tunnel is built in the northern slope of the hill. That tunnel runs just under the Urartian fortress. According to a Soviet project, a canalization tube within the tunnel was to be installed. One of the ends of that tunnel is situated to the west of the Urartian fortress. At present the tunnel is deteriorating, which is extremely dangerous for the fortress. If the tunnel is not reinforced, part of the Urartian fortress will collapse.

Another serious problem is the preservation and restoration of the mud-brick superstructure. Until 2007, not far from the site, there was a small museum where some artifacts found from Karmir Blur were exhibited. In 2007 the roof of the museum partially crashed and hasn't been restored yet. As a result, all archaeological objects were moved to the Erebuni Museum. The restoration and re-opening of the museum will significantly contribute to the public awareness of the site.

The new highway (part of the North-South highway) funded by the Asian Development Bank, will run through the southwestern part of Karmir Blur. For this purpose, excavations have been carried out in this area for 4 years already. The construction of the highway will serve as a fence and will protect the essential part of the site and block the planned expansion of the modern cemetery.

Now the "Erebuni" Historical & Archaeological Museum-Reserve is designing several projects to solve the above mentioned problems. Unfortunately, the limit of financial sources causes a number of obstacles. Any kind of contribution to this cause will make a big difference.

ԵՐՎԱՆԴ ԳՐԵԿՅԱՆ

«Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի ենթակառուցվածքի
պահպանման ծրագրի ավագ գիտաշխատող, պ.գ.դ.

# ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՄԻՏՔԸ ԲԻԱՅՆԻԼԻ-ՈՒՐԱՐՏՈՒՈՒՄ

***Քաղաքաշինությունը. տեքստային վկայություններ:*** Բիայնիլի-Ուրարտուում քաղաքաշինության և ամրոցաշինության մասին են վկայում շուրջ վեց տասնյակ արձանագրություններ: Ամենավաղ օրինակները թվագրվում են Իշխուինի Սարդուրորդու իշխանության շրջանով (Ք.ա. մոտ 830-810 թթ.), իսկ վերջին տեքստերը վերաբերում են Արգիշթի Ռուսայորդու և Ռուսա Արգիշթորդու կառավարման տարիներին (Ք.ա. VIII դ. վերջ – VII դ. առաջին կես): Մեզ հասած տեքստերի մեծամասնությունը՝ շուրջ չորս տասնյակ արձանագրություն, կազմվել է Մենուայի իշխանության տարիներին: Ուրարտական արքաների թողած արձանագրություններում գերազանցապես վարչական խոշոր կենտրոններն են, որոնք նշվում են անվանապես, թեև, որոշ դեպքերում աղբյուրներն անվանապես հիշատակել են նաև ամրություններից զուրկ գյուղական բնակավայրեր և ագարակներ:

***Ուրարտական քաղաքը հնագիտության տեսանկյունից:*** Կասկածից դուրս է, որ Ուրարտուում «սուսի»-տաճարն էր կազմում այն առանցքը, որի շուրջը ձևավորվում էր ուրարտական «քաղաք»-ը, իսկ նման տաճարների գոյությունը վկայված է տերության բոլոր խոշոր ռազմավարչական կենտրոններում: «Սուսի»-տաճարից հետո «քաղաք»-ի երկրորդ կարևոր բաղադրիչը դա այսպես կոչված «պալատական» տիպի համալիրն է: Ընդ որում, ուրարտական ճարտարապետության մեջ «պալատ» ասելով ավելի շուտ պետք է նկատի ունենալ ամրոցի հանդիսավոր-վարչական հատվածը, քան առանձին կանգնած ճարտարապետական համալիր: Այդ երևույթը բնորոշ է հատկապես հյուսիսմիջագետքյան – հյուսիսսիրիական-փոքրասիական քաղաքային ճարտարապետությանը: Ուրարտուում «պալատ»-ը դա սյուներազարդ կամ մույթերով ընդարձակ գահանիստ կամ հանդիսավոր սրահն էր, չի բացառվում՝ *É.ašiḫ usi* կոչվող կառույցը:

«Սուսի»-տաճարից և սյունազարդ կամ մույթերով ընդարձակ դահլիճից զատ՝ դրանց շուրջը խմբված, սահմանափակ տարածք զբաղեցնող օժանդակ, տնտեսական կամ բնակելի սենյակներից բացի պարսպապատերից ներս ընկած մնացյալ ողջ տարածքը զբաղեցնում էին զորանոցները, արհեստանոցները, պահեստները, ընդարձակ մառանները և ամբարները: Կոթողային ճարտարապետություն ցուցաբերող գլխավոր կառույցները, փաստորեն, երկուսն են՝ «սուսի»-տաճարը և սյունազարդ դահլիճով «պալատական հատված»-ը:

Այս համալիրը կամ այլ կերպ ասած՝ «պալատ-տաճար»-ը, թերևս, անվանվում էր É.BÁRA: Որպես կանոն՝ É.BÁRA-ն շրջապատվում էր պարիսպներով և վերածվում ամրոցի՝ É.GAL-ի: Իրեն սպասարկող «արտաքին քաղաք»-ի կամ կից բնակավայրի հետ միասին (URU) այդ համալիրը կազմում էր ուրարտական «քաղաք»-ը:

Այս պատկերը բնութագրական է ուրարտական քաղաքային տիպի բոլոր խոշոր կենտրոններին: Կարելի է պնդել, որ Ուրարտուում քաղաքաշինությունը, ըստ էության, նույնանում էր (ամրացված) պալատական/տաճարային համալիրի կառուցման հետ, և «քաղաքաշինություն» եզրույթը կիրառելի է, թերևս, միայն այն պատճառով, որ այդ համալիրին կից կամ մոտ գտնվել է այդ կառույցը սպասարկելու կոչված բնակելի հատված՝ այսպես կոչված «արտաքին քաղաք»-ը կամ կից բնակատեղին: Քաղաքաշինական այս մոտեցումն ունի հին արմատներ և հանգում է Ք.ա. 2-րդ հազ. երկրորդ կեսի սիրիական – հյուսիսմիջագետքյան քաղաքներին: Վերջիններս կազմված էին միջնաբերդից (աքք. *ki/erḫ u*), ուր գտնվում էր տաճարը, իսկ միջնաբերդի ստորոտին սփռված էր ամրություններից զուրկ «ստորին քաղաք»-ը (աքք. *adaššu*): Սա մղում է մտածելու, որ ուրարտական քաղաքաշինությունը Հայկական լեռնաշխարհում մինչուրարտական շրջանում ընթացող քաղաքագոյացման գործընթացների շարունակությունը չէր: Ընդհակառակը, այդ գործընթացներն ընդհատվել են ուրարտական ներխուժումներով, իսկ դրանց հաջորդած ուրարտական տիրապետության հաստատումը նշանավորվել է վաղերկաթեդարյան «քաղաքներ»-ի վախճանով Հայկական լեռնաշխարհի մի զգալի հատվածում:

***<u>Բնակարանաշինությունը:</u>*** Սա Ուրարտուում իրականացվում էր պետության ունեցած պահանջներից և կարիքներից ելնելով: Ուրարտական քաղաքային տիպի խոշոր կենտրոններում բացված բնակելի շենքերի մի մասը, ակնհայտորեն,

կառուցվել էր պետության կողմից: Բնակելի տների միջուկը կազմում էր ընդհանուր սենյակը՝ ծածկված մի քանի սյուների օգնությամբ, իսկ ընդհանուր սենյակի կամ դահլիճի շուրջը դասավորված էին մնացյալ բնակելի և օժանդակ սենյակները: Տիպաբանորեն նման տները Ք.ա. II հազ. միտաննական և միջինասորեստանյան բնակարանային ճարտարապետության շարունակությունն են և հիշեցնում են Նուզիից և Աշշուրից հայտնի և մասնագիտական գրականության մեջ որպես *Mittelsaalhaus* դասակարգված տները:

***<u>Ուրարտական քաղաքների տարածքը</u>:*** Ուրարտուում բնակավայրերը տարբեր էին՝ փոքր, ամրություններից զուրկ ագարակ-դաստակերտներից և գյուղական բնակավայրերից մինչև քաղաքային կենտրոններ հիշեցնող ամրացված «պալատ-տաճարներ»: Սիրիա-միջագետքյան չափորոշիչներով՝ խոշոր քաղաք է համարվում 100-400 և ավելի հա, քաղաք՝ 40-50 և ավելի հա, իսկ գյուղաքաղաք՝ 5-25 և ավելի հա զբաղեցնող բնակավայրը: Ընդ որում, պետք է նկատի ունենալ, որ սիրիա-միջագետքյան քաղաքն ընդգրկում էր ողջ պարսպապատ գոտին, չհաշված՝ դրանից դուրս սփռված և ամրություններից զուրկ արվարձանները:

Մինչդեռ, ուրարտական «քաղաք»-ները պարսպապատ չէին և հանդիսանում էին բաց բնակավայրեր՝ սփռված ամրոցի կամ ամրացված «պալատ-տտաճար»-ի շուրջը: Վերջինս զբաղեցնում էր սահմանափակ տարածք՝ սովորաբար 2-6 հա, եզակի դեպքերում՝ հասնում մոտ 10 հա-ի և ընդամենը երեք ամրոցներ են, որ գերազանցում են 10 հա-ն: Իրենց «արտաքին քաղաք»-ի հետ միասին անգամ այդ կենտրոնների մակերեսը սովորաբար չէր գերազանցում 40-50 հա-ն: Միայն երեք կենտրոն են ունեցել 50 հա-ից ավելի տարածք, այն է՝ Այանցը (մոտ 80 հա), Տուշպան (մոտ 80-90 հա) և Արգիշթիխինիլի-Արմավիրը (մոտ 100 հա): Ուրարտական մնացյալ կենտրոնների և ամրոցների «քաղաքային թաղամասեր»-ը կամ կից բնակատեղիները զբաղեցնում էին շատ ավելի համեստ մակերես: Եվ վերջապես նշենք, որ ուրարտական խոշոր կենտրոններից առնվազն չորսը՝ Հայկաբերդը, Ալթընթեփեն, Թոփրաքքալեն և Քեֆ Քալեսին, ընդհանրապես չեն ունեցել «արտաքին քաղաք» կամ, գոնե առայժմ, դրանք փաստագրված չեն հնագիտորեն:

***<u>Բնակչության թիվը և խտությունը ուրարտական քաղաքներում</u>:*** Ուրարտական պալատական/տաճարային տիպի պետության բնույթը բացառում էր երկրում քաղաքների կամ քաղաքային տիպի խոշոր բնակավայրերի գոյությունը, որոնցում

կարող էր կենտրոնանալ մեծաթիվ բնակչություն, կարելի կլիներ խոսել քաղաքային ամրությունների առկայության և սահմանափակ տարածքով պայմանավորված՝ բնակարանների խիտ կառուցապատման մասին, տաճարների/սրբարանների գոյություն, ինչպիսիք վկայված են Հայաստանի ուշ-բրոնզ – վաղերկաթեդարյան բնակատեղիներում և բնակիչների՝ քաղաքային/համայնական ինքնավարության և շուկայական հարաբերություններով պայմանավորված քաղաքային կյանքին բնորոշ կենցաղավարության մասին, օրինակ՝ հրապարակի/շուկայի առկայություն: Ընդհակառակը, առկա տվյալները հուշում են, որ պարիսպներից դուրս սփռված և բավական ազատ կառուցապատում ունեցող «քաղաքային» թաղամասի բնակիչները հիմնականում հանդիսանում էին ամրոցի վարչակազմի, կայազորի կամ սպասարկող անձնակազմի անդամներ, որոնց կեցությունը հոգում էր պետությունը:

Պատահական չէ, որ Ուրարտուում ոչ մի տեղ չենք հանդիպում այնպիսի մի բնակավայրի, որը կենթադրեր շատ թե քիչ հոծ բնակչության կենտրոնացում համեմատաբար սահմանափակ տարածքում՝ «պալատ-տաճար»-ում, կամ պարիսպներից դուրս սփռված «արտաքին քաղաք»-ում, ուր կառուցապատման խտության միջին ցուցանիշը կազմել է 1 հա-ի համար 6-8 տուն՝ 30-40 բնակչով, այն դեպքում, երբ միջագետքյան քաղաքներում բնակչության խտությունը 1 հա-ի վրա տատանվում էր 100-ից 500 մարդու միջև՝ հաշվի առնելով կառուցապատման խտությունն ու տների հարկայնությունը, տների բնակելի մակերեսը, բնակավայրի բնակելի հատվածի մակերեսը, երկրագործական տարածքի հնարավորություններն ու ջրային ռեսուրսները: Որպես միջին ընդունվում է 1 հա-ի վրա 100-200 մարդ ցուցանիշը:

Մեր հաշվարկները ցույց են տալիս, որ «Վազա երկրի Թեյշեբայի քաղաք»-ի (Կարմիր-բլուր) բնակչությունը՝ ներառյալ վարչակազմը, սպասարկող անձնակազմը և կայազորը, հազիվ կարող էր հասնել 1.5 հազ-ի: Նույնքան է կազմել նաև «Ռուսայի փոքր քաղաք»-ի (Բաստամ) բնակչությունը: Արարատյան դաշտավայրի խոշորագույն ուրարտական կենտրոնի՝ Արգիշթիխինիլի-Արմավիրի համար մենք ենթադրում ենք ոչ ավելի, քան 3-4 հազ. բնակչություն:

Համեմատության համար նշենք, որ հին առաջավորասիական խոշոր կենտրոնների բնակչությունը սովորաբար չի գերազանցել 10-15 հազարը, ինչպես, օրինակ, Աշշուրը (65 հա և մոտ 7 հազ. բնակչություն), Երուսաղեմը (100 հա և մոտ 8

հազ. բնակչություն), Դուր-Կատլիմուն (100 հա և մոտ 9 հազ.), Խաթթուսասը (185 հա և 9-15 հազ. բնակչություն), Նինվեն (150 հա և մոտ 15 հազ. բնակչություն՝ մինչև Սինախերիբի իրականացրած ընդարձակումը), Կալխուն (360 հա և մոտ 17 հազ. բնակչություն) և այլն: Ինչ խոսք, ուրբանիզացիայի բարձր մակարդակ ունեցող սիրիա-միջագետքյան քաղաքներին բնորոշ այս պատկերը համադրելի չէ ուրարտական իրողությունների հետ:

***«Քաղաք» հասկացությունն Ուրարտուում:*** Կարելի է փաստել, որ Ուրարտուում քաղաքաշինական միտքը կաղապարայնացած էր, թելադրվում էր բացառապես պալատից/տաճարից և պայմանավորված էր Ուրարտուի՝ պալատական/տաճարային տիպի պետության բնույթով՝ վերաբաշխման համակարգի վրա հիմնված տնտեսությամբ: «Քաղաք»-ն էր համակարգում տվյալ գոտու տնտեսական կյանքը, իսկ նրանց իրականացրած գործառույթների միջև տարբերություններ չեն նկատվում: Ըստ այդմ, ուրարտական «քաղաք»-ների միջև չեն նկատվում նաև տիպաբանական առանձնահատկություններ:

Ուրարտական «քաղաք»-ի կենտրոնական կառույցն ամրացված «պալատ-տաճար»-ն էր: Այն աչքի էր ընկնում կոթողային ճարտարապետությամբ, որպես պարտադիր բաղադրիչ՝ ուներ «սուսի»-տաճար և «պալատական» տիպի համալիր («հանդիսությունների սրահ»), այստեղ էին կենտրոնացվում պետական պահուստները, այստեղ էր գործում ուրարտական վարչակազմը և որպես կանոն՝ առօրյա գրագրության օրինակները հայտնաբերվել են հենց նման կենտրոններից:

Ուրարտական քաղաքն ուներ սահմանափակ տարածք և բնակչություն: Վերջինիս թիվն ուղիղ համեմատական էր տվյալ կենտրոնի իրականացրած գործառույթներին, իսկ «բնակչություն»-ը սպասարկում էր «քաղաք»-ը: Ըստ այդմ, ուրարտական որևէ կենտրոն ոչ իր տարածքով, ոչ իր բնակչությամբ համադրելի չէ իր ժամանակաշրջանի սիրիա-միջագետքյան քաղաքների հետ, բայց, փոխարենը, հանդիսանում էր հյուսիսսիրիական – հյուսիսմիջագետքյան կամ այլ կերպ ասած՝ միտաննական/միջինասորեստանյան քաղաքաշինական ժառանգության կրողը:

ՌՈՒԶԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ

«Պահպանության ծառայություն» ՊԵԱԿ-ի ավագ գիտաշխատող,
ԵՊՀ պատմության ֆակուլտետի
մշակութաբանության ամբիոնի դասախոս, պ.գ.թ.

# «ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ-Ի ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖՈՆԴՈՒՄ ՊԱՀՎՈՂ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆԻ ՀՆԱՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի մարդաբանության ֆոնդում է պահվում Ա. Փիլիպոսյանի կողմից 1988-1990 թթ. պեղված Ներքին Գետաշենի հնամարդաբանական հավաքածուն: Այն բազմիցս հրատարակվել է գանգաբանական, հնաժողովրդագրական տեսանկյուններից: Ուսումնասիրությունների արդյունքում արձանագրվել է, որ Ներքին Գետաշենի բրոնզեդարյան խմբային թաղումները իրագործված են միաժամանակյա ակտով, հիմնականում կառուցվել են հասուն կամ տարեց արական սեռի բարձր կարգավիճակ ունեցող անձանց համար, որոնց ուղեկցել են նրա հետ ազգակցական-արենակցական սերտ կապ ունեցող անհատներ: Այս դրույթը առարկելի էր, կառուցված միայն գանգերի ձևաբանական նմանության հիման վրա: Շնորհիվ այն հանգամանքի, որ ներկայումս հավաքածուն պահպանվում է թանգարանային բոլոր կանոններին համապատասխան, իսկ հնամարդաբանական և կենսահնագիտական մեթոդները օրեցօր հարստանում են, խնդրո առարկա ժողովածուն հնարավոր եղավ ուսումնասիրել գանգասկոպիական, ատամնաախտաբանական և մոլեկուլյար մակարդակներում: Հնաժառանգաբանական վերլուծության համար հավաքագրվեցին խմբային թաղումների անհատների ատամնանմուշները: Բացահայտվեց միջինբրոնզեդարյան № 28 դամբարանում թաղված կանանց ժառանգաբանական «մտերմությունը»: Ատամնաախտաբանական վերլուծականները եկան հաստատելու նախկին եզրահանգումը. այն է, որ յուրաքանչյուր խմբային թաղում իր մեջ ամփոփում է առավել սերտ արենակցական կապեր ունեցող մարդկանց: Հետաքրքիր

է, որ կարիեսի դեպքերը կենտրոնացած են Ներքին Գետաշենի դամբարանադաշտի կոնկրետ խմբային թաղումների անհատների մոտ (№№ 9, 21, 27): Նույնը կարելի է ասել նաև աբսցեսի հանդիպման հաճախականության վերաբերյալ: Այս ախտանիշի 17 դեպքերից 7-ը հանդիպում են կոնկրետ № 21 դամբարանում թաղված անհատների մոտ: Տեղին է նշել նաև, որ գանգերը խմբավորվում են դամբարանների գանգասկոպիական հատկանիշների վերլուծության շնորհիվ: Այսպիսով հնաախտաբանական որակիչների (կարիես, աբսցես) և գանգասկոպիական հատկանիշների ուսումնասիրությունը (որոնք կարևոր ժառանգաբանական ցուցիչներ են հանդիսանում) և տիպաբանությունը (ըստ կոնկրետ խմբային թաղումների), ամրակայում են նախկինում առաջ քաշած այն վարկածը, որ Ներքին Գետաշենի բրոնզեդարյան դամբարանային համալիրները ամփոփում են արենակցական սերտ կապի մեջ գտնվող տարբեր տարիքի ու սեռի մարդկանց:

ՀԱՍՄԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ

«Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի առաջատար գիտաշխատող,
ԵՊՀ ասպիրանտ

# «ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ-Ի ՀՆԱՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐԸ

Հնամարդաբանական հավաքածուների՝ կենսափաստերի ֆոնդավորումը և պահպանությունը որոշակի մասնագիտական մոտեցում է պահանջում: Կենսափաստերը հազվադեպ են տեղ գտնում թանգարանային պահոցներում ու ցուցադրություններում և, առավել հաճախ, որպես «ոչ առաջին կարևորության գիտական նյութ»՝ պարզապես մատնված են անուշադրության: Մինչդեռ հայտնի է, որ հնամարդաբանական նյութը կարևոր սկզբնաղբյուր է էթնոժառանգաբանական, հնաէկոլոգիական և հնաախտաբանական վերակազմությունների իրականացման համար: ՀՀ տարածքում առաջին անգամ «Մեծամոր» պատմահնագիտական-արգելոց թանգարանում մարդաբանական նյութերը հնագիտական իրերի հետ միասին մաս կազմեցին հիմնական ցուցադրության՝ լրացնելով, առավել դիտարժան ու ընկալելի դարձնելով ուշ բրոնզեդարյան թաղման ծեսի վերակազմությունը:

Վերջին հարյուրամյակի հայերեն և օտարալեզու հնամարդաբանական գրականության մեջ բավական պատասխանատու եզրահանգումներ կարելի է հանդիպել, նվիրված Հայկական լեռնաշխարհի տարբեր պարբերաշրջանների և, մասնավորապես, երկաթի դարի հնամարդաբանությանը:

Սևանի ավազանի երկաթեդարյան հավաքածուին նվիրված Վ.Վ. Բունակի աշխատությունը, թերևս, առաջիններից մեկն է խորհրդային հնամարդաբանության ոլորտում, որտեղ հեղինակը ներկայացնում է երկաթեդարյան բնակչությանն իր երկարակերպ ձևաբանությամբ:

Սևանի ավազանի Ակունք և Նորատուս հնավայրերից հայտնաբերված երկաթեդարյան հնամարդաբանական նյութերի համեմատական վերլուծականի հիման վրա անվանի հնամարդաբան Վ.Պ. Ալեքսեևը փաստագրում է երկու ծայրահեղ՝ զանգվածեղ և նրբակազմ, տիպերի առկայությունն այստեղ: Ցավոք այս

հավաքածուներից Նորատուսինն այլևս գոյություն չունեն, իսկ Ակունքինը՝ պահպանվել է մասամբ։

Ներկայումս ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի մարդաբանության պահոցում հավաքագրված է և գրանցված Հայաստանի տարբեր շրջաններին վերաբերող 16 հավաքածու, որոնք պատկանում են 224 անհատի։ Այս փոքրիկ ընտրույթն իր ձևավորման գրեթե 10-ամյա պատմության ընթացքում հիմք է ծառայել սոցիալ-մշակութային, հնաժողովրդագրական, հնաախտաբանական և հնաէկոլոգիական բնույթի գիտական վերակազմությունների իրականացման համար։ Այդ համատեքստում, վաղ երկաթեդարյան գանգաբանական հավաքածուների ատամնաախտաբանական համեմատական ուսումնասիրություններն արդյունքում տվել են մի շարք կարևոր եզրահանգումներ։

Ի մասնավորի, ատամնաախտաբանական համալիր ուսումնասիրությանների արդյունքում բացահայտված էմալային հիպոպլազիայի միակ դեպքը ցույց է տալիս մետաբոլիկ սթրեսի բացակայությունը և վկայում տարածաշրջանում սննդի ռեսուրսների մատչելիության ու համեմատական առատության մասին։ Կարիեսի նվազ ցուցանիշները կարող են բացատրվել ատամնային համակարգի բարձր միներիլիզացմամբ և սննդակարգի մեջ շաքար պարունակող ուտելիքների բացակայությամբ։ Աբսցեսի բարձր տոկոսը երկաթեդարյան ժամանակաշրջանի բնակչության մոտ կարելի է բացատրել քաղաքային միջավայրում ակտիվ վարակային ֆոնի առկայությամբ։

Սովորաբար աբսցեսը կարիեսի հետևանք է, սակայն, ըստ մեր դիտարկումների, վաղ երկաթեդարյան գանգաբանական հավաքածուներում այս երկու ախտանիշները համատեղ հանդես չեն գալիս։ Աբսցես հիմականում փաստվում է մեծահասակների մոտ և կապված է ատամների (հատկապես սեղանատամների) աստիճանական մաշվածության հետ։ Ատամների վաղաժամ կորուստ ավելի հաճախ նկատվում է կանանց մոտ։ Այս խմբում փոքր-ինչ բարձր է նաև կարիեսի տոկոսը՝ կապված կանանց վերարտադրողական ֆունկցիայի հետ։

Ի թիվս վերը նշված ատամնաախտաբանական որակիչների, վաղ երկաթեդարյան գանգաբանական հավաքածուներում աբսցեսը ամենից հաճախ հանդիպողն է։ Հարկ է նշել, որ Հայաստանի տարածքում սոցիալական

հարաբերությունների զարգացման այդ փուլը պայմանավորվել է քաղաքագոյացման (ուրբանիզացիոն) ակտիվ երևույթներով, ինչն ուղեկցվել է ժողովրդագրական գործընթացների մեծ ակտիվացմամբ և, որպես անկառավարելի այդ իրավիճակների հետևանք՝ վարակիչ հիվանդությունների աննախադեպ սրմամբ:

Այսպիսով հնամարդաբանական նյութերի գրագետ ֆոնդավորումը և դրանց ճշգրիտ հնագիտական անձնագրավորումը հնարավորություն է ընձեռում կենսահնագիտական մեթոդների զարգացմանը զուգահեռ, նորովի դիտարկել և մեկնաբանել հին կենսափաստերը:

ՄԵՆՈՒԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

«Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի
օպերատիվ արձագանքման բաժնի վարիչ

# ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓԱՍՏԱԳՐՄԱՆ ՄԵԹՈԴԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՄԵԾԱՄՈՐ ՀՆԱՎԱՅՐԻ 2014-2016 ԹԹ. ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Հնագիտական ուսումնասիրությունների ոլորտների ընդլայնմանը զուգընթաց մշտապես ավելացել են գիտության հարակից գիտաճյուղերի ընձեռած հնարավորությունները: Դրանց առանձին մեթոդների կիրառմամբ աղբյուրների և նյութերի հետ կատարվող աշխատանքները կրել են ավելի ընդգրկուն բնույթ՝ տալով լայն հնարավորություններ հետազոտությունների արդյունավետության բարձրացման և հնագետների առջև ծառացած խնդիրների առավել ամբողջական մեկնաբանման համար: Վերջին տասնամյակներում (արևմուտքում դեռևս 1990-ական թվականներից, իսկ Հայաստանում և հետխորհրդային այլ երկրներում՝ 2000-ականների երկրորդ կեսից) դաշտային աշխատանքներում սկզբում զգուշորեն, ապա ավելի համարձակորեն և մեծ ծավալով սկսվեց ներառվել էլեկտրոնային փաստագրման մեթոդը՝ օգտագործելով գեոդեզիական սարքավորումներ (մասնավորապես՝ տախեոմետր) և համակարգչային մասնագիտացված ծրագրեր՝ միանգամայն նոր, ժամանակի հետ համընթաց քայլող մակարդակի բարձրացնելով դաշտային աշխատանքները, դրանց մշակումն ու հնագիտական ուսումնասիրությունների որակն ու հավաստիությունը:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները, 2014 թ-ից հայ-լեհական համատեղ միջազգային արշավախումբը Մեծամոր հնավայրի նման կարևորագույն հնագիտական հուշարձանի պեղման աշխատանքներում սկսեց կիրառել փաստագրման էլեկտրոնային մեթոդը՝ աշխատանքներն իրականացնելով Leica TCR 407 power մակնիշի տախեոմետրով, որը նախատեսված է ոչ միայն տոպոգրաֆիկ, այլ նաև ինժեներա-շինարարական աշխատանքների համար, մատչելի է օգտագործման տեսանկյունից և օժտված է ֆունկցիոնալ բազմազանությամբ (այսօր գոյություն ունեն ավելի քան 500 տեսակի տախեոմետրեր՝ Leica, Nikon, Sokkia, Topcon, GeoMax, Trimble, Spectra Precision և այլ մակնիշների): Դրանք հիմնականում

նախատեսված են տարածության, հորիզոնական և ուղղահայաց գծերի, բարձրության, տարածքի կոորդինատների չափման համար (այլ հնարավորություններն արդեն կախված են տվյալ մոդելի ֆունկցիոնալ հագեցվածությունից): Սա փոխարինելու եկավ տասնամյակներով կիրառվող նախկին մեթոդներին՝ ճարտարապետի կողմից ձեռքով հատակագծերի և առանձին օբյեկտների գծանկարելուն, դրանց հեռավորությունները քանոնով որոշելուն, ինչպես նաև հնարավորություն ընձեռեց հնավայրի ամբողջական պլան կազմելու և նախկինում ավանդական եղանակով արված չափումների հավաստիությունը ճշգրտելու համար:

Մեծամոր հնավայրի 2014 թ. պեղումների սկզբում, ինչպես պահանջում է մեթոդաբանությունը, նախապես ընտրվեց զրոյական կետը (միջնաբերդի տարածքի մետաղյա աշտարակը)՝ որպես ելակետ (հիմնական կողմնորոշիչ՝ ռեպեր) հետագա չափումների համար: Այնուհետև քաղաքային թաղամասում (Մեծամոր հնավայրի «Մեծ բլրի» հյուսիսային հատված) ստեղծվեցին ևս 2 ռեպերներ, որոնց օգնությամբ բացազատվելուց հետո սարքը բերվում էր աշխատանքային վիճակի՝ ապահովելով հնարավորինս ճշգրիտ չափումներ (առավելագույնը անճշտությունը կազմել է 0,5 մմ): Առաջին փուլում, մեթոդաբանության համաձայն, փաստաթղթավորման և չափագրական աշխատանքների մատչելիության համար նաև կատարվեց պեղավայրի տարածքի բաժանում 5,0 x 5,0 մ մակերեսով քառակուսիների:

2015 թ., մինչ Մեծամորի քաղաքային թաղամասի պեղումների սկիզբը, արվեցին ընդհանուր պեղավայրի և դամբարանադաշտի չափումները՝ հիմք ընդունելով զրոյական կետը՝ նոր կողմնորոշիչներ կառուցելով նաև դամբարանադաշտում: Վերջին գործողությունից հետո արդեն հնարավոր եղավ կազմել հնավայրի ընդհանուր պլանը մինիմալ անճշտություններով՝ որոշակի սրբագրումների ենթարկելով նաև նախկինում կազմված հատակագծերը: Որպես հետևանք՝ 2016 թ. չափագրական աշխատանքների նախապատրաստման համար այլևս լրացուցիչ ժամանակ ծախսելու անհրաժեշտություն չկար. կառուցվել էր արդեն կմախքը և մնում էր միայն ստանալ առանձին քառակուսիների արդյունքները, կազմակերպել ամենօրյա թղթաբանությունը և աշխատանքների ավարտին ստացված մոդելները տեղադրել գլխավոր պլանի մեջ, իսկ ընթացքում կուտակված,

փաստաթղթավորված նյութերը օգտագործել հետագա ուսումնասիրությունների և վերլուծությունների մեջ՝ որպես լրացուցիչ հնագիտական աղբյուր:

Էլեկտրոնային փաստագրման մեթոդն իրենից ներկայացնում է գործողությունների համալիր, որտեղ չափագրող սարքավորման տվյալները և թվային ֆոտոխցիկով արված լուսանկարները հատուկ մասնագիտացված համակարգչային ծրագրերով ենթարկվում են մշակման՝ հնագետին տալով պեղավայրի ճշգրիտ եռաչափ պատկերը, շերտագրությունը, առանձին գտածոների հստակ տեղադրությունը դաշտային աշխատանքների բոլոր փուլերի և բացված հորիզոնների համար: Էլեկտրոնային փաստագրման մեթոդի աշխատանքներն ընթանում են երկու փուլով ՝ դաշտային և «գրասենյակային»: Դաշտային փուլն իր հերթին բաղկացած է երկու գործողությունից՝ գեոդեզիական սարքավորումով (տախեոմետր) անհրաժեշտ չափումների իրականացում և լուսանկարում: Գրասենյակային փուլում արդեն տեղի է ունենում լուսանկարների մշակում և համապատասխան կոորդինատների հետ մուտք համակարգչային առաջին ծրագրի (Agisoft photoscan) մեջ: Մի քանի փուլերով իրականացվող զտումից հետո ստացվում է բավարարող օբյեկտի եռաչափ մոդելը, որը տեղադրվում է երկրորդ ծրագրի մեջ՝ Corel 6.0, ինչի միջոցով իրականացվում է գծանկարումը: Կապված, թե պեղումների որ փուլում է իրականացվում այս գործողությունը, այն կարող է լինել վերջինը կամ նախավերջինը: Եթե պեղավայրի մոդելավորված հատվածում արշավախմբի ղեկավարը նպատակահարմար է համարում շարունակել աշխատանքները, ապա սա տվյալ օրվա համար վերջին փուլն է, իսկ եթե դա հատվածի կամ համապատասխան քառակուսու վերջնական տեսքն է՝ գծապատկերը կամ եռաչափ մոդելն արդեն AutoCAD ծրագրով տեղադրվում է հնավայրի գլխավոր պլանի մեջ:

Այս մեթոդը, ինչպես դրա իրականացման համար անհրաժեշտ սարքավորումներն ու համակարգչային ծրագրերը, անընդհատ կատարելագործվում և զարգանում է: Բանն այն է, որ նույնիսկ ամենապարզագույն տարբերակում այս մեթոդն ունի արդեն ընդգծված առավելություններ ավանդականի նկատմամբ, ինչն էլ նպաստում է մեթոդի արագ տարածմանը հնագիտության մեջ: Դրանք են՝

1. Արագությունը (նախորդ մեթոդների համեմատ մինչև տասն անգամ). աշխատանքների զգալի մասն իրականացվում է արդեն դաշտից դուրս՝ ավելի

շատ ժամանակ թողնելով բուն պեղումներին և փոքրացնելով հնագետի կախումը եղանակային պայմաններից,

2. ճշգրտությունը,
3. ավելի բարձր որակի և բազմաբնույթ տեղեկատվության ստացումը,
4. բարզմաշերտ, բարդ հնագիտական հուշարձաններում (ինչպիսին օրինակ՝ Մեծամոր հնավայրն է) իրականացվող համապատասխան աշխատանքների արդյունավետությունը,
5. պեղածո նյութի հետ պարբերաբար աշխատելու մատչելիությունը (էլեկտրոնային կրիչներով անհրաժեշտ նյութը մշտապես կարող է գտնվել հնագետի ձեռքի տակ, ինչն էլ բարձրացնում է հետդաշտային հետազոտությունների արդյունավետությունը):

Այս ամենով հանդերձ, գործնական աշխատանքների փուլում մասնագետների կողմից առանձնացվում են նաև մի շարք խնդիրներ, որոնք երբեմն կարող են դիտարկվել որպես մեթոդի կիրառման խոչընդոտներ: Դրանցից մի քանիսն ի հայտ են եկել նաև մեր աշխատանքի ընթացքում: Այդ խոչընդոտներից են.

1. ռելիեֆային, ժայռոտ տեղանքում սարքավորման անընդհատ տեղափոխման անհրաժեշտությունը,
2. լուսանկարների որակի անհամապատասխանությունը մոդելի կառուցման համար անհրաժեշտ չափորոշիչներին և դրանց շտկման անհնարինությունը,
3. անձնակազմի մասնագիտական պատրաստվածության աստիճանը,
4. սարքավորումների և մասնագիտացված համակարգիչների բարձր գինը և այլն:

Թանկարժեք սարքավորումները (տախեոմետր) հայ-լեհական համատեղ արշավախմբում ապահովում են լեհ մասնագետները, իսկ համակարգիչներ և թվային ֆոտոխցիկներ ունի նաև հայկական կողմը: Հայ հնագետները նոր սաքրավորումներին սկսել են տիրապետել ոչ միայն դաշտում գործնական աշխատանքների ընթացքում: Նրանցից մի քանիսը մասնագիտական վերապատրաստում են անցել Վարշավայի համալսարանի հնագիտության ինստիտուտում: Լուսանկարների հետ կապված խնդիրներից հնարավորինս խուսափելու համար, պեղվող հատվածի մանրամասն մաքրումից հետո, լուսանկարահանումներն իրականացվում են տվյալ օրվա դաշտային

աշխատանքների վերջում՝ որպեսզի դրանց անհամապատասխանության կամ թերությունների պարագայում պեղավայրը հնարավոր լինի ևս մեկ անգամ լուսանկարել հաջորդ օրվա աշխատանքներից առաջ: Ռելիեֆի առաջացրած խնդիրները, իհարկե ստիպում են մի փոքր ավելի ժամանակ ծախսել և մեկ-երկու լրացուցիչ մոդել ավել ստեղծել, սակայն մեծ հաշվով դա չի ազդում աշխատանքների ընդհանուր արագության, առավել ևս որակի վրա:

Ամփոփելով կարող ենք ասել, որ էլեկտրոնային փաստագրման մեթոդը շատ կարևոր նորամուծություն էր ինչպես ընդհանուր հնագիտության, այնպես էլ Մեծամոր հնավայրում իրականացվող պեղման աշխատանքների համար: Կասկած չկա, որ մոտ ապագայում մեթոդը ստանալու է համընդհանուր տարածում, քանի որ էլեկտրոնային սարքավորումների և համակարգչային ծրագրերի կիրառման շնորհիվ էականորեն բարձրանում է հնագիտական աշխատանքների արդյունավետությունը և՝ ժամանակային, և՝ որակական առումներով:

ՏԻԳՐԱՆ ԶԱՔՅԱՆ

Պահպանությանծառայություն» ՊՈԱԿ-ի
վերականգնման լաբորատորիայի վարիչ

# ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ԽԵՑԵՂԵՆԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանում հնագիտական պեղումներ իրականացնելու առաջին փորձերը սկսվել են դեռևս XIX դ. 70-80-ական թթ., որոնց ընթացքում հայտնաբերված մեծաթիվ արտեֆակտերը (հնագիտական գտածոները - նյութական մշակույթի առարկաները) կարիք ունեին ամրակայման, վերականգնման և պահպանության:

Պեղված հնագիտական նյութերը տեղ էին գտնում Հայաստանի և Խորհրդային Միության նշանավոր թանգարաններում: Հայաստանի թանգարաններում տարիների ընթացքում հավաքված հնագիտական նյութերի քանակը և ուսումնասիրման առումով ոչ պատշաճ վիճակը (աղտոտվածություն, բեկորային և վերականգնման անհրաժեշտություն ունեցող առարկաների մեծ քանակ), բերեց թանգարաններում հնագիտական նյութերի վերականգնման լաբորատորիաների, բաժինների ստեղծմանը, որտեղ և սկսեցին մաքրվել, վերականգնվել և ամրակայվել պեղումներից հայտնաբերված իրերը՝ ժամանակին ընդունված մեթոդներով և ձեռքի տակ առկա նյութերով: Մինչև օրս մեզանում հնագիտական առարկաների վերականգնման խնդիրները գրեթե մնացել են անփոփոխ, չնայած այն բանին, որ գիտության և տեխնիկայի զարգացմանը զուգընթաց փոխվել են և՛ մեթոդները, և՛ նյութատեխնիկական հենքը:

XIX դ. վերջին և XX դ. առաջին կեսին հնագիտական իրերի վերականգման մեթոդների, տեխնիկայի և նյութական բազայի մասին տեղեկությունների բացակայության պարագայում բավական բարդ է կատարված աշխատանքի ու դրա որակի վերաբերյալ որևէ գնահատական տալը: Պատճառներից մեկն էլ այն է, որ XX դ. երկրորդ կեսից և հատկապես 1970-ական թթ. սկսած, մինչ այդ վերականգնված հնագիտական առարկաների մի մասը կրկնակի վերականգնման է ենթարկվել:

Վերականգնումը (ռեստավրացիա) մի շարք անհրաժեշտ աշխատանքների հաջորդականությունն է, ինչն ուղղորդված է կանխելու նման կարիք ունեցող

նյութական մշակույթի առարկաների հետագա վնասումը և/կամ ոչնչացումը՝ վերջիններիս բերելով իրենց նախնական տեսքին ու վիճակին հնարավորինս մոտ աստիճանի: Ստացվում է, որ վերականգնման հիմնախնդիրը՝ անշարժ և շարժական հուշարձանների (նյութական մշակույթի առարկաների) պահպանությունն է: Վերջինիս մի առանձին և ինքնուրույն ոլորտն է՝ հնագիտական խեցեղենի մաքրումը, վերականգնումն ու ամրակայումը: Պայմանականորեն հնագիտական խեցեղենի «խնամքը» կարելի է բաժանել երկու փուլի՝ նախնական (որոշ դեպքերում կարելի է անվանել նաև դաշտային) և լաբորատոր:

**Նախնական փուլը** իրականացվում է պեղավայրում. հնագիտական առարկայի հայտնաբերմանը զուգահեռ, երբ կատարվում են անհրաժեշտ կանխարգելիչ աշխատանքներ: Այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում, նյութի նախնական ամրակայում, մաքրում, դասակարգում և գրանցում ըստ պեղավայրի տեղամասի կամ քառակուսիների, պեղման օրերի, հնագիտական հորիզոնների, մշակութային լոկուսների և այլն:

**Լաբորատոր փուլը** համեմատաբար ավելի երկարատև է: Այստեղ բերված թե՛ ամբողջական և թե՛ բեկորային խեցեղենն ունի աղտոտվածության տարբեր աստիճաններ՝ կախված պեղավայրի ինչպես էկոգեն (տեղանքի երկրաբանական կառուցվածք, բուսականության տեսակներ, ջրային միջավայրի անմիջական և միջնորդավորված ազդեցություն, հողի քիմիական բաղադրություն, կրային և աղային նստվածքների առկայություն և այլն) այպես էլ անտրոպոգեն (հրդեհներ, ավերումներ, վերակառուցումներ, կենսատարածքի փոփոխման և/կամ կազմակերպման այլ եղանակներ) գործընթացների առանձնահատկություններից: Սկզբնական փուլում կատարվում է առարկաների մանրակրկիտ զննում, պահպանվածության աստիճանի գնահատում, ինչից էլ պարզ է դառնում թե փուլային ինչպիսի աշխատանքներ պետք է իրականացնեն մասնագետները:

Հաջորդ փուլում քիմիական նյութերի (քացախաթթու, մրջնաթթու) և մեխանիկական գործիքների (խոզանակներ, լանցետ և այլն) միջոցով իրականցվում է խեցեղենի մաքրումը: Այն վերջնականապես աղազերծվում է, մաքրվում կրային և այլ նստվածքներից: Կան առարկաներ, որոնք կարիք ունեն ամրակայման՝ ելնելով կավի բաղադրությունից, խեցու փխրունության (կավի ցածր որոկ, վատ թրծման արդյունք) և վնասվածության (կարող են դրսևորվել ճաքերի և միկրոճաքերի տեսքով)

աստիճանից: Մաքրման և ամրակայման աշխատանքներից հետո, եթե պեղածո նյութերում նշմարվում են մեկ առարկայի մաս կազմող բեկորներ, ապա դրանք առանձնացվում են և, ըստ համապատասխան հաջորդականության, հավաքվում՝ վերականգնելով առարկայի նախնական տեսքը: Նման աշխատանքների ընթացքում հաճախ է պատահում, երբ ամբողջապես վերականգնված առարկայի վրա մնում են բացակա կտորներ: Այս պարագայում, դրանք լրացվում են գիպսով՝ նախապես մշակված մեթոդով: Քանի որ գիպսը սպիտակ է և տարբերվում է խեցու գույնից, վերականգնողը կանգնում է երկընտրանքի առջև՝ ներկել այն թե ոչ: Այս առումով, մասնագետների մի մասը գտնում է, որ հնագիտական առարկայի գիպսով լրացված հատվածը անհաժեշտ է ներկել (տվյալ խեցու գույնից մեկ կամ երկու տոն թույլ երանգով), մինչդեռ մասնագետների մյուս մասն ավելի հակված է գիպսով վերականգնված հատվածը թողնել առանց երանգավորման: Այսօր հնագիտական խեցեղենի վերականգնման աշխատանքների ժամանակ երկու տարբերակներն էլ կիրառվում են: Պետք է ավելացնել նաև, որ ժամանակակից արհեստավարժ մասնագետները միշտ լուսանկարում և փաստագրում են յուրաքանչյուր խեցու հաջորդական վերականգնման ընթացքը, համապատասխան գրառումներ կատարում, ինչը, արդյունքում, իր ձևակերպումն է ստանում կոնկրետ առարկայի վերականգնումը փուլ առ փուլ ներկայացնող մասնագիտական վկայագրի մեջ (հին սովորության համաձայն, երբեմն անվանում են նաև «վերականգնվող առարկայի անձնագիր»): Ուստի հնարավորինս ամբողջական, ճիշտ և մասնագիտական առումով անթերի վերականգնում իրականացնելու համար անհրաժեշտ է, որ վերականգնողը սկզբից ևեթ մասնակից լինի պեղման աշխատանքներին, իր մասնագիտական հմտության և պատրաստվածության շնորհիվ հենց պեղավայրում իրականացնի նյութի ճշգրիտ հավաքում, անհրաժեշտության դեպքում՝ նախնական ամրակայում, ապա և առարկայի հողից դուրս հանում ու անվնաս տեղափոխում լաբորատորիա:

Հնագիտական առարկաները, անցնելով վերականգնման վերը նշված փուլերը, տեղ են գտնում հատուկ պահոցներում և/կամ համալրում թանգարանների հիմնական կամ ժամանակավոր ցուցադրությունները, ավելի առարկայական ու տեսանելի դարձնելով մեր նախնիների պատմական դարավոր անցյալն ու մշակութային ժառանգությունը:

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՀ մշակույթի նախարարության
«Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» ՊՈԱԿ

# ՀԻՆ ԵՐԵՎԱՆԻ ԱՇՏԱՐԱԿԱՏԻՊ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ

Ֆրանսիացի ճանապարհորդ Ժ. Շարդենը 1673 թ. Երևան այցելության ընթացքում հիշում է մի «առեղծվածային» աշտարակ, որին անդրադարձել է Կ. Ղաֆադարյանը Երևանին նվիրված իր հայտնի աշխատանքում։ Ըստ Շարդենի՝ Երևանի եպիսկոպոսարանի մոտ եղել է յուրահատուկ ճարտարապետական ոճով, սրբատաշ քարից կառուցված, սնամեջ աշտարակ, որի չորս կողմում պահպանվել են ավերակներ։ Այդ պահին աշտարակի վրա նշմարվել են նաև արձանագրություններ, որոնք նման էին հայերենին, սակայն անընթեռնելի էին։ Շարդենը կարծել է, թե այդտեղ եղել է վանքի աշտարակը։ Այս տեղեկությունն առայժմ միակ սկզբնաղբյուրն է կառույցի մասին։ Համոզիչ է Կ. Ղաֆադարյանի այն կարծիքը, թե աշտարակը Շարդենի այցից մի քանի տարի հետո՝ 1679 թ., մեծ երկրաշարժից հիմնահատակ քանդվել է, որից հետո դրա մասին այլ տեղեկություններ մեզ չեն հասել։

Մինչ օրս բաց են մնում Երևանի աշտարակի կառուցման վայրի, ժամանակի և գործառույթի հարցերը, որոնց մասին հետագա ուսումնասիրողները տարակարծիք են։ Այն համարել են իսլամական աշտարակ (Ալիշան, մեջբերումը՝ Կ. Ղաֆադարյանի), իսկ վերջերս նույնիսկ առաջ քաշվեց կառույցի ջրային աշտարակ լինելու վարկածը։

Շարդենի հաղորդման մեջ չափազանց կարևոր է այն տեղեկությունը, ըստ որի՝ աշտարակը եպիսկոպոսարանի մոտ է եղել։ Հետաքրքիր կռահում է արել Ա. Միքայելյանը, որը վերլուծելով Շարդենի՝ Երևանի համայնապտկերը նկատել է մի օրինաչափություն՝ մզկիթը, աշտարակը և, ըստ Շարդենի, «Երկու երես եկեղեցին» ձգվել են մի գծի երկայնքով՝ Երևանի բերդի հյուսիս-արևլյան անկյունից մինչև Կաթողիկե եկեղեցին։ Այս ամենով հանդերձ պարզ է դառնում, որ աշտարակն ունեցել է հասարակական շատ կարևոր նշանակություն։

Այս դիտարկումը մեզ օգնում է հասկանալ Հայաստանի աշտարակատիպ վաղագույն շինությունների պատմահնագիտական միջավայրը։ Սրանք առանձին

կանգնած, կոպտատաշ խոշոր քարերի չոր շարվածքով, հիմնականում կլոր և ուղղանկյունաձև կառույցներ են, որոնք ավանդաբար թվագրվում են բրոնզ-երկաթի պարբերաշրջաններով։

Ներկայիս Երևանի տարածքում մեզ հայտնի է աշտարակատիպ 4 կառույց։ Սրանցից երկուսն առկա են ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում՝ Աջափնյակ (համարանիշ՝ 1.1/1) և Ավան (համարանիշ՝ 1.2/1) վարչական շրջաններում։ Աջափնյակի աշտարակը (Աջափնյակ 1)՝ Շահումյանի հին գերեզմանոց տանող ճանապարհի աջ կողմում է, դամբարանադաշտի կենտրոնական մասում, ամենամեծ դամբանաբլրի կենտրոնում։ Ավանի աշտարակի ավերակները (Ավան 1)՝ «Բերդի գլուխ» (Կալադաղ) բարձունքին են։ Այս երկու աշտարակները կապող օղակ են աշտարակատիպ կառույցների՝ Արագածյան նախալեռնային (Էջմիածնային գծի) և Կոտայք-Գեղարքունիք համակարգերի միջև։ Փաստացի, սրանցից մեկը՝ Աջափնյակինը, ունի ծիսական միջավայր (դամբարանադաշտ), իսկ Ավան 1-ի մասին թեփետ չունենք մանրամասն տեղեկություն, սակայն պարզ է, որ բնակավայրային համակարգից դուրս է։

Երևանի աշտարակատիպ մյուս երկու կառույցները հին բնակավայրերի միջնատարածքում են։ Սրանցից ամենահինը կարելի է համարել Ե. Բայբուրթյանի պեղած Մուխաննաթ թափա հնավայրի «բոլորաձև սրբարանը» (մ.թ.ա. II հազ.), որն զբաղեցրել է բլրի գագաթը։ Ե. Բայբուրթյանը կարծում էր, որ այս «սրբարանը» ընդհանուր է եղել ողջ բնակավայրի համար։

Հավանաբար այսպիսի մի «սրբարան» էր Եղեռնի հուշարձանից հարավ-արևելք, Հրազդան գետի աջ բարձրադիր ափին, հին բնակատեղիի և դամբարանադաշտի նկատմամբ գերիշխող բլրի կառույցը։ Այստեղ իրար զուգահեռ հորիզոնական շրջանաձև և բլրի գագաթից իջնող շառավղաձև պատերի մնացորդներ են նկատվում։ Գագաթի աշտարակը և մնացած պատերը մինչև 1950 թ., այսինքն՝ Ծիծեռնակաբերդի անտառի տնկումը, պահպանվել էին։

Թեպետ Երևանի «առեղծվածային» աշտարակը Շարդենի այցելության ժամանակ չէր օգտագործվում, սակայն, հավանաբար, ժամանակին կարևոր նշանակություն է ունեցել, որի մասին փաստում է դրա զբաղեցրած տեղը քաղաքի հասարակական և կրոնական շինությունների շարքում։ Ավանդաբար, կրոնական և հասարակական շինությունները կառուցվում կամ վերակառուցվում էին միևնույն

տեղում։ Մեծ երկրաշարժից հետո, խնդրո առարկա աշտարակը փաստորեն չվերականգնվեց։ Սա խոսում է դրա՝ հասարակական նշանակությունը վաղուց կորցրած լինելու մասին, քանի որ այդ երկրաշարժից հետո Երևանում կրոնական և հասարակական շենքերի զգալի մասը կրկին վերականգնվեց։ Ելնելով սրանից՝ կարծում ենք, որ այս աշտարակը ոչ միայն ուշ, այլև զարգացած միջնադարի ժամանակաշրջանի կրոնական (ո՛չ հայկական, ո՛չ իսլամական) և հասարակական շինությունների հետ առնչություն չի ունեցել։ Հավանաբար նրա արմատները հասնում են մինչքրիստոնեական շրջան։ Աշտարակը թերևս կարող էր ունենալ ծիսական նշանակություն, ինչի օգտին է խոսում այն հանգամանքը, որ վերջինս եղել է եպիսկոպոսարանի հարևանությամբ, իսկ քրիստոնեական շատ շինություններ կառուցվել են հենց հին տաճարների տեղում։

ԿԱՐԻՆԵ ԲԱԶԵՅԱՆ

«Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի
գիտահետազոտական բաժնի վարիչ, պ.գ.թ.

# ԿԱՐՈ ՂԱՖԱԴԱՐՅԱՆԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՄԻ ՀՈԴՎԱԾԻ ՇՈՒՐՋ

Մեծանուն հայագետ Կ. Ղաֆադարյանի գիտական ժառանգության մեջ առանձնանում է «Մի փաստաթուղթ Ախալցխայի հայերի կենցաղի վերաբերյալ» հոդվածը, որտեղ ներկայացված է մի եզակի փաստաթուղթ՝ 1843 թ. մարտի 15-ին Ախալցխայում կազմված ու 61 ստորագրությամբ հաստատված «Հաստատութիւն վասն բարեգոյն կարգադրութեան գաղթականացս» վավերագիրը, որը հեղինակը տեսել էր քաղաքի երբեմնի մեծահարուստ Բայբուրդյանների տանը 1930 թ.: Բազմավաստակ գիտնականն այդ փաստաթուղթը ոչ միայն զուտ հրապարակել է, այլև մեկնաբանել ու վերլուծել՝ այն դիտարկելով որպես Ախալցխայի հայ համայնքի պատմության ուսումնասիրության կարևոր սկզբնաղբյուր:

Եվ իրապես, հոդվածը գիտական մեծ արժեք է ներկայացնում մի քանի տեսանկյունից. նախ, որ շրջանառության մեջ է դրվել մի փաստաթուղթ, որը բացառիկ տեղեկություններ է պարունակում Ախալցխայի հայերի համայնական ու ընտանեկան մի շարք ծեսերի ու սովորույթների, քաղաքի երևելի մարդկանց, նրանց զբաղմունքների, համքարությունների ու համայնքի ներքին ինքնակառավարման գործում դրանց դերակատարության և այլ իրողությունների մասին:

***Երկրորդ.*** Նկատի ունենալով, որ Ախալցխա էին տեղափոխվել բացառապես Կարինի արհեստավորներն իրենց ընտանիքներով, որոնք դեռ պահպանել էին իրենց սովորույթներն ու ավանդական ապրելակերպը, փաստաթղթի միջոցով կարելի է պատկերացում կազմել նաև այդ քաղաքի կենցաղի ու մշակույթի մասին: Կարգադրության մեջ թվարկված են ոչ միայն ամուսնա-հարսանեկան արարողակարգը, երեխայի ծննդյան ու մկրտության ծեսերն ու սովորույթները, ուղեկցող հացկերույթն ու հյուրասիրությունը, այլև դրանց ժամանակ տրվող նվերները, քաղցրավենիքները, խմիչքներն ու ուտեստները, որոնք ամբողջացնում են կարինցիների/ախալցխացիների ազգագրական նկարագիրը:

***Երրորդ.*** Ծագումով ախալցխացի գիտնականը, քաջատեղյակ լինելով իր ծննդավայրի պատմությանն ու մշակույթին, վավերագիրը ներկայացրել է քննական մեկնաբանություններով, որոնք ևս կարելի է համարել ազգագրական սկզբնաղբյուր: Փաստաթուղթը ընթերցողին հասկանալի դարձնելու համար նա հոդվածը սկսում է Ախալցխայում հայերի հաստատման մասին համառոտ ակնարկով, որտեղ ներկայացնում է ոչ միայն պատմական, այլև ժողովրդագրական տվյալներ, անդրադառնում տեղաբնիկների ու նորեկների հարաբերություններին, բնակչության սոցիալ-մասնագիտական կազմին՝ մասնավորապես արհեստավորական խավին ու նրանց գործունեությունը կազմակերպող ու կարգավորող համքարություններին:

***Չորրորդ.*** Հայկական ավանդական արհեստների ուսումնասիրության համար գիտական մեծ արժեք են ներկայացնում հատկապես կարգադրությունը ստորագրած համքարությունների (էսնաֆություններ) մասին հեղինակի պարզաբանումները, որոնցում տրված են արհեստների հայերեն անվանումներն ու դրանց նկարագրությունը: Հատկանշական է, որ իր խոսքը հաստատելու համար մեծանուն գիտնականը բազմիցս դիմում է Սողոմոն Եղիազարյանցին և արհեստների ու արհեստավորական կազմակերպությունների մասին նրա հիմնարար ուսումնասիրությանը՝ համեմատություններ անելով ու երբեմն նաև լրացնելով այն: Այդպիսով մեծավաստակ գիտնականը ցույց է տալիս արհեստավորների թվաքանակի շարժը 1831-1839 թթ-ին՝ պարզաբանելով դրա անկման պատճառներն ու հետևանքները, մասնավորապես արհեստավարժ ոսկերիչների արտագաղթն ու նրանց տեղափոխությունները Հյուսիսային Կովկաս, Ռուսաստան կամ հետ վերադարձը հայրենիք:

***Հինգերորդ.*** Կարինից Ախալցխա գաղթած հայերի XIX դ. առաջին կեսի կենցաղի ուսումնասիրության համար բացառիկ նշանակություն ունի կարգադրության մեջ գործածված բառերի ու դարձվածքների բացատրությունը: Քանի որ փաստաթուղթը գրված է կարնո բարբառով, որտեղ գործածական էին նաև թուրքերեն բառերը, հեղինակը տվել է դրանց նկարագրական բացատրությունը, այդպիսով ներկայացնելով ժամանակաշրջանի քաղաքային տոնածիսական կյանքը, կենցաղն ու բարքերը՝ իրենց մանրամասներով:

Ամփոփելով կարող ենք միանշանակորեն փաստել, որ միայն այն, որ Կ. Ղաֆադարյանը փրկել ու մասնագետների հետագա ուսումնասիրությանն ու

վերլուծությանն է թողել մի փաստաթուղթ, որի բնօրինակի հետագա ճակատագիրը հայտնի չէ, արդեն մեծ գործ է: Եթե դրան հավելենք նաև նշանավոր հայագետի մեկնաբանություններն ու ծանոթագրությունները, ներկայացվող հոդվածն ամբողջությամբ կարելի է դիտարկել որպես Ախալցխայի քաղաքային ավանդական կենցաղամշակութային համալիրի ուսումնասիրության բացառիկ արժեքավոր ու հավաստի սկզբնաղբյուր:

ԱՎԵՏԻՔ ՂԱԶԱՐՅԱՆ

«Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի գիտաշխատող

# ԱՎԱՆԻ ՏԱՃԱՐԸ ԵՎ ՆՐԱ ԵՐԿԼԵԶՈՒ ԾԱԾԿԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Պատմագրական վկայությունների և պատմագիտական ուսումնասիրությունների համաձայն Ավանի տաճարը կառուցվել է քաղկեդոնադավան միակ հակաթոռ կաթողիկոս Հովհան Բագարանցու կաթողիկոսության օրոք (591-610թթ.), Բյուզանդիայի Մորիկ կայսեր նախաձեռնությամբ ու միջոցներով: Ավանի տաճարի կառուցումը առավել հավանական է թվագրել VI դ. վերջին տասնամյակով, քանի որ 602 թ. հովանավոր կայսրը սպանվեց, իսկ դրանից հետո սկիզբ առած անբարենպաստ քաղաքական իրավիճակի պատճառով հակաթոռ կաթողիկոսությունն անկում ապրեց ու, ի վերջո, վերացավ:

Ավանի տաճարի ճարտարապետական հորինվածքն ու կառուցվածքային լուծումները պայմանավորված և իրականացված են Բյուզանդիայի կրոնաքաղաքական նպատակային թելադրանքներին համապատասխան: Որպես հակաթոռ՝ այն պիտի ներկայացներ Հայոց կաթողիկոսության դերը զբաղեցնելու հավակնությունը, որը թեև Մարզպանական Հայաստանի կենտրոն Դվինում էր, սակայն հիմնաքարը՝ Ս. Էջմիածնի տաճարն էր: Ուստի Ավանի եկեղեցին կառուցվեց հնգագմբեթ, ինչպիսին Ս. Էջմիածնի տաճարն էր, բայց կառուցվածքային նոր լուծումներով՝ կարևոր ավանդ ներդնելով հայ ճարտարապետության զարգացման գործում:

Ավանի քաղկեդոնադավան հակաթոռ կաթողիկոսությունը դադարեց իր գոյությունը պարսկա-բյուզանդական ռազմական հերթական հակամարտության արդյունքում, 610 թ. Հովհան Բագարանցու գերևարմամբ, իսկ մեկ տարի անց՝ մահով: Հակաթոռ կաթողիկոսի աճյունը հուղարկավորվեց իր իսկ կառուցած Ավանի եկեղեցում: Բռնի միջոցներով քաղկեդոնականություն ընդունած և Ավանի հակաթոռ կաթողիկոսությանը ենթարկված բյուզանդական կողմի հայ եպիսկոպոսները 602-607 թթ. քաղաքական նոր պայմաններում, մինչև Աբրահամ Ա. Աղբաթանեցի հայոց

կաթողիկոսի ընտրությունը, վերականգնեցին հայադավանությունն ու Դվինի հայոց կաթողիկոսությանն իրենց ենթակայությունը: Այս հանգամանքն անհնարին դարձրեց Հովհան Բագարանցու մահից հետո Ավանի հակաթոռ կաթողիկոսության հետագա գործունեությունը: Ավանի նախկին աթոռանիստը՝ արդեն վանքի կարգավիճակում, պահպանեց իր ինքնուրույնությունը մինչև 633 թ., ապա ենթարկվեց Դվինի կաթողիկոսությանը՝ Հերակլ կայսեր (610–641 թթ.) և Եզր կաթողիկոսի (630–641 թթ.) միջև ձեռք բերված միջդավանական համաձայնության արդյունքում: Վարչականորեն Հայոց կաթողիկոսությանը ենթակա Ավանի եկեղեցին արդեն Հովհաննես Գ. Օձնեցի հայոց կաթողիկոսի (717-728 թթ.) գահակալության շրջանից սկսած դարձավ հայադավան, սակայն XIII դարում կրկին վերականգնեց իր քաղքեդոնական պատկանելությունը:

Մինչև մեր օրերը կիսակործան վիճակում պահպանված տաճարը խորհրդային տարիներին դասվեց մշակութային հուշարձանների շարքին: 1940 թ. Հայաստանի Պատմական Հուշարձանների Պահպանության Կոմիտեն ձեռնարկեց նրա մասնակի վերականգնման և ամրացման աշխատանքները, որոնց արդյունքում ի հայտ եկան մի քանի հետաքրքիր արձանագրություններ: Եկեղեցու արևելյան պատի արտաքին կողմում հայտնաբերված հայերեն-հունարեն երկլեզու արձանագրությունը, որպես բացառիկ նմուշ, որոշվեց պատի մեջ տեղադրելու փոխարեն փոխադրել Հայաստանի պատմության թանգարան:

Արձանագրությունը փորագրված է տուֆի երեք սրբատաշ քարերի վրա, որոնք ժամանակին տեղադրված են եղել եկեղեցու արևելյան պատին արտաքին կողմից: Երեք քարերի հանրագումար երկարությունը 214 սմ է, բարձրությունը՝ 50 սմ: Գրությունը սկսվում է ձախակողմյան քարի աջ կողմի կեսից և ավարտվում երրորդ քարի աջ եզրին: Տեքստն ունի երկու լրիվ տող և վերջանում է երրորդով՝ երեք գրերով, աջակողմյան քարի ծայրին.

ՏՐԵՋՐՉՌԿՁԿԱԹՂԻԿՈՍՃՇՄ
ՐԻՏ ΔΩΛΟՀΤΩΘԵΩՍԱՄԷՂՇՌԱ
ՌԼՔ:

Արձանագրությունն առաջին անգամ ուսումնասիրել և հրատարակել է Կ. Ղաֆադարյանը՝ «Ավանի երկլեզվյան ծածկագիր արձանագրությունը» վերնագրով: Բովանդակության մեջ առկա են համառոտագրության և ծածկագրության երկուական

բառային միավորներ: Ծածկագրության վերծանման Կ. Ղաֆադարյանի կիրառած բանալու համաձայն, նշանագրերը փոխարինվել են ըստ իրենց թվային արժեքի՝ միավորները հազարավորներով, տասնավորները հարյուրավորներով և հակառակը: Սղագրերի բացմամբ և ծածկագրերի վերծանմամբ՝ վիմագրագետը ներկայացրել է արձանագրության վերականգնված տեքստը. «Տէր Եզր հայոց Կաթողիկոս ճշմարիտ ծառայ աստուծոյ: Սամէղ ծառայ քրիստոսի»:

Հիմք ընդունելով Բյուզանդիայի Հերակլ կայսեր և Հայոց Եզր կաթողիկոսի նշված համաձայնությունը, նա արձանագրությունը թվագրում է 633 թվականով, որով այն դառնում է հնագույնը առ այսօր հայտնի նմանատիպ հայալեզու վիմագրերի շարքում: Իմաստային տեսակետից արձանագրությունը դիտարկվել է որպես մեկ հեղինակի կողմից կազմված մեկ միասնական միավոր: Ըստ այդմ՝ Ավանի քաղկեդոնիկ միաբանությունը (ի դեմս հոգևորական Սամեղի, ով արձանագրության կազմողն ու փորագրել տվողն է), արձանագրել է Եզր հայոց կաթողիկոսի կողմից քաղկեդոնականության ընդունումը՝ որպես հունադավանության մեծ ձեռքբերում և կարևորագույն իրադարձություն:

Երկու ծածկագրերի կիրառման նպատակային նշանակությունը դիտարկելով առանձնաբար՝ «հայոց» բառի ծածկագրումը Կ. Ղաֆադարյանը շաղկապում է Ավանի տաճարի արևմտյան պատի վրա պահպանված XIII դ. երեք այլ արձանագրությունների հետ և եզրակացնում, որ Ավանի եկեղեցին իր հիմնադրման պահից անընդմեջ, մինչև XIII դ. և դեռ հետագայում էլ, շարունակել է լինել քաղկեդոնական: Զաքարյան իշխանների օրոք կատարված արձանագրությունների ուսումնասիրումը, սակայն, ցույց է տալիս հակառակը՝ Ավանի եկեղեցու քաղկեդոնական պատկանելիության վերականգնումը:

Երկլեզու արձանագրության մի շարք իրողություններ, սակայն, Կ. Ղաֆադարյանի կողմից կամ անտեսվել են, կամ, չկարևորվելով, չեն վերլուծվել: Ըստ մեր ուսումնասիրությունների այդ են վկայում հետևյալ դիտարկումները.

ա) գրության տառաշարի ոճային տարբերությունները (հարկադրված միջակայք, տառաչափի փոքրացում),

բ) ոչ լիարժեք համառոտագրումը,

գ) մեծատառ-փոքրատառերի ոչ միաձև կիրառությունը,

դ) երկու լեզուների համատեղ գործածությունը,

ե) Δωλος-ի տառասխալը (պիտի լիներ Δουλος):

Վերոնշյալները փաստում են արձանագրության մեջ երկու ինքնուրույն և առանձին (նաև տարաժամանկյա) իմաստային միավորների առկայության պարագան: Հունարեն հատվածը, բացի «Ծառայ Աստուծոյ» թարգմանությունից, շնորհիվ «տառասխալի», իր աստվածաբանական ենթատեքստով արտահայտում է հատկապես «Վերջին Ծառայ Աստուծոյ» իմաստը:

Այսպիսով Ավանի տաճարի երկլեզու արձանագրության մեջ հունագիր հատվածը ձեռք է բերում իմաստային ինքնուրույն նշանակություն՝մատնանշելով Հովհան Բագարանցուն, ով եղավ միակ և վերջին հակաթոռ կաթողիկոսը: Ըստ այդմ հունարեն հատվածը պետք է թվագրել 611 թ., երբ նա հուղարկավորվեց եկեղեցում: Հետագա ոտնձգությունները հակաքաղկեդոնական միջավայրում կանխելու նպատակով, արձանագրությունը կազմվել է առանց հակաթոռ կաթողիկոսի անվան հիշատակության, բայց իմաստային հստակ հասցեագրմամբ: 22 տարի անց հունարեն հատվածին կցագրվող հայերեն հատվածի հեղինակ Սամեղը ջանք է գործադրել հայերենը շարահյուսել հունարենի հետ՝ ձգտելով արձանագրությանը տալ պաշտոնագրի նշանակություն՝ հարմարեցնելով եկեղեցու արևելյան պատի կենտրոնական հատվածի համաչափությանը: «Հայոց» բառի ծածկագրումը, որն այստեղ ունի միայն դավանական նշանակություն, մեկնաբանվում է երկու իրար լրացնող իմաստներով՝

1. Եզր կաթողիկոսը՝ հայադավանությունից հեռացած և հայոց կողմից չճանաչվող,

2. Դվինի հայոց կաթողիկոսությանը ենթարկված Ավանի վանքը ընդունում է իր վարչական ենթակայությունը, բայց ոչ երբեք՝ հայադավանությունը՝ ճանաչելով Եզրին ոչ որպես հայադավան, իսկ հունարեն հատվածի հետ շարահյուսման փորձով՝ հունադավան կաթողիկոս:

**ԿԱՐԵՆ ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ**

«Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի փոխտնօրեն,
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ համաշխարհային պատմության
և նրա դասավանդմանմեթոդիկայի ամբիոնի դասախոս, պ.գ.թ.

# ՄՈՌԱՑՎԱԾ ՃԱԿԱՏԱԳՐԵՐ ԵՎ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

XIX դ. վերջին և XX դ. սկզբին աշխարհում գոյություն ունեցող միջազգային լարված իրավիճակը մի քանի փոքր ու միջին պատերազմներով չլիցքաթափվեց, ինչի հետևանքով 1914 թվականին սկսվեց մի նոր պատերազմ, որն իր ծավալներով աննախադեպ էր մինչ այդ մարդկությանը հայտնի բոլոր պատերազմներից: Այն շատ կարճ ժամանակ անց որակվեց որպես համաշխարհային: Պատերազմի գլխավոր դերակատարներից Գերմանիան, ռազմական գործողությունների առաջին իսկ օրերից սկսած Եվրոպայի արևմտյան հատվածում ցարական Ռուսաստանի դաշնակից Ֆրանսիայի նկատմամբ մեծ առավելություն ձեռք բերեց: Ծանր իրավիճակում հայտնված Ֆրանսիայի և Ռուսաստանի մյուս դաշնակիցների ամենօրյա հորդորները, ինչպես նաև արևմուտքում իր դաշնակիցների ջախջախման իրական վտանգը՝ ստիպեցին Ռուսաստանին, որպեսզի վերջինս Եվրոպայի արևելյան հատվածում սկսի ռազմական գործողություններ: Եվրոպայի արևելքում միանգամից բացված երկու ճակատները պատմագրության մեջ միասին հայտնի են Արևելյան կամ Ռուսական ռազմաճակատ անվանումով, որն ընդգրկում էր ռուսական կայսրության ողջ արևմտյան սահմանային շրջանը, Պրուսիայի արևելյան տարածքը, Պոզնան և Սիլեզիա նահանգները, ինչպես նաև Գալիցիայի տարածքը: Ներկայումս նշված տարածքները գտնվում են Լեհաստանի, Սլովակիայի և Հունգարիայի հանրապետությունների կազմում:

Պատերազմի հայտարարման հենց առաջին օրերից, որպես ռուսական բազմազգ կայսրության մի մասնիկ հայ ժողովուրդն առաջին անգամ իր բազմադարյան պատմության ողջ ընթացքում մեծաքանակ զինուժով կռվեց թշնամու դեմ ոչ միայն Այսրկովկասում, այլև եվրոպական ռազմաճակատներում

Հայազգի զինվորականներից շատերն իրենց անբասիր և օրինակելի ծառայությամբ աչքի ընկան տարբեր իրավիճակներում, շատերը պատերազմից վերադարձան խեղված ճակատագրերով, իսկ շատերն էլ չվերադարձան:

Առաջին համաշխարհային պատերազմին մասնակցած շուրջ 250.000 հայ զինվորականների կյանքի պատմությունն ու ծառայողական ուղին, մի շարք պատճառներով պայմանավորված՝ մինչև օրս ըստ արժանավույն չեն լուսաբանվել: Այդ պատճառների թվում էր ինչպես ազգային պատկանելությունը, այնպես և 1917 թ. հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Խորհրդային Միության ամբողջ տարածքում հին բանակի զինվորականության նկատմամբ իրականացվող հատուկ միջոցառումները: Այդ միջոցառումներով հիմնականում վերջ տրվեց նախկին սպայության գոյությանը, կազմակերպված ձևով ոչնչացվեց նրանց հիշատակը: Այսինքն' ամեն ինչ արվեց որպեսզի մոռացության մատնվի խորհրդային կարգերի կողմը չանցած զինվորականության պատմությունը: Եվ եթե չէին հիշատակվում ազգությամբ ռուս արժանավորները, ապա ոչ ռուսներին անդրադառնալն անգամ ավելորդ էր: Մինչդեռ պատերազմի ամբողջ ընթացքում Արևելապրուսական, Գալիցյան, Վարշավյան-Իվանգորոդյան ռազմական գործողությունների ժամանակ, եվրոպական Գումբինեն, Գոլդապ, Սուվալկի, Ավգուստով, Ալլենշտեյն, Ինստենբուրգ, Քյոնիգսբերգ, Բիշոֆսբուրգ, Սոլդաու, Էյդկունեն, Լիկ, Յոհանիսբուրգ, Բյալա, Գրաևո, Վերժբոլով, Գրոդնո, Գալիչ, Լվով, Վարշավա, Իվանգորոդ, Լյուբլին, Խոլմ, Կրասնիկ, Կալիշ, Չենստոխով, Կրակով և այլ բնակավայրերի շրջաններում ծավալված մարտական գործողությունների ընթացքում զոհվեցին և վիրավորվեցին ավելի քան 70.000 հայազգի զինվորականներ, իսկ շուրջ 40.000-ն էլ Հարավային Կովկասում՝ Սարիղամիշի, Վանի, Տրապիզոնի, Մանազկերտի, Արճեշի, Թավրիզի, Դիլմանի և այլ բնակավայրերի տարածքներում:

Այսօր, որքան էլ անըմբռնելի է, աշխարհում առաջին աշխարհամարտի ընթացքում զոհված զինվորականների հիշատակը հավերժացնող հուշարձանները սակավաթիվ են, իսկ ՀՀ տարածքում դրանք գրեթե բացակայում են:

Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում այսօր հաշվառված հուշարձաններից և ոչ մեկը նվիրված չէ առաջին աշխարհամարտին մասնակցած և իրենց սխրագործություններով առանձնացած հայազգի զինվորականներին: Ցավոք, հայտնի չեն նաև թե որտեղ են ամփոփված պատերազմի ընթացքում տարբեր պատասխանատու պաշտոններ զբաղեցրած և բազմաթիվ քաջագործություններով աչքի ընկած, բարձրագույն

պարգևների ու շքանաշանների արժանացած հայազգի գեներալներ Լևոն, Գեորգի և Ռուբեն Ավետիքի Պոզոնների, Արսենի Սերգեյի Դոլուխանովի, Տիգրան Դանիելի Արյուտինովի (Հարությունյան), Իվան Վասիլիի Հախվերդովի և շատ-շատերի աճյունները:

Ընդհանրապես, պատերազմից հետո հայազգի երախտավորներից շատերի ճակատագրերի մասին որևէ տեղեկություն ինչպես ՀՀ, այնպես էլ ՌԴ արխիվներում ներկայումս պահպանված չէ՝ պատերազմից հետո մի մասի վտարանդիության ճանապարհը բռնած լինելու, իսկ մյուս մասի բռնաճնշումների ենթարկված լինելու հանգամանքներով պայմանավորված:

2007-2017 թթ. ընթացքում, իրականացված ուսումնասիրությունների արդյունքում հնարավոր է դարձել պարզել, որ պատերազմի ընթացքում Կրասնիկի, Իվանգորոդի, Պետրոկովի, Օպոչնոյի մարտերում զորավարական բարձր հատկանիշներով աչքի ընկած հայազգի գեներալ-լեյտենանտ Արտեմի Սողոմոնի Վարտանովը հոկտեմբերյան հեղաշրջումից հետո, 1917 թ., մասնակցել է «Սպիտակ շարժմանը»՝ ծառայության անցնելով Ռուսաստանի հարավում ձևավորված և Վրանգելի ենթակայությամբ գործող զինված կազմավորումում: Այնուհետև, Ա. Վարտանովը էվակուացվել է Հարավսլավիա և իր կյանքի վերջին տարիներն ապրել է Բանյա-Լուկա (ներկայումս խոշոր տնտեսական քաղաք Բոսնիա-Հերցեգովինայում): Գեներալ-լեյտենանտ Ա. Վարտանովը մահացել է 1937 թ. և թաղված է տեղի զինվորական գերեզմանոցում: Հարավսլավական Ժաբալ բնակավայրում է իր կյանքի վերջին օրերը անցկացրել Ռուսական ռազմաճակատի մի շարք ռազմական գործողություններում (Կրասնիկ, Չերդով, Պուկով և այլն) աչքի ընկած հայազգի գեներալ-մայոր Կոնստանտին Բեգլարի Դոլուխանովը:

Պատերազմի տարիներին Օդեսայի նահանգապետի պաշտոնը զբաղեցրած հայազգի գեներալ Միխայիլ Իսայի Էբելովի աճյունը հուղարկավորված է Օդեսայի 2-րդ քրիստոնեական գերեզմանատանը և ցավոք, ներկայումս գտնվում է անմխիթար վիճակում:

ԴԱՎԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ

«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի գիտաշխատող
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ թանգարանագիտության ամբիոնի դասախոս, մ.գ.թ.

# ԿԱՐՈ ՂԱՖԱԴԱՐՅԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆԱԳՐԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Դեռ 1969 թ. ԻԿՕՄ-ը (Թանգարանների միջազգային խորհուրդ) հստակ տարանջատեց «թանգարանագրություն» (մուզեոգրաֆիա) և «թանգարանագիտություն» հասկացությունները: Ըստ այդմ՝ թանգարանագիտությունը համարվում է թանգարանային ոլորտն ուսումնասիրող գիտություն, իսկ թանգարանագրությունը՝ թանգարանային մեթոդների ու փորձառության համակարգ: Հետևելով այս բաժանմանը մի շարք հեղինակներ թանգարանագրությունը համարում են կիրառական թանգարանագիտության հոմանիշ: Այսուհանդերձ, հետաքրքրական է, որ «մուզեոգրաֆիա» հասկացությունը նախապես (սկսած XVII դարից) առնչվում էր թանգարանային գործի տեսությանն ու մեթոդաբանությանը: Այն այսօր էլ շարունակում է կիրառվել տարբեր կերպ. օրինակ՝ Ֆրանսիայում այդ եզրի ներքո հաճախ հասկանում են թանգարանային ցուցադրության կազմակերպման գործընթացը:

Ա. Ռազգոնը (1988 թ.) թանգարանագրությունն ուղղակի ներառել էր կիրառական թանգարանագիտության երեք հիմնական ուղղություններում՝ մեթոդաբանություն, տեխնիկա, կազմակերպում: Սակայն ռուսալեզու գրականության մեջ հաճախ «մուզեոգարֆիա»-ի մեջ ընդգրկվում են նաև թանգարանային գործունեության, թանգարանների փորձի և զարգացման փուլերի վերաբերյալ նկարագրական բնույթի աշխատություններ:

ԻԿՕՖՕՄ-ի (ԻԿՕՄ-ի Թանգարանագիտության միջազգային կոմիտե) կողմից 2010 թ. մշակված թանգարանագիտական հասկացություններում «մուզեոգրաֆիան» մեկնաբանվում է որպես.

ա) թանգարանագիտության գործնական կամ կիրառական դիտանկյուն,

բ) ցուցադրության կազմակերպման գործընթաց,

դ) թանգարանի և թանգարանային գործունեության նկարագրման եղանակ:

Թանգարանների վերաբերյալ գիտելիքները, 1960-ական թթ. ի վեր, մեզանում առավելապես ներկայացվել են «թանգարանագիտություն» եզրի ներքո, չնայած հրատարակված նյութերը գերակշռորեն թանգարանագրական բնույթի են և արժևորման ու համակարգման կարիք ունեն։ Այս ոլորտում նշանակալի են պրոֆեսոր Կարո Ղաֆադարյանի թանգարանագիտական գործունեությունն ու թանգարանագրական ուսումնասիրությունները։

Կ. Ղաֆադարյանի թանգարանային գործունեությունը սկսվել է 1930-ական թթ., երբ Սբ. Հռիփսիմե եկեղեցում (1930-1934 թթ.) կազմակերպվեց հնադարան, որի մանրամասն նկարագրությունը տրվեց հետագայում։ Անիի հնադարաններից հետո, արդեն խորհրդահայ իրականության մեջ դա առաջին թանգարանացված հուշարձանն էր, որն ուներ որոշակի գիտական սկզբունքներով կազմակերպված ցուցադրություն։ 1936-1939 թթ. Կ. Ղաֆադարյանը կազմակերպեց նաև Զվարթնոցի թանգարանի առաջին գիտական ցուցադրությունը, որի տպագիր նկարագրությունը պահպանվում է Հայաստանի ազգային արխիվում։ Այդպիսով Կ. Ղաֆադարյանն իրավամբ համարվում է Հայաստանում թանգարանային ցուցադրությունների գիտական նախագծման սկզբնավորողը։ Այս առումով հետաքրքրական է հնագիտական թանգարանների վերաբերյալ 1940 թ. Վ. Դարյանի հեղինակած գրքում ներկայացված Կ. Ղաֆադարյանի կողմից կազմված և Կարմրավոր եկեղեցում իրականացվելիք «Աշտարակի շրջանային հնագիտական պատմական թանգարանի ցուցադրումների պլանի» նախագիծը։ Վերջինս հեղինակի կողմից կազմված յուրատեսակ հայեցակարգային մոդել է հնադարան-թանգարանների կազմակերպման համար։

Կ. Ղաֆադարյանը 1940-1964 թթ. ստանձնեց Հայաստանի պատմության պետական թանգարանի ղեկավարի պատասխանատու աշխատանքը, որն իրականացրեց պատվով՝ թանգարանը դարձնելով երկրի կարևոր գիտամշակութային կենտրոններից մեկը։ Ղեկավարման աշխատանքներին զուգահեռ մեծանուն գիտնականը կազմեց թանգարանի գործունեության համապարփակ կանոնակարգը (1956 թ.), արդիականացրեց թանգարանի գիտացուցադրական աշխատանքները։ Բազմաթիվ ցուցահանդեսներից զատ, 1959-1961 թթ. կազմակերպեց հայ ժողովրդի մշակույթի պատմության նոր, մշտական ցուցադրություն, որի ուղեցույցում (1961 թ.) մանրամասն նկարագրված են ցուցադրության բոլոր հատվածներն ու դրանց բովանդակությունը։

Կ. Ղաֆադարյանի թանգարանագրական աշխատանքների մյուս կարևոր ոլորտը հայկական թանգարանների պատմության շարադրումն է։ 1962 թ. Պատմաբանասիրական հանդեսում տպագրվել է հեղինակի՝ Պատմության պետական թանգարանի ստեղծման հիմնական փուլերի և կառուցվածքի նկարագրությանը վերաբերող գիտական հոդված։ Նույն թվականին Փարիզում լույս տեսնող «Անդաստան» պարբերականում հրատարակված մեկ այլ հոդվածում, թերևս առաջին անգամ, ներկայացրել է հայկական թանգարանների վաղ դրսևորումները։ Վերջինիս առավել ընդլայնված տարբերակը տպագրվեց 1972 թ. «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրում, որը հայկական թանգարանների պատմության (դրանց վաղնջագույն դրսևորումներից մինչև խորհրդային կարգերի հաստատումը) ուսումնասիրման միակ աղբյուրն է։

Կարևոր թանգարանագրական արժեք ունեն նաև Կ. Ղաֆադարյանի խմբագրությամբ տպագրված թանգարանային տարբեր հրատարակությունները և հատկապես Պատմության պետական թանգարանի գիտական հոդվածների ժողովածուները՝ «Աշխատությունները»։

Այսպիսով, պրոֆեսոր Կ. Ղաֆադարյանի տասնյակ հետազոտությունները և նրա թանգարանային գործունեությունը համահունչ են վերևում ներկայացված թանգարանագրության բոլոր իմաստներին։ Ուստի, կարծում ենք, բազմավաստակ գիտնականին կարելի է համարել հայ թանգարանագրության հիմնադիրը, որի մեծ ավանդը դեռևս ըստ արժանվույն չի գնահատվել։

**ЛИАННА ГЕВОРГЯН**

Заместитель директора по фондовой работе "Службы по охране исторической среды и историко-культурных музеев-заповедников",
преподаватель кафедры музееведения,библиотековедения и библиографии АГПУ им. Х. Абовяна

# СТАНОВЛЕНИЕ МУЗЕЯ КАК ИНСТИТУТА СОЦИАЛЬНОЙ ПАМЯТИ

*Формирование коллекций как основы музея.* Музей – *институт социальной памяти*, предназначенный для сбора, сохранения, пропаганды и трансляции последующим поколениям наиболее ценной части культурного и природного наследия, сознательно изъятого из повседневного употребления предмета и всей информации, связянной с ним и человеком, его изготовившим и использовавшим.

Процесс формирования музея как института социальной памяти исследователи связывают со стихийным собирательством коллекций и выставлению их, в том числе в муссейонах. Эти «колекции без коллекционеров» включали произведения искусства, военные трофеи, имущество побеждённых народов. Все это хотелось бы назвать первыми «этнографическими коллекциями», но вещи собирались сами по себе, исходя из простого интереса ко всему диковинному, не подвергаясь при этом ни исследованию, ни систематизации.

Согласно письменным источникам, первый Мусейон был основан Птолемеем I Сотером (305 – 283 гг. до н.э.) в Александрии. Он занимал часть дворцового комплекса Птолемеев и включал в себя собственно мусейон, то есть святилище муз, комнаты для обитателей пансиона, зал для совместной трапезы, экседру или крытую галерею с сиденьями для чтения, лекций и совместных занятий, а также «место для прогулок», которое с тех пор стало неотъемлемой принадлежностью любого философского или научного учреждения. Со временем здесь появились коллекции растений и животных. Здесь организовывались философские прения, научные дискуссии, учебные курсы, культурные вечера и др. мероприятия. Со временем это явление постепенно распространилось на весь развивающийся и цивилизующийся мир.

Тем не менее, процесс сбора историко-культурных ценностей, формирования хранилищ редких предметов и кладов, от случая к случаю их выставления напоказ имеет более древние корни. *Первыми коллекциями* можно считать собранные в

египетских храмах драгоценности (III-I тыс. до н.э.), ценности хранилища Кносского дворца на о. Крит (XVI-XV вв. до н.э.), библиотеки Ашшурбанипала в Ниневии (VII в. до н.э.) и Эвмена II в Пергаме (III в. до н.э.).

Многие народы мира прямо или косвенно переняли из древнегреческого языка корень слова *«μουσεῖ ον»,* и в настоящее время однокоренные слова «музей, museum, musée, museo, museu, mużew, müzesi» и в др. осмыслены как музей. В отличие от них, армяне с древнейших времен используют слово «*թանգարան*», в которое включён совершенно другой корень, что как бы указывает на то, что таковые сооружения на Армянском нагорье существовали задолго до греческих «*μουσεῖ ον*»-ов. Дело в том, что в основе слова «*թանգարան*» лежит аккадский корень *«tamkāru(m), damgāru(m)»*, что означает «торговец», который у ряда ближневосточных народов (ассирийцы, арамейцы, сирийцы, мадайцы, арабы и др.) и у армян остался в виде «*թանգար*» в том же смысле: «торговый, драгоценный». Торговые места Древнего Ближнего Востока III – I тыс до н.э. были полны имеющими большой спрос многочисленными и разнообразыми предметами и могут считаться прототипами древних выставочных мест-музеев. В частности, на Армянском нагорье значение древнейшего хранилища-музея мог иметь храм бога Халди (Алди) в культовом центре Ванского царства (Урарту) Мусасире, в котором были собраны десятки тысяч медных, бронзовых, серебряных, золотых, а также из слоновой кости статуэтки, скульптуры, утварь, оружие, украшения и др. О завоевании и разграблении их свидетельствуют клинописные тексты Саргона II и барельефы из Дур-Шарукина (Северная Месопотамия). Конечно с оговоркой, вышеназванные явления могут рассматриваться как прототипы этнографических коллекций и выставок.

Отношение к коллекциям несколько изменилось в эпоху средневековья. Для хранения реликвий и мощей, связанных с христианскими святынями, дорогой церковной утвари и одежды отводились специальные хранилища – церковные сокровищницы.

В конце XIX - начале XX вв. завершился процесс формирования музея как социокультурного института в современном понимании. Этнографические коллекции постепенно переформировывались сначала в несистематизированные, а позже в классифицированные коллекции.

***Из истории формирования этнографических коллекций в Армении***. Исследователи истории коллекционирования и становления музеев в Армении относят к первым коллекциям, собранные в прицерковных хранилищах с V в. «дорогие церковные одежды, украшенные жемчугом короны и ефоды, золотые и серебряные чаши, заключенные в серебряную обложку рукописные пергаменты и др. высокохудожественные работы, а большие монастыри, такие как Санаин, Ахпат, Авуц тар, имели для этих целей специально построенные сокровищницы, в которых хранилось богатство». Таковым был и Эчмиадзинский прицерковный музей, который был основан в середине XV в. Сокровищницы назывались «*ավանդատուն»,* т.е. место хранения традиции.

Первая коллекция, в которую, кроме церковных, были включены и предметы, относящиеся к светской жизни, была собрана в 1858 г. католикосом Мкртычем Хримяном в Варагаванке. Музеи при монастырях постепенно становились отвественными за сохранение истории Армении и национальной идентичности армян.

Целенаправленный сбор археологического, исторического, этнографического материала по Закавказью, в том числе, Армении, их изучение начало осуществятся в 1852 г. в музее, основанном Кавказским отделом Императорского русского географического общества в Тифлисе. Впоследствии эта коллекция вошла в собрание основанного в 1867 г. Тифлисского Кавказского музея.

В досоветский период важное место по профилю и значению занимал Этнографическо-археологический музей, основанный руководителем Армянского этнографического общества Ервандом Лалаляном в 1907-1908 гг. в Тифлисе. До создания музея Армянским этнографическим обществом была проделана значительная подготовительная работа. Была составлена подробная программа по сбору музейных ценностей, которую, по образцу программы Петербургского этнографического музея, составил А. Тер-Григорян. О важности основания такого музея там сказано: «Учитывая то огромное значение, которое имеет этнографический музей в самостоятельном развитии нации и, вообще, в определении эволюции человечества, необходимо, чтобы и мы, *армяне, имели бы такой музей, и как можно скорее, так как сейчас довольно быстро меняется армянская жизнь и теряются этнографические предметы* [подчеркнуто мною, Л. Г.]».

Обнаруженные предметы должны были храниться на местах, и только после организации музея перевезены туда. Активно обсуждался вопрос о том, где должен был быть организован музей: некоторые предлагали один из городов Армении, другие требовали организовать его в Тифлисе. Об этом говорилось в протоколе, выписка из которого была опубликована в 1908 г. В конце концов, музей был основан в Тифлисе. Политические перемены последующих лет внесли свои коррективы в развитие культуры и в деятельность Этнографического общества. Зимой 1921–1922 гг., при содействии советского правительства Армении, Ерванд Лалаян перевез коллекцию из Тифлиса в Ереван.

АЛВАРД ГРИГОРЯН

Директор музея АГПУ имени Х. Абовяна, к.п.н.

# ПСИХОЛОГО-ПЕДАГОГИЧЕСКАЯ СПЕЦИФИКА РАБОТЫ С МУЗЕЙНОЙ АУДИТОРИЕЙ

Статья посвящена необходимости учета психолого-педагогических особенностей при работе с музейной аудиторией. Составной частью профессионального мастерства музейного педагога является педагогическое мастерство, искусство педагога, что включает в себя: знания по специальности, способности к анализу, образному мышлению, понимание психологии музейного посетителя  умение управлять группой; знания и умения в области педагогической техники; интуицию; уважение личности посетителя, а также искусное использование педагогических и психологических знаний в целях воспитания.

Включенность музея в общеобразовательный процесс способствует формированию психологической и нравственной готовности человека не только жить в стремительно изменяющемся современном мире, но и быть субъектом происходящих в нем социокультурных преобразований. Разнообразное социально-культурное окружение развивает эстетический вкус, вызывает любознательность, помогает людям быть более общительными и активными.

Никакая образовательная и культурная политика не может действовать в одиночку, игнорируя средства массовой коммуникации, культурную индустрию, библиотеки, музеи и т. д. Современный музей не может позволить себе являться пассивным средством информации и не привлекать посетителей к участию. Сегодня посетители требуют, чтобы в их распоряжение предоставлялись и информация, и богатства музеев.

Если школа призвана обеспечить базовое образование во всех областях знаний на основе специально разработанных программ, то образование в музее лишено жестких схем и распространяется буквально на все группы общества: детей и взрослых, местных жителей и туристов, здоровых  и людей с ограниченными физическими возможностями. Реформы в системе образования Республики Армения на настоящем этапе направлены на интеграцию в интернационализацию образования в целях повышения эффективности и обеспечения качества обучения, где свое особое место занимает музейная педагогика, обеспечивающая образовательный процесс без пространственных и временных ограничений. К сожалению, следует отметить, что эти возможности реализуются не полностью.

По мнению Маршалла Маклюэна, эра информации требует мобилизации всех наших способностей и мы отдыхаем только тогда, когда глубоко увлечены. Посетители, которым интересно в музее, которые чувствуют себя уютно и ориентируются в музейном пронстранстве, в результате и обучаются более эффективно. Поэтому при организации образовательных программ в музее, непрерывного образования для людей всех возрастов, от маленьких детей до пожилых пенсионеров, необходимо изучение и освоение научных основ музейной педагогики, психологии, музейно-педагогической технологии. Функции музейного педагога заключаются не столько в том, что он является носителем определенных знаний, сколько в организации диалога с музейным памятником. В связи с этим важное место в его деятельности занимает педагогика - наука о закономерностях воспитания, образования и обучения подрастающего поколения и взрослых.

Музейная коммуникация дает человеку новые знания о природе, обществе, исторических событиях, природных явлениях, т. е. она является частью процесса образования. Общение с экскурсоводом, его рекомендации, замечания оказывают также воспитательное воздействие на экскурсантов. Воспитывает сам изучаемый материал, нравственно и эстетически влияя на их сознание. Необходимо, чтобы музейный педагог не столько давал знания, сколько учил думать. Поэтому он и актер, и педагог, и, наконец, просто добрый и умный человек, которого приятно слушать.Музейный педагог  должен обладать и даром психологического воздействия. Эффективность экскурсии в значительной мере зависит от того, насколько экскурсовод владеет психологией, правильно понимает сущность психических процессов, от его умения использовать эти знания в руководстве деятельностью экскурсантов. Музейным педагогам в ходе работы необходимо учитывать такие черты ее участников, как способность, характер, темперамент, а также природные качества - память, наблюдательность, воображение и сообразительность, ориентироваться на конкретную группу экскурсантов. Важное место в восприятии материала занимает психологический климат в экскурсионной группе. Экскурсовод, учитывая требования психологии, управляет вниманием экскурсантов. С этой целью он использует ряд методических приемов показа и рассказа.

Психология требует учитывать возрастные особенности экскурсантов.

Таким образом, знание музейными работниками основ педагогики и психологии помогает им правильно строить экскурсионный процесс, умело преподносить информацию по теме, учитывать запросы и интересы конкретной аудитории, полнее уяснить технологию действия психологических механизмов усвоения личностью знаний.

ԳԱՅԱՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի
գլխավոր ֆոնդապահ

# ԹՈՐԱՄԱՆՅԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Կարո Ղաֆադարյանը լինելով պատմաբան, հնագետ, վիմագրագետ, բանասեր, գիտական՝ մեծ ժառանգություն է թողել հնագիտության, վիմագրության, ճարտարապետության պատմության բնագավառներում:

Մեծ ներդրում ունենալով պատմական հուշարձանների պահպանության, պեղումների և ուսումնասիրությունների գործում, միաժամանակ լուսաբանել և հանրահռչակել է հուշարձաններն ու վիմագրական արձանագրությունները՝ հրատարակելով գրքեր ու հոդվածներ, այդպիսով իր կատարած աշխատանքի արդյունքը հասու դարձնելով մասնագետներին և հասարակության լայն շրջաններին:

Կարո Ղաֆադարյանը, լինելով հայկական մշակույթի և գիտության երախտավորներից մեկը, չէր կարող անտարբեր մնալ հայազգի մեկ այլ երախտավորի՝ ճարտարապետ Թորոս Թորամանյանի կատարած հսկայածավալ ուսումնասիրությունների նկատմամբ, որոնք անմիջական կապ ունեին հայկական պատմաճարտարապետական հուշարձանների հետ:

«Էջեր Հայոց միջնադարյան մշակույթի և պատմության» աշխատության մեջ «Կարո Ղաֆադարյան» հոդվածում (հեղինակներ՝ ***Արամ Քալանթարյան, Գրիգոր Կարախանյան***) ասվում է. «Պաշտամունքի էր հասնում նրա ակնածանքը դեպի հայ ժողովրդի մշակույթի մեծերը: Հայրենական Մեծ պատերազմի դաժան տարիներին նա իր խորին հարգանքն է մատուցում մեծ Թորամանյանի հիշատակին: Ազգային թանգարանի տնօրենի բազմազբաղ պաշտոնի պայմաններում վիթխարի ջանքերի գնով գլուխ է բերում հայ ժողովրդի ճարտարապետական հանճարը հավերժացնողի հայկական ճարտարապետության գիտական ուսումնասիրության հիմնադիր Թ. Թորամանյանի սխրանքի, նրա գիտական ժառանգության ստվարածավալ երկհատոր հրատարակությունը, մեր հանճարեղ նկարիչ Հակոբ Կոջոյանի ձևավորումով ներկայանալի տպագրությամբ: Կ. Ղաֆադարյանի՝ հայագիտությանը մատուցած այդ

մեծ ծառայությունն արժանի է ամենաբարձր գնահատության: Թորամանյանի վիթխարի վաստակը հարազատ ժողովրդին վերադարձնելու համար Կ. Ղաֆադարյանի անունը կմնա որպես գիտությանն անմնացորդ ծառայելու գեղեցիկ, սակավադեպ օրինակ»:

Կ. Ղաֆադարյանը 1930-ական թթ. կեսերից ձեռնամուխ է եղել մեծանուն ճարտարապետի գիտական աշխատությունների ուսումնասիրությանը: 1942 թ. լույս տեսավ նրա կողմից կազմված Թորամանյանի հիմնականում լավագույն աշխատությունները ներառնող առաջին ժողովածուն՝ «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության» վերնագրով: Չորս մասից բաղկացած ժողովածուն ընդգրկում է նախաքրիստոնեականից մինչև միջնադարի աշխարհիկ ճարտարապետության ժամանակաշրջանը: Աշխատանքում զետեղվել են նաև Թ. Թորամանյանի ձեռքով արված չափագրություններն ու լուսանկարները:

Թ. Թորամանյանն իր աշխատությունները գրել է և' արևմտահայերենով և' արևելահայերենով: Կ. Ղաֆադարյանը պահպանել է ճարտարապետի արևմտահայերենով շարադրված գեղեցիկ գեղարվեստական ոճը: Ֆրանսերեն լեզվով հեղինակի կողմից ներկայացված ճարտարապետական տերմինները կազմողը թողել է նույնը, ժողովածուի վերջում ներկայացնելով մասնագիտական տերմինների բառարան: Քանի որ հեղինակը տեղանունները ներկայացնելիս չի պահպանել միօրինակության սկզբունքը, ուստի կազմողը ժողովածուի վերջում ներկայացրել է նաև հատուկ անունների ցանկ և հին անունների կողքին գրել է նոր անունները: Կ. Ղաֆադարյանը 1948 թ., նույն սկզբունքներով, հանրությանը ներկայացրեց նաև Թ. Թորամանյանի գիտական ուսումնասիրությունների երկրորդ ժողովածուն:

Եկեղեցական և մշակութային գործիչ, երջանկահիշատակ Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի 1999 թ., կատարած նվիրատվության շնորհիվ Թ. Թորամանյանի անձնական արխիվից պահպանված մի փոքր հատված դարձավ պետական սեփականություն՝ ի պահ տրվելով ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ Ծառայություն): Ծառայությունը, որը պահպանությունից բացի նաև լուսաբանման և հանրահռչակման գործունեություն է ծավալում, նախաձեռնել է Թ. Թորամանյանի անձնական արխիվի հրատարակման գործը՝ նպատակ ունենալով գիտական

հանրությանը, մասնագետներին և ընթերցասեր լայն շրջանակներին ներկայացնելու ֆոնդապահոցներում պահվող հայոց գիտական ճարտարապետության հիմնադրի ամբողջական հավաքածուն:

Աստծո նախախնամությամբ Կ. Ղաֆադարյանի կրտսեր որդին՝ ծառայության ավագ գիտաշխատող, ճարտարապետ Գրիգոր Ղաֆադարյանը դարձել է իր հոր գործի արժանի ժառանգորդը՝ շարունակելով Թ. Թորամանյանի աշխատությունների ուսումնասիրությունը: Համագործակցելով աշխատանքային խմբի հետ, պրակներով կազմում և ներկայացնում է Անի քաղաքի պատմական հուշարձաններին վերաբերող մեծանուն ճարտարապետի ձեռքով կատարված գծագրերն ու լուսանկարները և դրանց վերաբերող հոդվածները: Այն ամենը, ինչ հեղինակը կատարել է Նիկողայոս Մառի կողմից ղեկավարվող արշավախմբին մասնակցելու տարիներին, պահպանվում է Ծառայությունում և այժմ հասու է բոլորին:

Աշխատանքային խմբի կողմից կազմված առաջին հրատարակությունը՝ «***Անիի Մայր տաճարը***» խորագրով գործն է (2008 թ.): Կազմողներն այն նվիրել են մեծ հայրենասեր Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի հիշատակին: Երկրորդ հրատարակությունը՝ «***Անիի Ս. Գրիգոր Լուսավորիչ (Տիգրան Հոնենց) եկեղեցական համալիրը***», լույս է տեսել 2011 թ.: Այս եկեղեցին՝ իր դասական համաչափությունների, բարձրարվեստ հարթաքանդակների և որմնանկարների շնորհիվ, համարվում է Շիրակի ճարտարապետական դպրոցի լավագույն ավանդույթները կրող հուշարձաններից մեկը: Աշխատությունը նվիրվել է միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անիի հիմնադրման 1050-ամյակին: Երրորդ հրատարակությունը «***Անիի Պահլավունյաց եկեղեցիները»*** են (2012 թ.): Գրքում ներկայացված են XX դ. սկզբին Թորոս Թորամանյանի կատարած՝ Անիի Ս. Առաքելոց եկեղեցու և գավթի, Ս. Փրկիչ և Ս. Գրիգոր (Ապուղամրենց) եկեղեցիների չափագրություններն ու վերակազմությունները, որոնց մեծ մասը տպագրվել է առաջին անգամ: Այս պրակը նվիրվել է հայ գրքի տպագրության 500-ամյակին: 2014 թ. իրականացված չորրորդ հրատարակությունը «***Անիի Գագկաշեն (Ս. Գրիգոր) եկեղեցին»*** է, որը նվիրվել է հայ մեծանուն ճարտարապետ Թորոս Թորամանյանի 150-ամյակին: Հերթական հինգերորդ հրատարակությունը, որ վերնագրված է «***Անիի միջնաբերդի հուշարձանները***» (2016 թ.), նվիրվել է Հայոց ցեղասպանության 100-ամյակին:

Վերոնշյալ հրատարակությունների գիտական խմբագիրն է Ճարտարապետության դոկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Մուրադ Հասրաթյանը, ով բարձր է գնահատել կազմողների աշխատանքը:

Պրակներում ներկայացվող նյութն արդիական է: Այն ունի մասնագիտական, կրթական, ճանաչողական նպատակ: Շրջանառության մեջ են դրվում Թ. Թորամանյանի մեկ դար առաջ անձամբ չափագրած նյութերը, որոնք նպաստում են Թուրքիայի տարածքում գտնվող հայկական հուշարձանների հետ կապված խնդիրները հանրության ուշադրության կենտրոնում պահելու խնդիրը: Չափագրությունների մեծ մասը տպագրվել են առաջին անգամ:

Թորամանյան անհատին և նրա կատարած աշխատանքին անդրադարձել են մեր մեծերը՝ Հովհաննես Թումանյանը, Ալեքսանդր Թամանյանը, Ավետիք Իսահակյանը, Մարտիրոս Սարյանը և այլոք:

Առանձնացնենք Մարտիրոս Սարյանի գնահատականը. «Կյանքի անասելի ծանր պայմանների, հիվանդությունների ու ցավերի հանդեպ ճակատ առ ճակատ պայքարել էր Թորամանյանը և մնացել կանգուն, ստեղծագործել, ինչպես նրան ծնող ժողովուրդը: Տիտանական ջանքերի, մտքի ու զգացմունքների լարման գնով, համաշխարհային և հայ մշակույթի իմացության հողից ելնելով, նա թափանցել էր ժամանակի խորքերը և բյուրեղյա մաքրությամբ դուրս հանել այն մարգարիտները, որոնք զուտ ազգային են: Ողջ աշխարհին ապացուցեց հայկականը….»:

# ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ - АББРЕВИАТУРА

1. **ԵՊՀ** – Երևանի պետական համալսարան

2. **Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ** – Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան

3. **ՀՀ ԳԱԱ** – Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա

4. **ՀՀ ԳԱԱ ԱԻ** – Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտ

5. **ՀՀ ԳԱԱ ՀԱԻ** – Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

6. **«Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ** – ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» պետական ոչառևտրային կազմակերպություն

7. պ.գ.թ. – պատմական գիտությունների թեկնածու

8. պ.գ.դ. – պատմական գիտությունների դոկտոր

9. մ.գ.թ. – մանկավարժական գիտությունների թեկնածու

10. տ.գ.թ. – տնտեսագիտության թեկնածու

11. к.п.н. – кандидат педагогических наук

12. **АГПУ им. Х. Абовяна** – Армянский Государственный Педагогический Университет имени Хачатура Абовяна

13. **NAS of RA, IAE** – National Academy of Sciencies of Republic of Armenia, Institute of Archaeology and Ethnography

ԵՐԵՎԱՆ 2017